Սարգսյան Գագիկ Հայկի
Գրանցագրանքներ

Տեղեկություններ 80-ամյակի
առիթով

Երևան

Ռազմական

4.3.03թ

Վ Ի Ր Պ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆԻ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ։

Շարադրեցեալ Աշխարհաբառիւ լեզուաւ
Աշխատասիրութիւն Տ՚ն Մխիթարայ
Վարդապետի Սեբաստացւոյ։
Աբբայ հայր Կոչեցելոյ։

Ընդ օրում՝ և երդք տաղից առադրին, որք
՚ի վանքումս ժամանակաց չինեցեալքեն
՚ի նոյնոյ Վարդապետէ։

Տպագրեցեալ՝ ջանացողութիւն նոյնոյ։

՚Ի փառս մեծագոյնս ՝ և ՚ի յօգուտս
մանկանց եկեղեցւոյ։

Յամի Տ՚ն ՌՇԼԶ։ Մարտի։ Զ։



՚Ի ՎԵՆԵՏԻԿ։

՚Ի Տպարանի Անդօնի Գուրթօլի։
Հրամանաւ Մեծաւորաց, և փոխանակեցեալով
Գերապանցագունեղի Ծերակուտի։

2185-42

758-2003

ԲԱՆ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ՝

Բազմաց հետե ըղձայի՝ զքրիստոնէական վարդապետութիւն զոմանս հարկաւորս ուսանելիս՝ աշխարհաբարիւ լեզուաւ շարադրել, առ 'ի յօգուտ այնց, որք ոչ ունին զբաւական կարողութիւն առ հասկացումն գրաբարի շարադրութեան. բայց միշտ կասկածէի, թէ գուցէ եպերիցի յոմանց, մինչ բաղումք իցեն յազգի մերում Աղքատք յիմաստից, և բազմապարծք զգիտութեաց։ Վասն որոյ մինչ հանդերձ այբբենարանին շարադրեցի զմիւս Քրիստոնէական վարդապետութիւնն, որ տպեցաւ յամի Տն. 1725. սակս վերոյ ասացելոյց կասկածանաց՝ գրաբարիւ լեզուաւ արտադրեցի, և իմս վաղեմին բաղձան մեաց անկատար։ Բայց յայսմիկ ամի, մինչ նաև զքերականութիւնն աշխարհաբարի լեզուին մերոյ ընձեռեցի, և զառաջին մասն նորին՝ նաև տպագրու-

թէ 'ի լոյս ածի , 'ի բաց ձգելով զկասկա-
ծանս եպեսկոպոսաց՝ ձեռնարկի շարադրել
աշխարհաբառիս լեզուաւ զայս համառօտ
քրիստոնէական վարդապետութիւն . որով
թէ և մի միայն գոնեսիկ ոք օգտիցի , և ու-
սանիցի զհարկաւոր մասունս հաւատոյ իւր-
ոյ , տակաւին արժան էր աշխատիլ ինձ
առ այս : Վասն որոյ որք ոչ ախորժին առ
այս՝ ունին և զդրաբառն՝ վարժեսցին 'ի
նմին . և որոց դժուարին է այն՝ վարժես-
ցին սովիմբ : Բայց ընթերցօղն պարտի
ջանալ , զի կէտ առկէտ , և բառ օրինի ըն-
թեռնուցու . այսինքն , այնպէս՝ և այնու-
եղանակաւ , բառ որում կերպի խօսի ընդ
ընկերին 'ի զրուցատրութեան : Քանզի վա-
անտէրունչ գոլոյն ազգին մերոյ՝ ոչէ՝ այն-
քան 'ի գործածեցեալ աշխարհաբառ լե-
զուն մեր 'ի գրուածս , և այսու եղեալէ
որպէս զանսովոր իր ինչ : Վասն որոյ որք
անհոգաբար ընթեռնուն , և առանց զգու-
շութեան , և կամ՝ յամր գրաքարժութեամբ կո-
րուսանեն զհամեղութեան շարադրութեանց ,
և ինքեանք գիւրիմացութեան բանից : Արդ՝
մեծագունեղ օգտակարութեան աշխարհաբա-
ռիս լեզուին մերոյ յոյժ գիւրաւ երևիլ կա-
րէ 'ի գրուածս , եթէ ընթերցօղքն բա-
ռեպէս՝ ջանայցեն վարժել զինքեանս 'ի ըն-
թեռնուլ . և 'ի կրեալն յսկզբան զդժուարու-
թիւն ընթեռնլոյ , ոչ բարկանայցեն . և այ-
նու 'ի կսկծանաց սրտին 'ի յեպեպերել ժողո-
հիցին :

Վասն զի ամենից իրաց բարեաց՝ սկիզբն
դժուարին է , բայց վախճանն լի պտղովք
բարեօք , և անուշիւք :

Եւ զի զայս փոքրիկ գործ՝ մինչ վա՞ ման-
կանց փոքրկանց շարադրեցի , կամ՝ եղև
ինձ ,

ինձ, զի առ 'ի միթարութիւն նոցին՝ առա-
դրիցեմ 'ի վերջն սորին՝ նաև զայնս տարա՝
զորս 'ի բազմաց ամաց հետէ, և ըստ մեծի
մասին 'ի տիս պատանեկութեան իմոյ շարա-
դրեալէի, և օրինակքն նոցին յայնմանէ
ժամանակէ 'ի բազումս տեղիս տարածեցե-
ալք և ես էին։ Արդ՝ գիտեմ, զի 'ի միջոցի
այսքանեաց բազմաց ամաց 'ի ձեռն անհմ-
տից գրչաց՝ զոչ սակաւ սղալանս պարու-
նակեն նոքին, վասն որոյ նաև որքան առ-
այս ետու տպագրել զսոսին, զի այնպիսիք
սղալանքն բառնիցին։

Արդ՝ ընկալարուք զդուշնաքեայ աշխա-
տանս մեր, զոր մեծաւ սիրով նոր-իրեմք սի-
րելեացդ, ողջ լերուք 'ի Տէր։



ԳԼՈՒԽ Ա.

Վասն այն բաներուն, որ շատ հարկաւոր են Քրիստոնէին գիտնալ՝ և հաւատալ։

Հարցումն. Ո՞ Քրիստոնեայ ես։

Պատասխանի. Հրամերկա Քրիստոնեայ եմ շնորհօքն Քի։

Հց. Քրիստոնեայ ասելն՝ ինչ ասել է։

Պտ. Քէ օրէնքին, և հրամանին հնազանդ, և հետևող ասել է։

հց. Քրիստոնէին Նշանն ո՞րն է։
պխ. Սէ՛ խաչն է՝ նաև իր երեսն խաչակնքելն է։
հց. Աստ ընձի թէ ինչ կերպով խաչ կուհանես երեսդ, և ինչ կասես խաչհանած ատենդդ։
պխ. Երբ որ խաչ կուհանեմ երեսս, յաջակողմանէ ձեռքս ճակտիս վերայ կուդնեմ, և կասեմ Յանուն հօր, և անկից վար բերելով ձեռքս դոտուս վերայ կուդնեմ, և կասեմ որդւոյ, և անկից ձեռքս դէպ ի ձախիկ կուշտս կուտանիմ, և կուբերեմ դէպ ի յաջիկ կուշտս, և կասեմ, սրբոյն սրբոյ։
հց. Մէկ անգամ, ինչպէս որ ասիր՝ այնպէս խաչակնքէ զքեզ որ տեսնեմ։
պխ. Յանուն հօր, և որդւոյ. և սրբոյն սրբոյ ամէն։ ✠
հց. Այդ խօսքդ որ կասես, յանուն հօր և որդւոյ, և սրբոյն սրբոյ՝ կուհասկնաս ինչ ասել է։
պխ. Այս չափ կու հասկնամ, որ ասել է թէ հայր և որդի և սէ՛ սրբին՝ են երեք անձինք, և մէկ ա՞ծ, ի յոր մենք քրիստոնեայքս կուհաւատանք։ Զի երբ որ կասենք՝ յանուն, անով ա՞յ մէկ լինելն կու իմանանք, և երբ կասենք հօր և որդւոյ և սրբոյն սրբոյ, երեք անձինք ըլլալն կու հասկնանք, և այսպէս զմեր հաւատոյ դաւանութիւն կու ասանք՝ երբ որ այն խօսքն ասելով կու խաչակնքենք զմեզ։
հց. Այլ ուրիշ խորհուրդ ալ ունի՞ խաչակնքելն զմեզ։
պխ. Այս բանս այլ կայ, որ յանուն հօր ասելինին՝ երբ ձեռքերնիս ճակտուս

վերայ

վերայ կու դնեանք , անով կու հաւատանք , և կիմանանք , թէ հայր և որդի և սուրբ ոգին 'ի յերկինս են ։ և որդւոյ ասելնին՝ երբ ձեռքերնիս դէպ 'ի վար կուբերենք , անով կու հաւատանք , և կիմանանք , թէ որդին այս յերկնից 'ի յերկիր իջեր է , և մեր փրկութեն համար մարմին առեր 'ի կուսէն . և ոգւոյն սրբոյ ասելնին՝ երբ որ ձեռքերնիս 'ի ձախ կողմէն յաջիկ կողմն կու բերենք , անով կու հաւատանք , և կիմանանք , թէ ոգւոյն սրբոյ շնորհաքն , 'ի ձախ կողմէն մեղաց 'ի յաջիկ կողմն շնորհաց եկերենք ։

հց. Դու ինչ բանով քրիստոնեայ ես եղեր։

պխ. Յանուն հօր , և որդւոյ , և ոգւոյն սրբոյ՝ մկրտուերեմ աւազանի ջրովն , և անով քրիստոնեայ եմ։

հց. Ով որ չէ մկրտուած , և չի ուզեր մկրտուիլ՝ ինչ կու լինի այնպիսին ։

պխ. Այնպիսին քրիստոնեայ չէ , և Քրիստի հետ մասն ու բաժին չունի , և ասով 'ի կորուստ կուգնայ , և փրկութեան չիհասանիր ։

հց. Դու յառաջմէ այս աշխարհիս մէջ չի կայիր . և հիմիկ որ կաս , ով է ստեղծեր զքեզ , և այս աշխարհս բերեր , և ինչու համար է ստեղծեր ։

պխ. Աստ է ստեղծեր զիս իւր ամենակարող զօրութեան , և բերեր այս աշխարհս , և անոր համար ստեղծերէ , որ քանի կենդանի եմ՝ նէ միշտ բարեգործութեան հետ լինիմ՝ , և իւր օրէնքն , և պատուիրանքն պահեմ՝ , և երբ որ մեռնիմ՝ նէ՝ զիս յարքայութիւն տանի իւր ողորմութեան , որ անտեղն զամէն բարի , և

զամէն ինդուԹի , և փառք վայելեմ առանց մեռնելու Ի յաւիտեան ։

հց. Այդ արքայուԹիդ ուր տեղէ, և ինչ պէս է ։

պխ. ԱքբայուԹիւն Ի յերկինքն է , և խիստ մեծ , և պայծառ լուսաւոր տեղ մի է՝ , և ամ սէք , և ածածին կոյսն , և հրեշտակք այնտեղն են , և զայ տեսն կու վայելեն , նաև քա Տէր մեր որ իւր մարմնովն այն տեղն է՝ նորա տեսն ալ կու վայելեն։ Եւ այսպէս ով որ կու գնայ յարքայուԹիւն, այ տեսուԹիւն շատ կու զմայլի , և քա՝ի մարմնոյն տեսուԹիւն, շատ կուրախանայ . և ամ սրբոց , և սէք ածածնայ , և հրեշտակաց ընկերակից լինելով շատ կու խնդայ , և այսպէս ամէն բարիքն կու վայելէ, և ամէն կերպ ուրախուԹի , և խնդուԹի կուտենայ , խիստ շատ աւելի՝ քանԹէ մէկ Թագաւոր մի ունենայ այս աշխարհիս վերայ. և այսպիսի արքայուԹեան ճանապարհն քա Տէրն մեր բացաւ մեզի , և քա՝ի արդեամբն , և շնորհաքն կարենք գնալ յարքայուԹիւն , և ոչ ԹէՀ մեր արժանաւորուԹիւն ։

հց. Ինչպէս կուճանաչես զքա՝ Տէր մեր, և ինչ պէս կու հաւատաս ։

պխ. Այնպէս կուճանաչեմ , և կու հաւատամ , որ Յա՝ քա՝ Տէրն մեր է՝ որդի հօր այ . քանզի երբ կասենք , հայր , և որդի , և սէք ոգի՝ են երեք անձինք և մի ած , նոյն որդին ած է՝ Յա՝ քա՝ Տէրն մեր ։

հց. Ինչու համար որդին ԱՀ Յա՝ քա՝ կասէի , բայց հայր ած , և որդին աբ ած Յա՝ քա՝ չեն ասուիր ։

պէս. Նորա համար, որ որդին ՝ն մեր փրկուելոյ է, և աղաստուելեանն համար ՝ի յերկնից իջաւ, և ՝ի սէր ՝ն ածածին կուսէն մարմին առաւ, և մարդ եղաւ, և այն ժամանակն երբ որ ՝ի սէր ՝ն ածածին կուսէն իւր առած մարմնովն ծնաւ նէ Յ՝ Քրիստոս անուանեցաւ։

հց. Մենք որ՝ու ձեռքն դերի էանք, որ որդին ՝ն զմեզ ազատելու համար յերկնից իջեր է, և մարմին առեր ՝ի սէր ՝ն ածածին կուսէն, և մարդ եղեր է, և Յ՝ Քրիստոս անուանեցեր։

պէս. Իսկոյր մարդկային աղգս դերի էր ՝ի ձեռն սատանայի վասն մեղացն ադամայ. և ասով սատանան բնաւ չէր թողուր որ բարի մարդկանց հոգիքն յարքայութիւն գնային. այլ զամենն ինքն կուս տիրապետէր. և որդին ՝ն ածածին որ է Յ՝ Քրիստոս, մարմին առնելով, և ՝ի կուսէն ծնանելով, և խաչի համբերելով աղատեց զմեզ ՝ի ձեռաց սատանայի, և արքայութիւն ՝ն ճանապարհն բացաւ, և ասով ինչ Քրիստոնեայ, որ Քրիստի օրէնքն, և հրամանքն պահէ նէ յարքայութիւն կու գնայ, և սատանան կարող չէ որխափանէ։

հց. Քրիստոս մեր ինչպէս կենցաղավարեցաւ այս աշխարհիս վերա։

պէս. Միշտ և հանապազ քարոզներ, և բարի խրատներ կու տար մարդկանց, և հրաշքներ կանէր. կաղերուն ոտք կու տար, կուրերուն աչաց լոյս կու տար, և ինչ կերպ ցաւ ունող մարդ որ լինէր նէ՝ ամենն կուբժշկէր, և մեռած մարդ ևս կու յարուցանէր, և այլ շատ ուրիշ կերպ բարի բաներ, և գործքեր կանէր։

նէր։ Բայց չար հրէաներն նախանձէ-
ցան քի, և կամեցան որ մէկ մեծ խա-
չաձև փայտի մի վերա բևեռեն զքնա,
և ասացանէին։ Եւ Քրիստէր մեր թէպէտ
կարօղ էր զամէն հրէաներն ոչնչացու-
ցանել, և զինքն ազատել, բայց ոչ կա-
մեցաւ։ այլ զմեզ 'ի ձեռաց սատանայի
ազատելու համար թոյլ տուաւ, և
համբերեց, որ զինքն նոյն փայտին վե-
րա գրին, և զիւր սէր ձեռքերն և ոտք-
երն այն փայտին վերա դամելով խա-
չեցին, և մեռուցին։ Եւ յետ մեռանե-
լոյն 'ի գերեզման դրին։ Բայց ինքն
Յիսուս, որ ամէն բանի կարօղ էր,
յերրորդի աւուրն ինքն իրեն յարեաւ
'ի մեռելոց, և ազատեց զմարդիկ 'ի
գերութիւն սատանայի։

հդ. Մի թէ Յիսուս Տէրն մեր առանց
խաչելու, և մեռանելու չէ՞ր կրնար
ազատել զմեզ 'ի ձեռաց սատանայի։

պխ. Թէպէտ կարէր ազատել, բայց ինքն
որ շատ լաւ գիտէ զամէն բան՝ այսպէս
համեցաւ, որ մարմին առնու 'ի սուրբ
ածածին կուսէն, և իւր առած մարմ-
նովն խաչի, և մեռանի, և յարութիւն
առնու, և սատնցմով ազատէ զմեզ։

հդ. Յիսուս Տէրն մեր յարութիւն առնելուն
յետքն՝ ա՞ր գնաց, և հիմիկս ուր
տեղ է։

պխ. Յետ յարութիւն առնելուն մեծ փառաւ-
որ երկինքն համբարձաւ, իւր ունեցած
մարմնովն։ և հիմիկս 'ի յերկինքն է ընդ-
աջմէ հօր։ Եւ 'ի վերջն աշխարհիս
նոյն Յիսուս Տէր մեր իւր մարմնով-
պիտի դայ, և դատաստան անէ ամենայն
մարդկան։

հդ.

հց. Որնէ վերջն աշխարհիս , և ինչ պէս դատաստան պիտի անէ Յ՚ Քրիստէն մեր ։

պիս. Վերջ աշխարհի այնէ , որ մէկ օր մի պիտի լինի , որ այս աշխարհս վերջանայ , և ամէն մարդիք մեռանին , և ամէն շինուածք քակտուին , և աւրին , և նոյն օրն Քրիստէն մեր 'ի յերկինից մեծ փառօք , և անթիւ հրեշտակներով կու գայ 'ի դատաստան , և որչափ մարդիք որ եկած են յայս աշխարհս , և մեռած են , ամէնքն յարութի կանեն , և կու կենդանանան հրամանաւն Քրիստոսի . և Քրիստէն մեր կու նստի լուսեղէն աթոռի վերայ , և զամէն մարդիք իւր առաջն կու բերի , և արդար դատաստան կանէ . արդարներուն արքայութի կուտայ , և մեղաւորներուն յաւիտենական տանջանք ։

հց. Լաւ , հիմիկ իմացայ որ դու զքո հաւատոյ պինտ հարկաւոր բաներն դիտես . զհայր և զորդի և զսբ. ոգին ելրեք անձինք և մի ած կու հաւատաս . և զորդին ած վասն փրկութեան մերոյ ծնեալ 'ի կուսէն , խաչեցեալ , մեռեալ և յարութի առեալ կու հաւատաս , և 'ի վերջն աշխարհիս գնոյն Քրիստոն 'ի դատաստան գալոց , և արդարոցն փառք , իսկ մեղաւորացն տանջանք յաւիտենական տալոց կու հաւատաս ։ Բայց կու կամիմ որ ասես ինձ՝ թէ ինչոնա հաստատ քրիստոնէից նշանն աք խաչն է , և վասն ի՞նչ երկրպագութի կու լինի սք խաչին ։

պիս. Նորա համար , որ Քրիստոս մեր 'ի վերայ խաչին բեւեռեցաւ , չարչարեցաւ

ցաւ և մեռաւ վասն ապատեղոյ զմեզ. և ասով խաչն եղև նշան Քի, և ամ քրիստոնէից. և մեք քրիստոնեայքս որ քան որ կերկրպագեմք սբ խաչին, նոյն երկրպագութիւն Քրի խաչեցելոյն կու լինի. և որքան մեր երեսն խաչ կուհանենք՝ Քրի չարչարանաց ձևն ի մեր դէմքն կու տպաւորենք, որ անով ամէն որոգայթէ ազատինք, և սատանայի փորձութէն պահպանէ՝ինք։

ԳԼՈՒԽ Բ.

Վասն մեկնութէ հաւատամքին, որ ամենայն քրիստոնէից պէտք է լաւ գիտնալ. և ինչպէս որ կասի հաւատամքն այնպէս հաւատալ։



հց. Իսեռն զհաւատամքն.
պխ. Հրամերեա գիտեմ։
հց. Ասա մեկ անգամ որ տեսանեմ թէ լաւ կասես։
պխ. ։. Հաւատամք ի մի ած հայրն ամենակարող, յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և անտեսանելեաց։
։. Եւ ի մի Տէր Յ՝ Քն յորդին այ, ծնեալ ցեալ յայ հօրէ միածին, նախքան զամ յաւիտեանս. ած յայ, լոյս ի լուսոյ ած ճշմարիտ, յայ ճշմարտէ ծնունգ՝ և ոչ արարած. նոյն ինքն համագոյ ինչ հօր, որով ամ ինչ եղև յերկինս և

և 'ի վերայ երկրի , երևելիք և աներ-
ևոյթք ։

3. Որ յաղագս մեր մարդկան , և վասն մե-
րոյ փրկութեան իջեալ 'ի յերկնից մարմ-
նացաւ , մարդացաւ , ծնաւ կաւարե-
լապէս 'ի մարիամայ սրբոյ կուսէն ոգ-
ւովն սրբով. որովհետև զմարմին զկո-
ղի և զհոգի , և զամ որինչ է 'ի մարդ
ճշմարտապէս՝ և ոչ կարծեօք ։

4. Չարչարեցեալ , խաչեցեալ , թաղե-
ցեալ ։

5. Յերրորդ աւուրբ յարեալ ։

6. Երեալ 'ի յերկինս նովին մարմնովն ։
նստաւ ընդ աջմէ հօր ։

7. Գալոց է նովին մարմնովն և փառաւոր
հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս,
որոյ թագաւորութեանն ոչ դոյ վախ-
ճան ։

8. Հաւատամք և 'ի սբ ոգին յանեղն և 'ի
կատարեալն , որ 'ի հօրէ և յորդւոյ
բղխի , որ խօսեցաւ յօրէնս և 'ի մար-
գարէս , և յաւետարանս , որ էջն 'ի
յորդանան , քարոզեաց զառաքեալն , և
և բնակեցաւ 'ի սբն ։

9. Հաւատամք և 'ի մի միայն յընդհանրա-
կան և յառաքելական եկեղեցի ։

10. 'Ի մի մկրտութիւն , յապաշխարութիւն , 'ի
քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց ։

11. 'Ի յարութիւն մեռելոց ։

12. 'Ի դատաստանն յաւիտենից հոգւոց և
մարմնոց , յարքայութիւն երկնից , և 'ի
կեանսն յաւիտենականս ։

13. Ովքե՞ր շարադրեր զայս հաւատամքս , և
քանի՞ բաժին է ։

պէս. Ժբ. Բաժին է , և ժբ. առաքեալքն՝
ամէն մէկն զմի բաժինն շարադրեցին ։

և Նիկիոյ սէ ժողովն մեկքանի բաժի-
նին վերայ մեկնութիւն դնելով պարզեր
է. և սրն Գրիգոր լուսաւորիչն մեր
իսկ մէ փառաւորեսցուք սուրբ , և
ընդունէր . և եմ քրիստոնեայ պար-
տական է որ զայս հաւատամքս ընդու-
նի ու ասէ . և այնպէս հաւատայ , ինչ
պէս որ ասուր մէջ գրուած է ։

Հց. Սեկնէ ընձի զառաջին բաժինն խօսք-
առխօսք ։

պէս. (Հաւատամք ի մի ՝ն հայրն ամենա-
կարող .) այսինքն . ես կու հաւատամ
սիրով ՝ի յայն որ մէկ է , և ոչ բազում .
և այս մէկ ՝ն՝ հայր , և որդի , և սրբի
ոգի է . (և այս տեղս զհայրն կուլիշէ .
յետոյ որ յառաջ երթայ՝ զորդին և
զոգին սրբ ալ կուլիշէ) և ՝ն՝ հայր ա-
մէն բանի կարող է . ինչ որ կամենայ՝
կընայ անել ։ (Յարարիչն երկնի և
երկրի , երևելեաց և աներևութից ։)
այսինքն . ՝ի յայն մի ՝ն՝ հայր որ կու-
հաւատամ , զայս ալ կու հաւատամ , որ
նա է ստեղծող զերկինք , և զերկիր՝
յոնչէ . և զամէն բան որ կու դուին
յերկինքն՝ և ՝ի յերկիրս , թէ մեր ա-
չաց երևեցածներն , թէ չերևեցածներն
զբնաւն ինքն է ստեղծող ։

Հց. Սեկնէ ընձի զերկրորդ բաժինն ։

պէս. (Եւ ՝ի մի Տէր Յ՝ Քս՝ յորդին ՝ն՝ ։)
այսինքն . ես կու հաւատամ սիրով ՝ի
Տէրն մեր Յ՝ Քս՝ , որ է մի . և է որ-
դի հօր ՝ն՝ ։ (Ծնեցեալ յայ հօրէ մի-
ածին ։) այսինքն . ծներ է յայ հօրէ՝
մէկիկ որդի . և իրմէ ՝ի զատ այլ ու-
բիշ ոգդի չիկայ հօր ՝ն՝ ։ (Նախքան
զամ յաւիտեանս ։) այսինքն . Ամէն

յաւիտենէ յառաջ ծներ է որդին, և չէ թէ ժամանակի մի մէջ, և կամ մէկ յաւիտենէ մի յետք ծներէ։ (Աչ յայ, լոյս ի լուսոյ աչ Աշմարիտ։) այսինքն. Ինքն որդին է աչ՝ և յայ ծներէ. լոյս է՝ և ի լոյս հօրէ ծագերէ. և է Աշմարիտ աչ, և ոչ անընդով միայն։ (Յայ Աշմարտէ՝ ծնուռնք, և ոչ արարած։) այսինքն. Որդին այ ի Աշմարիտ յայ հօրէ ծներէ, և ոչ թէ ստեղծուերէ։ (Ոչն ինքն համադոյակից հօր։) այսինքն. Ոչն ինքն որդին այ, հօր այ էակից է, և գոյակից է, այսինքն մէկ էութիւն, և գոյացութիւն ունի հօր այ հետ. դարձեալ համադոյ է որդին հօրայսինքն, գոնն մէկտեղ է ընդ հօր՝ և չէ թէ հայր յառաջ է, և որդին յետոյ եղերէ։ (Որով աչ ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի, երևելիք և անտեսանելիք։) այսինքն. Ամէն բան որ ի յերկինքն, և ի վերայ երկրիս կան, թէ երևցածներն, և թէ չերևցածներն՝ անով են եղեր. այսինքն, որդւովն են ստեղծուեր. քանզի ինչպէս որ զհայր աչ կու հաւատանք թէ ստեղծող է երկնի և երկրի, այսպէս ալ զորդին աչ, և զոգին սբ աչ՝ պիտի հաւատանք. զի մէկ է իրենց էութիւնն. նորա համար մէկ անձը ինչ կարողութի որ ունի՝ մէկայն ալ զնոյնն ունի. և երեք անձանցն մէկ գործք է միշտ և հանապազ. և ինչ որ կանէ հայր աչ՝ զնոյնն կանէ և որդին, և սբ ոգին։

հց. Մեկնեմ ընձի զերբրորդ բաժինն։

պխ. (Որ յաղագս մեր մարդկան, և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից։)

այ.

այսինքն. Էս կու հաւատամ թէ նոյն
որդին ՝ի՛՝ մեզ համար, որ մեղաւոր
մարդիք էանք, և մեր փրկութեանն
համար, որ սատանայի ձեռքն գերի
էանք՝ իջաւ յերկնից 'ի յերկիր, (մարմ-
նացաւ:) այսինքն. 'ի կուսէն մարիա-
մայ մարմին առաւ. (մարդացաւ:) այ-
սինքն. բանական հոգի մի ստեղծեց,
և առաւ մարմնոյն հետ միաւորեց. և
'ի նոյն կէտն 'ի յաստուածային անձն իւր մի-
աւորեց զայն մարմինն՝ և հոգին. և
ասով որդին ՝ի՛՝ մարդացաւ, այսինքն.
մարդ եղաւ. և այսպէս աստուածային բնու-
թիւն, և մարդկային բնութիւն 'ի յան-
ձին որդւոյն ՝ի՛՝ միաւորեցան: (Ծնաւ
կատարեալապէս 'ի մարիամայ սրբոյ կու-
սէն:) այսինքն. Թէն ամիս 'ի յարգան-
տի կուսին մարիամայ մնաց, և կատա-
րեալ կերպով և ճշմարտութիւ՛ ծնաւ
'ի մարիամայ սրբոյ կուսէն: Բայց սի՛
կոյսն մարիամ՝, կոյս մնաց երբ յղացաւ,
կոյս մնաց երբ որ ծնաւ, և կոյս մնաց
յետ ծնանելոյն. Նորա համար՝ կասի՝
միշտ սի՛ կոյս մարիամ. Նաև կասի
աստուածին, զի զորդին ՝ի՛՝ ծնաւ: (Ոգ-
եով սրբով:) այսինքն, Սի՛ կոյսն մար-
դոյ ուժով, և զօրութի՛ չծնաւ զոր-
դին ՝ի՛՝. այլ ոգւոյն սրբոյ զօրութի՛ն,
և ուժովն առանց սերման մարդոյ յղա-
ցաւ, և ծնաւ. և ինչպէս առանց սեր-
մանն յղացաւ, այսպէս՝ և առանց ցաւ
քաշելոյ ծնաւ: (Որով էաւ մարմին
հոգի միտք, և զմ՝ որ ինչ է 'ի մարդ
ճշմարտապէս, և ոչ կարծեօք:) այ-
սինքն. Որդին ՝ի՛՝ մարմնանալովն, և
մարդ լինելովն առաւ և ունեցաւ մար-
մին,

մին , հոգի , միտք , և այլ ամ ինչ և իցէ բան որ ունի մարդն՝ զամենն ա-
ռաւ , և ունեցաւ , բաց 'ի մեղաց . և այս առնուլս , և ունենալս՝ է՝ ճշմար-
տապէս՝ և տուգութիւն , և ոչ կար-
ծեօք , և կամ մարդկանց այնպէս երև-
ցնելով . զի դրսեւանց երևիլն , և ճշ-
մարտապէս այնպէս չլինին՝ սուտ մարդ
լինիլն , և ոչ ճշմարիտ մարդ ։ Եւ զի
որդին այ ինչպէս ճշմարիտ ածէր ,
այսպէս այլ մարմին առնելով ճշմարիտ
մարդ եղև . և ինչպէս ճշմարիտ ածու-
թիւն ունէր , այսպէս այլ ճշմարիտ մարդ-
կութիւն ունեցաւ ։

հց. Մեկնեմ ընձի զքրիստոս բաժինն ։
պիս. (Զարշարեցեալ , խաչեցեալ , թաղե-
ցեալ ։) այսինքն ։ Եւ կոս հաւատամ ,
զի նոյն որդին այ որ մեր փրկութեանն
համար մարմնացաւ , իւր առած մարմ-
նովն , զմեզ 'ի մեղաց դերութիւն ազա-
տելոյ համար՝ չարչարուեցաւ 'ի հրեից՝
կերպ կերպ տանջանօք , և 'ի վերայ
խաչափայտին բևեռեցաւ , և խաչեւ-
ցաւ , և այնպէս խաչին վերայ չարչա-
ռուելովն՝ իւր սէր արիւնն վասն մեր
փրկութիւն 'ի մարմնոյն հեղուեցաւ , և
իւր հոգին 'ի մարմնոյն բաժանեցաւ . և
այսպէս մեռաւ , և թաղեցաւ 'ի դե-
ղեզմանի . և ասով իւր ածութիւնն ոչ 'ի
մարմնոյն զատուեցաւ , և ոչ 'ի հոգւոյն ,
նորա համար կոս հաւատանք , թէ որ-
դին այ Քրիստոս մեր՝ որ մարմնովն 'ի
դերեզման դրուաւ , հոգովն էջ 'ի դը-
ժոխս . այսինքն հոգով դնաց 'ի դժոխս՝
որ զատանան , և զանազանեալ մեղաւոր-
ներն յանդիմանել , և զարդարոց հոգիքն
'ի ան-

'ի ձեռացն սատանայի ազատէ։ Զի սատանան՝ յառաջքան զՔՍ, սէ մարդ-կանց հոգիքն ալ զժոխքն կուտանէր։ և Տէր մեր զսատանայի ուժն ոչնչացոյց, և սրբոց բաժին զժոխքն քակեց, և սրբոց հոգիքն ազատեց, և իր հետ յարքայութիւն տարաւ։ Իսկ սատանայի և անեղէզ մեղաւորաց բաժին զժոխքն մնաց, որ յայն տեղը կու գնան անեղէզ մեղաւորաց հոգիքն։

հդ. Մեկնէ ընձի զհինգերորդ բաժինն։

պաս. (Յերրորդ աւուր յարեալ։) այսինքն. Ես կու հաւատամ որ նոյն որդին այ ՅՔՍ Տէրն մեր, որ իւր առած մարմնովն խաչուեցաւ, և մեռաւ։ յերրորդ աւուրն իւր զօրութիւն յարեաւ 'ի մեռելոց։ այսինքն, ինքն իր զօրութիւն կենդանացաւ։ Թէպէտ ուրիշ մեռնող մարդն անհնար է թէ ինքն իրեն կենդանանայ։ բայց ՔՍ Տէրն մեր որ լոկ մարդ չէր, այլ էր աստ, և մարդ, և ունէր զկատարեալ աստային բնութիւն, և զկատարեալ մարդկային բնութիւն, իրեն դժուար չէր ինքն զինքն կենդանացնելն։ Քանզի ինքն որ իւր մարմնովն ձմարտապէս չարչարուեցաւ և մեռաւ, իւր աստուածութիւն միշտ անչարչարելի և կենդանի էր։ և ասով ինքն որ կենդանի էր իւր աստուածութիւն, կենդանացոյց զինքն, որ մեռեալ էր իւր մարմնովն։ Եւ ասով կերևի յայտնապէս թէ նոյն մի Տէրն մեր ՅՔՍ, որ է մի անձն, և մի դէմ, ունի 'ի յինքն անբաժանելաբար, և անշփոթապէս միաւորեցեալ զերկուս բնութիւն։ այսինքն, զաստուածութիւն, և զմարդկութիւն իւր։

իւր. և անով կարելի կու լինի, նոյն Տէրն մարդկային բնութիւն մեռանիլ ճշմարտապէս՝ և աստուածային բնութեամբն կենդանի մնալով ինքն զինքն յարուցանել ի մահուանէ։ Ուստի համար այն մարդիկն՝ որ զՔՍ ճշմարտապէս մեռեալ, և յետոյ ինքն զինքն ճշմարտապէս՝ յարուցեալ կու հաւատան, ասով կու պարտաւորին, որ զմի ՔՍն երկու բնութիւն ունենալ հաւատան. այսինքն, զաստուածութիւն և զմարդկութիւն։ Դարձեալ ասելն՝ թէ ՔՍ ե՞ս աստ և մարդ, և ասելն՝ թէ ՔՍ ունի զաստուածութիւն և զմարդկութիւն միաւորեալ՝ մի և նոյն խօսք են։ Իսկ ասելն՝ թէ ՔՍ Տէրն մեր ունի զաստուածութիւն և զմարդկութիւն միաւորեալ, և ասելն՝ թէ ունի զերկու բնութիւն միաձուլեալ՝ մի և նոյն խօսք են։ Ինչպէս որ մեր սէ՛ ներսէս՝ լամբրոնացին՝ ի գիրքն իւր յայտնապէս կու ասէ զայս խօսքս։ Զունելով անաչառ քննութիւն առ այս ինչ մեզ նիւթ հակառակութեան, զի նոյն է աստ և մարդ ասելն զՔՍ, և երկու բնութիւն. այսինքն, ասելն՝ թէ ունի զերկու բնութիւն։

Հց. Ասա և մեկնէ ընձի զվերցեալդ բաժինն։

պաս. (Եղեալ ի յերկինս նոմին մարմնով։)
այսինքն. Էս կու հաւատամ, որ ՔՍ՝ Տէր մեր նոյն առաջ մարմնովն՝ և մարդկային բնութիւն ի յերկինքն համբարձաւ. նորա համար կու գրի սուրբ նոմին մարմնովն, որ հաւատամք թէ ինչպէս իւր աստուածութիւն միշտ իւր հետ է, այսպէս սէ՛ իւր մարդկութիւն միշտ իւր հետ է, և անով երկրէ յերկինքն. և չէ

կորուսեր , կամ՝ ի դերեզմանն թողեր ։ Նաև կիմանանք , թէ որդին այ Յա՛ Քա՛ Տէրն մեր՝ ըստ մարդկային բնութեան կասէ ելանել յերկինքն , և ոչ ամենային բնութիւն . զի ամենային բնութիւն՝ յամ տեղ՝ թէ յերկինքն , և թէ յերկիրս լի է . և չի սուիր թէ մէկ տեղէն մէկ ալ տեղն գնաց ։ (Նստաւ ընդ աջմէ հօր ։) այսինքն . Որդին այ որ իւր առած մարմնովն համբարձաւ ի յերկինքն , ի փառս հօր նստաւ . զի ընդ աջմէ հօր նստիլն՝ փառաւորն հօր հաւասար լինիլն է . քանզի հայր և որդի հաւասար են փառաւոր , և որդին մարմին ունելովն որ ելաւ ի յերկինքն՝ նոյն մարմնովն հաւասար հօր նստաւ ։

հց. Ասա և մեկնէ ընձի զեօթներորդ բաժինն ։

պէս. (Գալոց է նոյնն մարմնովն և փառաւոր հօր ։) այսինքն . Եւ կու հաւատամ, զի Յա՛ Քա՛ Տէր մեր , որ մարմնով յերկինքն ելաւ , և նստաւ ի փառս հօր , պիտի նոյն մարմնովն , և նոյն փառաւորն յերկնքէն դայ ի յերկիր , որ դատաստան անէ եամ մարդկանց ։ (Ի դատել զկենդանիս և զմեռեալս ։) այսինքն . Այն ժամանակն որ չափ կեն դանի մնացած մարդիք կան , որ նոյն օրն կու մեռնին , և շատ մի նոյն օրն յարութիւն կառնեն՝ կու դատէ զանոնք , և այս է դատելն զկենդանիս . նաև զայն մարդիքն կու դատէ , որ շատուց մեռեր են և յարութիւն կառնեն , և այս է դատելն՝ և զմեռեալս ։ (Որոյ թագաւորութեան ոչ դոյ վախճան ։) այսինքն . Քսի թագաւորութիւնն վերջանալ չունի ,

նի, զի նա որ կու դատէ զամէն մարդ, մեղաւորացն յաւիտենական պատիժ դժոխոց տալով, իւր արդար դատաստանաւն կու թագաւորէ մեղաւորաց վերայ. և արդարոց յաւիտենական փառք արքայութիւն տալով իւր ողորմութիւն կու թագաւորէ արդարոց վերայ։ Որոնց համար ինչպէս որ կուհաւատանք թէ Քրիստի թագաւորութիւնն յաւիտենական է և վախճան չունի, այսինքն, չի վերջանար, այսպէս ալ պիտի հաւատանք՝ թէ մեղաւորաց պատիժն, և արդարոց փառքն յաւիտենական է՝ և վերջանալ չունի։

հց. Այս և մեկնէ ընձի զուիներորդ բաժինն հաւատամքին։

պիս. (Հաւատամ և 'ի սբ ոգին յանեղն և 'ի կատարեալն։) այսինքն. Ես կու հաւատամ սիրով 'ի ոգին սբ որէ ամ, և է հօր և որդւոյ հաւասար. է՝ անեղ, և կատարեալ, զի չէ ստեղծուեր, և չէ անկատար. այլ ոմն յաւիտենից է հայր և որդին, այսպէս և սբ ոգին. զի երեք անձինք հայր, և որդի, և սբ ոգի են մի ամ, և ունին զմի էութիւն, զմի բնութիւն, զմի աստուածութիւն, զմի և զնոյն կատարելութիւն և կարողութիւն։ (Որ 'ի հօրէ և յորդւոյ բղխի։) այսինքն. Ոգին սբ յառաջագոյն և բղխի ոչ միայն 'ի հօրէ, այլ և յորդւոյ. զի զորինչ առնէ հայր, զնոյնն և որդին նմին նման գործէ՝ ասաց Տէրն մեր։ Արդ՝ մենք որ կու հաւատանք 'ի հօրէ բղխիլ, պարտականենք հաւատալ՝ թէ նաև յորդւոյ կու բղխի. զի ինչ որ ունի հայր, բաց 'ի հայրութէն զամէնն

ունի

ունի և որդին. ինչպէս որ կասէ Տէրն մեր ի յաւետարանին։ Յոհանու. ιϛ. Զամենայն ինչ զոր ունի հայր իմ է։ (Որ խօսեցաւ յօրէնս, և ի մարգարէս, և յաւետարանս։) այսինքն. Ոգին սէ խօսեցաւ ի յօրէնս, ի մարգարէս, և յաւետարանս, և խօսիլն այս է. զի ոչ այլոյն սրբոյ տուն տալոցն մօտէս մարգարէն գրեց զօրէնս. և ուրիշ մարգարէքն գրեցին զմարգարէական գրքերն, և առաքեալքն գրեցին զաւետարանն, և զբոլոր նոր կտակարանի գիրքն։ (Որ էջն ի յորդանան, քարոզեաց զառաքեալն՝ և բնակեցաւ ի մեզ։) այսինքն. Ոգին սէ աղաւնակերպ տեսլեամբ ելաւ ի վերայ Քրիստոսի ի յորդանան գետն, ի ժամանակի մկրտութեանն Քրիստոսի, և անով քարոզեց, և ցոյց տուաւ մարդկանց թէ Քրիստոս՝ որդի այ՝ և առաքեալներ յաշխարհս ի հօրէ այ։ Եւ ինչպէս այն ժամանակն հանդեաւ, այսինքն, մնաց ոգին սէ ի վերայ Քրիստոսի, այսպէս ալ այն առաքելոցն ինչ մարդիքն որ հաւատացեալին Քրիստոսի՝ և մկրտուելին՝ և ասով սէ էին եղեալ՝ անոնց վերայ ալ ելջաւ, և բնակեցաւ ի նոսա, նաև յետոյ ի գաստ առաքելոյ ելջաւ յաւուր պէնտեկոստէի հրոյ կերպարանաւ, և բնակեցաւ ի նոսա, և միշտ կու բնակի ի սէ յեկեղեցին։

Հց. Ապա և մեկնեմ ընձի զիններորդ բաժինն։

ալիս. (Հաւատամք և ի մի միայն ընդհանրական, և առաքելական եկեղեցի։) այսինքն. Ես կու հաւատամ ի սէ եկեղեցին, որ միայն մէկ է, և չէ քանի

Ճբ. և այս մէկ եկեղեցիս՝ ընդհանրա-
կան և կաթուղիկէ է՝, զի շատ կերպ
ազգեր, և շատ կերպ մարդիք իւր մէջն
կու պարունակէ։ Եւ այս տեղս եկե-
ղեցի ասելն՝ քարով փայտով չենռեաց
եկեղեցիքն չեն իմացուիր. զի անունք հա-
զարք հազարաց են, և չեն մէկ։ այլ
կու իմացուի մեզ հաւատացեալց ժողո-
վելն 'ի մի հաւատն Քրիստոսի, 'ի ներքոյ
մէկ գլխոյ. և նոյն մէկ գլուխն է փո-
խանորդն Քրիստոսի սրբազան պատն հաւ-
մայ, որ կու նստի 'ի վերայ աթոռոյն
պետրոսի, որ կացուցաւ հովիւ ամե-
նայն ոչխարացն Քրիստոսի։ Եւ ինչ մարդ
որ ասէ թէ մէկ երևելի գլուխ չունի
այս սէր եկեղեցիս, այլ բազում գլուխ
ունի, այնպիսին չի հաւատար այս հա-
ւատամքիս խօսքին, և միշտ ստուգաբար
կասէ հաւատամ 'ի մի միայն ընդհանրա-
կան և առաքելական եկեղեցի։ Քան-
զի թէ բազում գլուխ լինին՝ բազում
եկեղեցի կու լինի։ Եւ մարդիք այս-
պէս չկարծելու համար՝ սէր առաքեալքն
զայս բաժինս հաւատամքին հաստա-
տեցին, և սէր ժողովն Նիկիոյ պարզա-
բանեց, որ մեզ քրիստոնեայք զայս
խօսքս ասելով՝ թէ հաւատամ 'ի մի մի-
այն ընդհանրական և առաքելական ե-
կեղեցի, լաւ մտքերնին առնեն, և
միաբան կենան, և այն մէկ գլխոյն
հնազանդ լինին։ Եւ սէր եկեղեցին նո-
րա համար առաքելական կասի, զի
գլուխն եկեղեցւոյն կու նստի 'ի յա-
թոռն առաքելոյն պետրոսի. նաև սէր
եկեղեցին միշտ առաքելոց բանին՝ հա-
ւատոցն և աւանդութեանն կու վարի։

հց. Մեկնեմ ընձի և ասա զոտաներորդ բաժինն հաւատամքին։

պա. (Ի մի միրտութի։) այսինքն. Եսկու հաւատամ որ միրտութին քրիստոնեից՝ երբ որ անուամբ սբ երրորդութիւն, և ջրով կու լինի՝ մեկ անգամ պիտի լինի, և ոչ բազում անգամ, զի այս սբ խորհուրդս չկարիտի կրկնիլ։ Եւ դարձեալ կու հաւատամ, որ եմ բարի քրիստոնեայք մեկ աւազանի ծնունդ լինելով՝ մեկն մեկալին բարեգործութիւն մասն ու բաժին ունի, երբ որ մահուշտի մեղաց մէջ չէ. նորա համար համառօտ հաւատամքին մէջ կասի, թէ հաղորդութի սրբոց, այսինքն։ Եսկու հաւատամ որ ի մէջ եկեղեցւոյ բարի քրիստոնեայքն՝ որ մահուշտի մեղաց մեղաւոր չեն՝ մեկը մեկալին բարեգործութիւն մասն ու բաժին ունին, և այս է հաղորդութի սրբոց. քանզի այն որ զբարին կու գործէ՝ սբ է, և իւր ընկերն այլ որ մահուշտի մեղաց մէջ չէ՝ սբ է, և այս պէս՝ այս սբս մեկալ սրբոյ բարեգործութիւն հաղորդութի ունի. այսինքն մասն և բաժին, և ասոր պատճառն այս է, որ մեկ միրտութի ունին, մեկ հաւատք, և միոյ եկեղեցւոյ անդամք են։ (Յաստաշխարհութի, ի քաւութի, և ի թողութի մեղաց։) այսինքն։ Եսկու հաւատամ որ ի մէջ սբ եկեղեցւոյ աստաշխարհութիւն խորհուրդ կայ, և ինչ արդիւնքն. և ով որ ի մեղացն ճշմարտասէր՝ զղջայ, և քահանային խոստովանի և արձակումն առնու, կու հաւատամ որ անոր մեղքերուն քաւութի,

և թողութիւն կու լինի, քանի արդեանց ուժովն։

հց. Սենկնէ ընձի և ասա զմեռոտասաներորդ բաժինն հաւատամքին։

պխ. (Ի յարութիւն մեռելոց։) այսինքն. Ես կու հաւատամ, որ 'ի վերջն աշխարհիս ամենայն մարդիք որ մեռած են՝ քանի զօրութիւնն և հրամանաւն յարութիւն կառնեն. և իրենց մարմինն իրենց հոգուն հետ կրկին կու միաւորի՝ ինչպէս որ յառաջքան զմեռանիլն էին. և այս յարութիւս ամէն մարդկանց կու լինի, թէ արդարոց թէ մեղաւորաց. բայց արդարք փառաւոր և գեղեցիկ մարմնով յարութիւն կառնեն, և մեղաւորներն գարշելի և տգեղ մարմնով. և այնպէս ամէնքն կերթան առաջի Քրիստոսի։

հց. Սենկնէ և ասա ընձի զերկոտասաներորդ մասն հաւատամքին։

պխ. (Ի դատաստանն յաւիտենից հոգոց և մարմնոց։) այսինքն. Ես կու հաւատամ՝ որ Քրիստոս դատաստան որ անէ՝ նոյն դատաստանի վճիռն յաւիտենական է՝, և չի վերջանար, և ինչ մարդու որ դժոխոց վճիռ տայ՝ նոյն մարդն յաւիտեան դժոխքն կուգայ. և ինչ մարդու որ արքայութեան վճիռ տայ՝ այն մարդն յաւիտեան յարքայութիւն կուգայ. և այս դատաստանս չէ թէ միայն մարդուն հոգուն վերայ կու լինի, այլ հոգուն և մարմնոյն. զի սէքն որ այժմ միայն իրենց հոգովն յարքայութիւն են, այն ժամանակն հոգով և մարմնով յարքայութիւնը կուգնան, և մեղաւորներն որ այժմ միայն հոգով

'ի գժոխքն են, այն ժամանակն՝ հոգւով և մարմնով գժոխքն կու գնան։ Ինչպէս որ սաղմոսն կասէ. դարձցին մեղաւորք անդրէն 'ի գժոխս։ (Յարքայութիւն երկնից, և 'ի կեանսն յաւիտենականս։) այսինքն. Եւ կու հաւատամ՝, որ երկնային արքայութիւն կայ. որ է տեսանելն զանձ, և երանեցեալ լինիլն. և կու հաւատամ որ նոյն կեանքն է յաւիտենական կեանք, և չի վերջանար բնաւ։

ԳԼՈՒԳ Գ.

Վասն աղօթից, թէ ինչպէս պարտի քրիստոնեայն աղօթք գիտնալ՝ և աղօթել, և աղօթելով յուսալ 'ի յանձ։

հց. Ու զգլխաւոր, և զմեծ հարկաւոր հաւատքիդ բանէրն գիտցար. բայց ասա ինձ, թէ ինչ է նշանն յուսալոյգ 'ի յանձ։

պխ. Այս է, որ իրիկուն առաւօտ, և 'ի ցերեկն ջերմեռանդաբար աղօթք, և աղաչանք անեմ առ ամ՝ մեծ, որ զիս 'ի մեղաց փրկէ. և բարի գործք գործելոյ շնորհք տայ, որ անով կարենամ յարքայութիւն գնալ։

հց. Մեծ և գլխաւոր աղօթքն քրիստոնէին սրտն է։

պխ.

պէս. Հայր մեր ն է, և ողջոյն քեզ Մարիամ։
հց. Սա մէկ անգամ, որ տեսնեմ թէ լաւ կասես։
պէս. Հայր մեր որ յերկինս ես. Սրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո ոչ յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զյանցանս մեր, զոր և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա զմեզ ի չարէ. զի քո է արքայութիւն, և զօրութիւն և փառք յաւիտեանս, ամէն։
Ողջոյն քեզ Մարիամ. լի շնորհօք Տէր ընդ քեզ. օրհնեցեալ ես դու ի կանայս, և օրհնեցեալ է պտուղ որովայնի քոյ Յս. սրբուհի Մարիամ մայր Աստուծոյ, աղօթեա վասն մեր մեղաւորաց. այժմ և ի ժամու մահուանն մերոյ. ամէն։
հց. Ասեկնե՞ ընձի, ինչ ասելէ՞ այս խօսքս. հայր մեր որ յերկինս ես, Սրբ եղիցի անուն քո։
պէս. Ասելէ՞ թէ ո՞վ ես, դու որ մեր հայրն ես, ասեղծելովդ զմեզ, և փրկելովդ զմեզ ահաղանի սէր ջրովն, և ի յերկինսն բնակեալ Հայկու խնդրենք, որ քո անունն միշտ սէր և մաքուր լինի. այսինքն, ամենայն մարդիք միշտ պատուեն և փառաւորեն զքեզ. և զքո պատուիրանեանդն լաւ պահեն, որ անուանքո անունն անոնց խօսքերուն, և սրտերնուն մէջ սէր և մաքուր մնայ։
հց. Ասեկնե՞ ընձի, ինչ ասելէ՞ այս խօսքս. եկեսցէ արքայութիւն քո։
պէս. Ասելէ՞ թէ Տի՞ն ես, կամ խնդրենք, որ դու յայս կեանքս մեզի շնորհք տա-

լով, և յայն կեանքն արքայութիւն տա-
լով՝ միշտ քո ՅՈՒՐՈՒԹԻՆ և թագաւո-
րութիւն դայ մեր վերայ. և դու տիրես
և թագաւորես մեզի. որ չլինի թէ մե-
ղաց մէջ ընկնինք, և անով սատանան
թագաւորէ մեր վերայ՝. և յեռոյ էլ
դժոխոց մէջն տանի զմեզ։

հց. Ասեկնէ ընձի, ինչ ասելէ այս խօսքս
եղիցին կամք քո որպէս յերկինս և
յերկրի։

պխ. Ասելէ թէ, Տէր աՀ, կու խնդրենք
որ քո ՅԱՄ կամքդ և հրամանքդ այնպէս
կատարուի մեր վերայ այս աշխարհիս
մէջ, ինչպէս որ կու կատարուի միշտ՝ի
յերկինս, այսինքն, այնպէս լաւ հնա-
զանդինք քո հրամանացդ և կամացդ
մենք, որ յերկրի ենք, ինչպէս որ կու
հնազանդին հրեշտակներն, և արքերն՝
որ յերկինք են։

հց. Ասեկնէ ընձի, ինչ ասելէ այս խօսքս,
զհաց մեր հանապազորդ տուր մեզ
այսօր։

պխ. Ասելէ թէ, Տէր աՀ, մեր ամէն աւ-
ուր պէտք եղած հացն դու տուր մե-
զի քո ողորմութէն, որ չլինի թէ
սուտ խօսելով, կամ մարդ խաբելով
հաց գտնելու էտէւէ լինինք. և անով
սուտն, և սատանան լինի մեզի հաց
տուող։ Դարձեալ ասելէ՝ թէ մեր
հոգևոր հացն, որ է մարմին և արիւնն
Քրիստի, և սէր քարոզութէ, և խրատու
հացն, ամէն օր տուր մեզի, որ մեր
հոգին քաղցած չմնայ։

հց. Ասեկնէ ընձի, ինչ ասելէ այս խօսքս,
թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք
թողումք մերոց պարտապանաց։

պէս. Ասել է թէ, Տէր ած, ինչ մեղք որ արեր ենք, և անով տանջանաց պարտական եղեր ենք, թող մեզի զայն պարտքն, և մի՛ վրէժխնդիր լինիր մեր մեղացն՝ և մի պատժեր զմեզ. ինչպէս որ մենք ալ մեր ընկերոջն՝ որ մեզի մեկ ջաս մի տուեր է, կամ դէշ խօսք մի խօսեր է, և պարտական եղեր նէ թողութիւն կուտանք, և վրէժ խնդիր չենք լինիր, և չարին չար չենք հատուցաներ։ Եւ աստուծ յայտնի կուլինի՝ որ եթէ մեկ մարդ մի իր ընկերոջն չեր է, և չթողու զանցանքն՝ որ իրեն դէմ եղեր է, անհնար է թէ ած անոր մեղացն ներէ և թողութիւն տայ. և այնպիսի մարդն՝ քանի անգամ որ ասէ զայս աղօթս՝ այնքան անգամ սուտ կուզուրուցէ այ աւաղէ, երբ որ յատուկ ինքն իրեն կաղօթէ, և ոչ ի քերանոց եկեղեցոյ։

Հց. Մեկնէ ընձի. ինչ ասել է այս խօսքս. և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն։

պէս. Ասել է թէ, Տէր ած, երբ որ մեր խորհրդին մէջ չար քան մի գայ, կամ ուրիշ տեղաց որոգայթաւոր բան մի հանդիպի մեզի, քս շնորհքն բռնէ զմեզ, և մի՛ թող տար, որ այն փորձութիւն և որոգայթին մէջ մենք մեզի ձգանք. որ չլինի թէ այն չար խորհուրդն, կամ հանդիպած որոգայթաւոր բանն յաղթէ զմեզ, և ի մեղք ձգէ։

Հց. Մեկնէ ընձի. ինչ ասել է այս խօսքս. այլ փրկեա զմեզ ի չարէ։

պէս. Ասել է թէ՝ Տէր ած. փրկէ և աղատէ զմեզ ի մեղայ, որ է մեծ չար վասն

հոգոյն մերոյ . փրկէ և ազատէ զմեզ նաև այն վնասներուն , որ այնպէս չար է մարմնոյն մերոյ , որ անկից շահ մի չիգար մեր հոգոյն ։

հց. Մեկնէ ընձի , ինչ՝ ասել է այս խօսքն զի քո է արքայութիւն , զօրութիւն , և փառք յաւիտեանս . ամէն ։

պխ. Ասել է թէ՝ Տէր ամ , զայս աղաչանքներս՝ որ քեզ արի , դու կարող ես կատարել . զի թագաւորութիւնն , և ամենայն իշխանութիւն քո է , նաև զօրութիւն , և ամ կարողութիւն քո է . զի ամէն բանի կարող ես . նաև ամ փառք , և պատիւ քեզ կու վայելէ , յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

հց. Մեկնէ ընձի և զողջոյն քեզ մարիամն և նախ զայս ։ Ինչ՝ ասել է այս խօսքս ողջոյն քեզ մարիամ ։

պխ. Այս խօսքս բարև տալոյ խօսք մի է՝ . և ասով մարն այ մարիամայ կուսին բարև կուտանք . քանզի մեք որ իւր որդոյն սէր արընդէք փրկուելենք , անով ճանչեորիպէս եղելենք ամծածնայ . և անոր համար բարև կուտանք նմա . և ինքն ամծածին խիստ կուրախանայ երբ որ մեր բերնէն զայս բարևի խօսքս կու լսէ . քանզի գաբրիել հրեշտակապետն այսպիսի խօսքով բարև տուաւ նմա , և ուրախացուց զնա ։

հց. Մեկնէ ընձի , ինչ՝ ասել է այս խօսքն զի շնորհօք ։

պխ. Ասել է թէ՝ ոմ սէր կոյս , դու ամ կերպ շնորհօք լիք ես , և բնաւ քեզ նման լիութի շնորհաց ունող մարդ չէ եղած . և այն չափ աւելի շնորհօք լցուած ես , որ սոսկ մարդոյն ատկից աւելի

լի շնորք լինիլն հնար չէ. և թէպէտ ուրիշ սրբոց այլ առաքեալ լի շնորհօք, բայց կոյսն որ նաև ՅՍ մայր եղև, զայս շնորքս ուրիշն ոչ ունեցաւ. նոքա համար սՔ կոյսն քան զամենայն ՅԲ և քան զամ հրեշտակ ի վեր է, և աւելի լի շնորհօք:

հց. Աստէնք ընդի, ինչ ասել է այս խօսքս, ՏՐ ընդ քեզ:

պխ. Ասել է՝ թէ Տէրն մեր ՅՍ ՔՍ, որ է ՅԾ մեր՝ միշտ քո հետ է՝ ո՞վ սՔ կոյս. քանզի ինքն կոյսն որ մայր ՅՍ է; իւր որդին միշտ և հանապազ իւր հետ է. քանզի թ. ամիս ի յարգանսին լինելով՝ իւր հետն էր. յետոյ երբ որ ծնաւ ի գրկին լինելով իւր հետ էր. յետոյ երբ որ մեծացաւ ՏՐ մեր՝ ի տունն և ի սեղանն իւր լինելով իւր հետն էր. և յետոյ երբ որ Տէր մեր քարոզել, և շրջիլ սկսաւ, սՔ կոյսն միշտ զնա սիրելով՝ սրտին մէջն ունէր, և անով իւր հետն էր, և յետոյ երբ որ ՔՍ յերկինքն համբարձաւ, և սՔ կոյսն վախճանեցաւ, ՔՍ Տէր մեր յարոյց զնա, և մարմնովն վերափոխեց յերկինքը իւր քով. և այսպէս միշտ Տէրն մեր հետ կուսին մարիամայ եղև:

հց. Ինչ պատճառաւ համար այս խօսքերովս կու գովենք զկոյսն մարիամ:

պխ. Ասոր համար, որ սՔ գաբրիել հրեշտակապետն այսպիսի խօսքերով գովեց զնա, և մենք ալ պիտի որ հրեշտակապետի շարադրած բանովն գովենք զկոյսն: Դարձեալ. մենք շատ կարօտութիւն ունինք շնորհաց, և կուսին մարիամայ լի շնորհօք լինիլն, և Տէրն

իւր հետ լինիլն՝ անոր համար կուլիլ-
լենք, որ զսէր կոյսն 'ի գու�և յողոր-
մութիւն շարժենք մեր վերայ, և անով
վասն մեր բարեխօս լինի. և 'ի յոր-
դոյն իւրմէ մեզ համար շնորքներ առ-
նու և տայ մեզի։

Հց. Սեկնէ ընձի, ինչ ասելէ այս խօսքս,
օրհնեցեալ ես դու 'ի կանայս։

պխ. Ասելէ թէ՝ օվ սրբուհի կոյս, դու
ամենայն կանանց մէջն առաւել օրհ-
նեալ ես. և բնաւ մէկ մեղադրութիւն
քան մի չունիս. քանզի ուրիշ կանայք
թէ զաւակ ծնանէին նէ իրենց կուսու-
թիւնն կորսնցնելով կուլրանային, և
ցաւով կու ծնանէին, և ասով եւայի
անիծից ներքև կու անկանէին, և թէ
զաւակ չծնանէին նէ՝ հին օրինաց մէջ
իբրև անիծած կու համարուէին. բայց
դու օվ սրբուհի կոյս՝ ամէն կողմանէ
օրհնած ես, և գոված, զի կոյս մնալով
յղացար, և առանց ցաւոյ ծնար զոր-
դին այ։

Հց. Սեկնէ ընձի, ինչ ասելէ այս խօսքս.
և օրհնեցեալէ պտուղ որովայնի քոյ
Ցա։

պխ. Սինչև հիմիկ եղած գովքն կուսին,
գաբրիէլ հրեշտակապետէն շարադրած
էր. և այս մէկ գովքս սքն եղիսաբեթ
տուաւ կուսին. և ասելէ՝ թէ օվ
սքն կոյս, այնպէս օրհնեցեալէ պտուղն
որովայնի քոյ, այսինքն, որդին քո
միածին Ցա Քա, որ քան զայն 'ի վեր
օրհնեցեալ բան մի չլինիր. և չէ թէ
միայն այժմ օրհնեցեալէ՝, այլ յաւի-
տենից, և 'ի յամ յաւիտեանս օրհնեցեալ
է քո որդին. քանզի ուժ է, և որդի այ։

Հց.

ԺԳ. Մեկնէ ընձի, ինչ ասել է այս խօսքս. սրբուհի մարիամ մայր այ աղօթեա զմեզ մեղաւորաց, և այլ։

ալխ. Այս խօսքս սէ եկեղեցին շարադրեալ է, որ զայն գովքերն տալուն է տուեալ զայս գովքս ալ տանք, և աղաչենք զնա, որ մեզի համար բարեխօս լինի, և այս գովքս խիստ առատ մեծ գովք է կուսին մարիամու. զի ասել է թէ՝ մի սրբուհի մարիամ, դու այ մայր ես, և այ ծնող ես, և երբ որ այսքան մեծութիւն և փառաց մէջ ես՝ կու խնդրեմք ի քէն որ վասն մեր աղօթես, և աղաչանք անեա առ որդին քո միածին, որ մեր մեղացն թողութի տայ, զի մեղաւոր ենք. և զայս աղաչանքս և բարեխօսութիւս վասն մեր՝ հիմակ ալ արէ, և մեր մահուան ժամանակն ալ արէ. որ չլինի թէ մեղաց մէջ մեռանինք, և դժոխքն գնանք։ Քանզի թէ սէ մեք ալ կու աղօթենք, և սէ տը է որ միշտ աղօթենք, բայց մեղաւոր ենք, և անարժան, ասկայն դու ով սէ կոյս՝ ան մեղ ես, և ամ շնորհօք լի, և այ մայր, նորա համար քո աղօթքն, և աղաչանքն վասն մեր շատ հարկաւոր է՝. և քո աղաչանաց արժանաւորութիւն մեր աղաչանքն և աղօթքն լանի կու լինի առաջն

ԳԼՈՒԽ Դ.

Վասն ասան պատուիրանացն այ, թէ ինչ-
պէս պէտք է քրիստոնէին որ գիտնայ,
և պահէ, որ անով զաճ սիրելն
յայտնի լինի։

հց. Քրիստոնէին զաճ սիրելոյ
նշանն օրէն է։
պխ. Զայ ամ պատուիրանքն, և
հրամանն պահելն է՝։
հց. Ոգին են այ գլխաւոր պա-
տուիրաններն, և հրամանքն։
պխ. Տասնաբանեայ պատուիրանքն են, զոր
աճ տուաւ 'ի ձեռն մովսէսի մարգա-
րէին։
հց. Ասա ինձ կարգաւ, որ տեսանեմ թէ
լաւ գիտես։
պխ. Առաջին այս է. Ես եմ Տէր Աճ քո.
մի՝ ունիցիս զայլ աճ առաջի իմ։
Երկրորդն այս է. Մի՝ առնուցուս զա-
նուն այ քոյ ընդունայն։
Երրորդն այս է. Յիշեա՛ սրբել զօր շա-
բաթուն, այսինքն զտօնս։
Չորրորդն այս է. Պատուեա զհայր քո,
և զմայր, զի երկայնակեաց լինիցիս 'ի
վերայ երկրի։
Հինգերորդն այս է. Մի՝ սպանանես։
Վեցերորդն այս է. Մի՝ շնար։
Եօթներորդն այս է. Մի՝ գողանար.
Ութերորդն այս է. Մի՝ սուտ վկայեր։
Ինն-

Իններորդն այս է. Մի՛ ցանկար կնոջ ընկերի քոյ։

Տասներորդն այս է. Մի՛ ցանկար ընչից ընկերի քոյ, և մի՛ ո և իցէ իրաց որ նորա է։

հց. Սեկնէ ընձի, ինչ ասել է այս առաջին պատուիրանի խօսքն. Ես եմ Տէր Աստ քո. մի՛ ունիցիս զայլ ոչ առաջի իմ։

պխ. Զայս խօսքերս՝ որ հրամանք, և պատուիրանք են՝ բոլորն ոչ խօսեցաւ մեզ մարգարէին, և կամեցաւ որ ոչ մարդիք աշխարհիս գիտնան զասունք, և պահեն։ Եւ առաջին հրամանն որ հարցուցիր ընձի, այս մեկնութիւնս ունի, որ ոչ կասէ մեզի, թէ ես եմ քո Տէրն, և ոչն, այլ ուրիշ Տէր և ոչ մի՛ ունենար յինէ՝ իզատ. և սատուկ մեզ պարտական կուս լինիմք, որ յամենայն ատէ միայն զոչ սիրեմք, և զուրիշն ոչ հաւատար, կամ ոչ 'ի վերայ չսիրեմք, և թէ սիրեմք, յայն ժամանակն ուրիշ ոչ ունեցած կուս լինիմք. նորա համար է՝ զի ապահնեալն որ զարծաթն ոչ հաւատար կուս սիրեն, կուապաշտ կուս կոչին։ Եւ մեր բոլոր յոյսն՝ միայն յոչ պիտի լինի. զի նա միայն է մեր Տէրն, և ինչ որ ոչէտք է մեզի թէ հոգևոր, թէ մարմնաւոր՝ նա կուտայ, և անկից՝ պիտի յուսանք առնել. և ոչ որ այսպէս չի յուսար յոչ, այլ իր բոլոր յոյսն կամ 'ի արծաթն կուգնէ, կամ 'ի իւր ուժն և 'ի զօրութիւն կուգնէ՝ այնպիսին ուրիշ Տէր և ոչ ունեցած կուս լինի. և այս ոչ հրամանիս հակառակ կուգտնի։ Դարձեալ

ուրիշ

ուրիշ աճ մի՛ ունէնար ասելոյն՝ կու
հրամայէ որ կուռք չպաշտուի։ և պա-
տանեցուն առասպել բանէրուն ան-
կաղ չլրնի, որ կասեն թէ այսօր չբա-
նինք, որ մինէրն մեր լաթերն չկարեն։
և այլ ուրիշ ասող նման առասպելներ,
որ կապաշտուիթէ ժամանակին մեա-
ցած սուտ բաներ են։

հց. Մեկնեմ ընձի, ինչ ասելէ՝ այս երկ-
բորդ պատուիրանիս խօսքն։ մի՛ առ-
նուցուս զանունն այ քոյ ընդունայն։

պա. Ասելէ՝ թէ դատարկ, և անշահ տեղն՝
կամ մեղադրելի և վատ զրուցատուու-
թիւն մէջն այ անունն մի՛ առնուր ի բե-
բանդ։ զի այ անունն մեծ է՝ և սէր,
նորս հաստատ ճշմարիտ, շահական, բա-
րի և սէր խօսքերու և դործքերու մէջն
պիտի յիշենք, և բերընիս առնենք։
Եւ այսպէս ով որ բարկութեան մէջ,
կամ ծաղրաբանութեան մէջ, կամ ան-
պարկեշտ, և խեղճացնոր խօսքերու մէջ
զայ անունն բերանն առնու և յիշէ՝
այս պատուիրանիս հակառակող կու
լինի։ Նաև սուտ տեղն երդում անող-
ներն՝ այս պատուիրանիս դէմ կու մե-
ղանչեն։ քանզի դայ անունն սուտ խո-
սից մէջն բերընելն կառնուն, և իրենց
սուտութիւն վկայ կու բռնեն գաճ, որ է
մեծ մեղք։ Բայց երդումն՝ երբ ճշմա-
րիտ բանի մի համար լինի, և այն բանն
բարի և արդար բան լինի, և մեծ հար-
կաւորութիւն կենայ երդումով հաստա-
տելոյ, յայն ժամանակն մեղք չէ։ քան-
զի այսպէս լինելով՝ ճշմարիտ, արդար,
և խոհեմ կու լինի երդումն։ և այ ա-
ծունն՝ ճշմարիտ, արդար, և խոհեմ

բա-

քանի մէջ կույիշի, և վկայ կուկոչի։

հզ. Ասկնէ ընձի, ինչ ասելէ այս երրորդ պատուիրանիս խօսքն. Յիշեա սրբել զօր շաբաթուն, այսինքն, ըզտոնս։

պխ. Ասելէ, յիշեա և միտքդ բեր, որ զտոն օրն, և զկիրակի օրն սէր պահես, այսինքն, մարմնաւոր գործք չանես, այլ աղօթից և սէր բաներու հետ լինելով սրբութիւն անցնես զայն օրն, այսինքն, պատարագ տեսնելով, հայր մեր՝ ողջոյն և վարդապան ասելով, և այլ ուրիշ ջերմեռանդական աղօթից հետ լինելով, քարոզն ունկն դնել դնալով, և քրիստոնէական վարդապետութիւն օրվէլու, և օրվեցնելու հետ լինելով. և ոչ թէ այսօր կիրակի և տոն է ասելով խաղ, և պարի, ուտելու և խմելու, մարմնաւոր հեշտութիւն, և ծաղրաբանութիւն հետ լինելով, քանզի այսպէս անելն մեղք անցնելէ զսէր օրն տոնին։ Եւ գիտնալ պէտք է, որ ամէն տոն օր, և կիրակի օր ամենայն քրիստոնեայ պարտական է զսէր պատարագն տեսանել, զի եկեղեցին Քրիստի զայս հրամանս արեր է. և ինչ մարդ որ կարէ գնալ չեկեղեցին, և տեսանել զպատարագ, բայց կամ ծուլութի կանէ, և կամ չի ուզեր, և սատնց համար չի գնար պատարագ տեսնել, կուտեղանէ մեծ մեղք։

հզ. Ասկնէ ընձի, ինչ ասելէ այս չորրորդ պատուիրանիս խօսքն։ Պատուեա զհայր քո, և զմայր, զի երկայնակեաց լինիցես ի վերայ երկրի։

պխ. Ասելէ, թէ որդիքն պիտի որ երեք բանով պատուեն՝ և մեծարեն զերեսոց ծնողացն հնազանդելով, երբ հրամանն հակառակ չէ այ. երկրորդ 'ի ծնողացն ամբչնալով՝ և պատկառելով. երրորդ իրենց ծնողացն ծառայութիւն անելով, և օգնութիւն հասանելով։ Եւ երբ որ ասունք անելով պատուեն զերեսոց ծնողքն նէ՝ երկայնակեաց կու լինին, այսինքն, շատ կայրին աշխարհս վերայ, և նոյն շատ տպրելովն շատ բարեգործութիւն կանեն՝ և արքայութիւն արժանի կու լինին։ Եւ ինչ որդի որ իւր ծնողացն չի հնազանդիր, կամ լրբութիւն կանէ, և ծնողացն յերեսն կու վազէ, և իւր աբրցէն եկած ծառայութիւն և օգնութիւն չի աներ իւր ծնողացն, այնպիսին շատ սնիծից ներքև կու անկանի, և այս ամենայն հրամանիս հակառակող կու լինի։ Եւ ինչպէս մարմնաւոր ծնողաց, այսպէս և հոգևոր ծնողացն, որք են մեծաւորքն և ուսուցիչքն՝ պէտք է պատիւ տալ, հնազանդելով և պատկառելով, ինչպէս որ վերն ասացինք։

հց. Ասեկնէ ընձի, ինչ ասելէ այս հինգ երորդ պատուիրանիս խօսքն, մի սպանաներ։

պխ. Ասելէ, թէ մարդ մի՝ սպաններ, ոչ ձեռքովդ, ոչ բերնովդ, և ոչ սրտովդ։ Ձեռքով սպաննելն այն է, ինչպէս որ արընտեր մարդիքն կու սպաննեն զիրենց ընկերն, և 'ի կենաց կու զրկեն, որ է մեծ անօրէնութիւն։ Բերանով սպաննելն այն է, ինչպէս որ բամբասող

ասող մարդիքն բամբասելով զընկերն՝ զնորա անունն կարուն , և լսողներուն մոտ մէջն՝ զընկերին բարի համբաւն կոչնչացուցանեն : Իսկ սրտով սպանանելն այն է , ինչպէս որ ատելասէր մարդիքն զիրենց ընկերն իրենց սրտին մէջ ատելով կու սպաննեն՝ և չար կու կամին ընկերին . և երբեմն մեռնելն ալ կու կամին , կամ կուրնալն , և կաղանալն , և աղքտնալն . և ատելցմով իրենց սրտին մէջ՝ չէ թէ մէկ անգամ , այլ շատ անգամ կու սպաննեն զիրենց ընկերն , որ այ պատկեր է , և քնի արքնելն գնռեած : Նորա համար սբ առաքեալն Յօհաննէս կասէ , թէ ամենայն որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է :

հց. Ասենք ընձի , ինչ ասելէ այս վեցերորդ պատուիրանիս խօսքն , մի՝ շնար:

պատ. Ասելէ , թէ մարմնոյդ չար ցանկութեն մի՝ հետևիր , օտար կնոջ հետ մի՝ լինիր , ոչ գործով , և ոչ սրտովդ ցանկանալով . քանզի մէկ մարդ մի թէ պէտ գործքով զայն չար , և պիղծ խառնակութեն չանէ , բայց եթէ իւր կամաց հաճանութեն սրտով կու ցանկայ խառնակութեն, այսպիսին շնացեալ և պոռնիկ կու համարուի , և կու մեղանէ այս հրամանիս դէմ. նորա համար՝ ինչ կերպով և իցէ, ամ՝ գեղ ցանկութեն մեղքեր՝ այս ամծային վեցերորդ հրամանովս կու արգելին :

հց. Ասենք ընձի , ինչ ասելէ այս եօթներորդ պատուիրանիս խօսքն . մի՝ գողանար :

պատ. Ասելէ, թէ այն բանն՝ որ ուր իշնին է տի-

տիրոջն կամքին դէմ մի՛ առնուր, թէ ծածուկ, թէ յայտնի. քանզի թէ ծածուկ առնուս՝ գողութիւն է. և թէ յայտնի առնուս՝ աւազակութիւն է. նոր համար պէտք է՝ որ ամէն մարդ իւր ունեցածոյն ապրելու բաւական լինի, և թէ չունի ապրելիքն նէ՝ մուրայ, և գողութիւն չանէ, զուրիշի ապրանքն գողնուկ վերցնելով։ Եւ այն մարդիքն՝ որ իրենց մշակներուն, և աշխատաւորաց վարձն չեն վճարեր, կամ պակաս կու վճարեն, անոնք ալ այս պատուիրանիս դէմ կու մեղանչեն. և ամաչակ կանին. քանզի յայտնապէս զուրիշի դրամն վար կու դնեն։ Դարձեալ այն մարդիքն որ ուսի տրի մէջ կու խաբեն զընկերն, և զդէշ բանն աղէկի տեղ կու ծախեն, և կամ եթէ գնողն չիգիտեր զդին ըղդակին՝ նենգութիւն անելով կու խաբեն, և սուտելի գնով կու ծախեն, այս հրամանիս դէմ կու մեղանչեն, և գողութիւն անող կասին. զի ծածուկ կառնուն զուրիշի դրամն ընդդէմ կամաց տիրոջն։ Քանզի նոյն խաբեւոն՝ չէր կամիր բնաւ զիւր խաբելին, և այնպիսի սուտելի դին տալ, և կամ զդէշն՝ աղէկի գնով առնուլ։ Դարձեալ. այն արուեստաւորներն, որ իրենց տրված արծաթէն, կամ ոսկուն, կամ կտաւէն, կամ մանծէն, և կամ կլաստոնէ կու աւելցնեն, և վար կու դնեն, և տիրոջն կասեն թէ ահա որ չափ որ տուիր ամէնն գնաց այս շինած բանիս վերայ, ասոնք ալ յայտնապէս՝ գող են, և ամ գող վերգողցած բանն պիտի յետ տայ տիրոջն,

եթէ

եթէ ունի, որ ասպա թէ կարենայ իւր դողութեան մեղքէն արձակիլ՝ ի քա-
հանայէն։

հց. Ասկնէ ընձի, ինչ ասել է այս ուխ-
տերդ պատուիրանիս խօսքն. մի՛ սուտ վկայեր զընկերդ քումմէ։

պա. Ասել է թէ քոյ ընկերոջն վերայ սուտ վկայութիւն մի՛ տար, ոչ դատաս-
տանի մէջ, և ոչ սրտիդ մէջն, և ոչ ուրիշ մարդկանց առջև. նաև ասել է, թէ բնաւ սուտ խօսք մի՛ խօսիր. և կամ կարծեօք դիտցածդ իբրև ճշմա-
րիտ և ստոյգ դիտցած մի՛ խօսիր, թէ քոյ վերայ լինի խօսքդ՝ թէ ընկերոջդ վերայ, և թէ ուրիշ բանի վերայ։

հդ. Ինչ ասել կու կամիս այն խօսքովն՝ թէ ընկերոջն վերայ՝ սրտին մէջն ալ սուտ վկայութի պիտի չտրէի։

պա. Այսպէս կու կամիմ ասել, թէ ինչպէս դատաւորին առաջև դատաստանի մէջ ընկերոջն վերայ սուտ վկայութի տալն մեծ մեղք է, այսպէս այլ՝ երբ որ մեր ընկերն մէկ գործք մի ունի, և բան մի կանէ, որ բարի կողմն ալ կարէ մեկ-
նուիլ, և չար կողմն ալ, եթէ մենք զայն պիսի գործքն չար կողմն մեկնենք՝ և մեր սրտին մէջ դնա դատենք, և չար համարինք նէ, նոյնն սուտ վկայութիւն տալէ մեր սրտին մէջ։ Քանզի ստոյգ չենք գիտեր՝ թէ նա զայն չարն, և մեղքն ունի, այլ մեք՝ ի չար կողմն մեկ-
նելով զնորա գործքն՝ դնա մեզի չար կերևցնենք. և այս է՝ յայտնի սուտ վկայութի։ Եւ եթէ զայսպիսի սուտ վկայութիւն՝ մեր ընկերոջն վերայ սր-
աէրնուս մէջ տալուն էտև, մարդ-

կանց առաջինն ալ որ խօսինք, այն ժամանակն կու լինի սուտ վկայութիւն տալ ընկերոջն վերայ ի մէջ մարդկանց։ Եւ գիտնալ պէտք է, որ ինչպէս պարզ սուտ բան մի ընկերոջն վերայ վկայելն սուտ վկայութիւն տալ է, այսպէս ալ կարծեաք գիտցածն իբրև ստոյգ վկայելն, և կամ զբանն որ ի բարի կողմն կարէ մեկնիլ, ի չար կողմն մեկնելով վկայելն սուտ վկայութիւն տալ է։ Եւ ամենայն մարդ որ ի ստէն զէրզան և զկարծիքն չի լուեցուցաներ, և զնկերին բանն ի չար կողմն մեկնելու չի յետ կենար, կու մեղանէ ընդդէմ այս ճաշային հրամանիս։ Եւ այլ ուրիշ մեծամեծ մեղքերու մէջ կանկանի, այսինքն, բաղում մարդկանց դայթակղութիւն, և կործանման պատճառ կու լինի։ որ է՝ յոյժ ծանրագոյն մեղք։

Հց. Մեկնէ ընձի։ ինչ ասելէ այս ինն երորդ պատուիրանիս խօսքն։ մի՛ ցանկար կնոջ ընկերի քոյ։

պէս. Ասելէ թէ մի՛ ցանկար քոյ ընկերի կնոջն՝ ասելով թէ ահ ինձ պիտէր, զի լաւէ։ և ընչու իմ ընկերոջս հանդիպեր է։ Նաև ասելէ՝ թէ քո կամոց հաւանութիւնն չար ցանկութիւն մի հայիր ի կին ընկերիդ՝ և մի՛ սիրտ խորհրդով քո կամուդ մտածմունք առներ օտար կնոջ վերայ։ զի որպէս դրդիչովք չնաչն, և պոռնկիլն է մեղք, այսպէս և մտոք խորհիլն զայն՝ երբ լինի կամքին հաւանութիւն՝ է՝ մեղք։

Հց. Մեկնէ ընձի, ինչ ասելէ այս տասներորդ պատուիրանիս խօսքն։ մի՛ ցանկար ընչից ընկերի քոյ, և մի՛ ո

և լցէ իրաց որ նորա է՝ ։

պես. Ասել է, թէ երբ քո ընկերն լաւ բաներ ունի, կամ լաւ տուն, և շատ ըզգակ՝ դու մի՝ նախանձիր անոր, և մի՝ ասեր թէ ահա ինձ պիտէր այն ըզգակն, այն տունն, և այն բաւականն, ընչու անոր հանգիստեր է, և ինձի չէ ։ Քանզի այնպէս սիրել պարտինք զմեր ընկերն՝ որ երբ նա լաւ բան մի ունենայ՝ այնպէս խնդանք նորա ունենալուն վերայ, ինչպէս որ կու խնդայանք՝ եթէ մենք ունէնայանք ։ Դարձեալ. ինչպէս գործքով գողնալն զուրիշն ունեցածն է մեղք, այսպէս և ցանկալն ուրիշի ունեցածին այն մտօքն, որ թէ կարենարնէ կու գողանար՝ է մեղք ։ Եւ այսքանս բաւական է վասն տասն պատուիրանացն

ԱՄ ։

ԳԼՈՒԽ Ե.

Վասն եօթն խորհրդոց եկեղեցոյ, զոր քրիստոնեայն պարտի դիտանալ և ճանաչել, որ ջերմեռանդութիւն ընդունի։

հց. Իսե՞ս թէ քանի են Խորհուրդք եկեղեցոյ. ասա՛ մէկ անգամ՝ որ տեսնեմ։

պխ. Եօթն են խորհուրդք եկեղեցոյ. և ասոնք են. մկրտութիւն, դրոշմ. հաղորդութիւն. ապաշխարութիւն. վերջին օծումն. կարգ քահանայութեան, և պսակն։

հց. Մեկնե՛ ընձի՝ թէ ինչէ՞ մկրտութեան խորհուրդն, և քանի՞ բանով կու կատարի։

պխ. Մկրտութիւնն մէկ խորհուրդ մի է՝ որ անով մինչ քրիստոնեայ կու լինինք, և Քա՛ Տէր մեր հաստատեր է զայս խորհուրդս, որ ասով մինչ ի գերութենէ սատանայի ազատինք, և որդեգիր որդի լինինք հօր ա՛յ. Եվ չորս բանով կու լինի մկրտութիւն։ Մէկ որ ուրիշ մարդ մի պիտի լինի մկրտողն. զի նոյն մարդն ինքն զինքն չիկարեր մկրտեր։ Երկրորդ՝ որ բնական ջրով պիտի լինի մկրտութիւնն. զի արհեստիւ շինած ջրով մկրտութիւն չի լինիր։ Երրորդ մկրտելինի. այսինքն, լուանալինի մկր-

մկրտողն պիտի ասէ զայս խօսքս, թէ
ես մկրտեմ զքեզ յանուն հօր և որդ-
ւոյ և ոգւոյն սրբոյ, ամէն. կամ թէ
զայս խօսքս որ նոյն է. մկրտի ծառայս
այս 'ի ձեռն իմ յանուն հօր և որդւոյ
և ոգւոյն սրբոյ. զի առանց ասելոյ
պիտին այս երիցս կերպ բանիցս մկրտու-
թիւն չի լինիր։ Զորրորդ՝ մկրտողն միտք
և դիտաւորութիւն մկրտելոյ պիտի ու-
նենայ. քանզի եթէ մէկ մարդ մի զմէկն
այն մտքովն, և դիտաւորութիւնքն լուա-
նայ ջրով, և ասէ թէ ես մկրտեմ զքեզ
յանուն հօր և որդւոյ և ոգւոյն սրբոյ,
որ անով ծաղք անէ զայս խորհուրդս.
և կամ թէ մէկի մի պատմելու, և ցոյց
տալու համար անէ և ցոյց տայ՝ և ոչ
թէ մկրտութիւնն համար, այն ժամանակն
մկրտութիւն չի լինիր. զի մկրտողն միտք
և դիտաւորութիւն չունէր մկրտելոյ.
այլ ծաղք անելոյ, և կամ մէկ չգիտցողն
մի ցոյց տալու համար արաւ։ Եւ հա-
մար ով որ մկրտութիւն կանէ՝ միտք և
դիտաւորութիւն պիտի ունենայ թէ այն
պէս կու մկրտէ, ինչպէս որ Քրիստոս
եղ, և հաստատեց՝ և եկեղեցին քրիս-
կու մկրտէ։

հց. Մեկնէ ընձի թէ ինչ է դրոշմի խոր-
հուրդն, և ինչով կու լինի։

պաս. Դրոշմն մէկ խորհուրդ մի է, որ անով
մենք որ մկրտութիւնքս քրիստոնեայ ենք
եղեր՝ կու զօրանանք և հոգևորապէս
կու ուժգնանք, և կու ընդդիմանանք
սատանայի փորձութիւնքս. և լաւ համար-
ձակ և առանց վախելու կու դաւա-
նինք զհաւատն Քրիստոսի անօրինաց և ան-
հաւատից առաջին, որ զմեզ վերհաւա-
տայն

տոյն Քրիստոսի կու հաղորդեն, և կու չարչարեն։ Եւ այս խորհուրդս ասով կու լինի. որ գրոշմողն զձեռաւոն մկրտեալ մարդուն մեռոնով կու օծէ. և օծելովն ինչ խօսք որ սահմանեալ է ասելու զայն կու ասէ. և գիտաւորութիւն ունի գրոշմելոյ. և այն որ կառնու զգրոշմ, պիտի որ յառաջ մկրտեալ լինի. վասն զի որ չէ մկրտեալ՝ նորա վերայ ուրիշ խորհուրդ եկեղեցւոյ չի կատարելիր։

հց. Մեկնէ ընձի, ինչ է հաղորդութեան խորհուրդն. և որո՞վ կու լինի։

պէս. Հաղորդութիւնն մէկ սքի խորհուրդ մի է, որ իր մէջն ճշմարիտ մարմին և արիւն Քրիստոսի կու պարունակի։ Դրսեն կու երևի հաց, և գինի, բայց ոչ հաց և գինի, այլ ճշմարիտ մարմին և արիւն Քրիստոսի. և այս սքի խորհուրդս ասով կու լինի, որ քահանայն պատարագելենին 'ի վերայ հացին՝ առէք կերէք այս է մարմին իմ կասէ, և 'ի վերայ գինոյն՝ արբէք 'ի սմանէ ամենեքեան այս է արիւն իմ կասէ, և ունի դիտաւորութիւն այնպէս պատարագելոյ՝ ինչպէս որ Քրիստոս պատարագեց, և սքի եկեղեցին Քրիստոսի կու պատարագէ։ Եւ մենք որ քրիստոնեայ ենք, պարտինք այս սքի հաղորդութեան ճշմարիտ երկրպագութիւն տալ. և հաւատալ թէ է ճշմարիտ մարմին, և արիւն որդւոյն այ. և ոչ թէ իբրև նշան կամ պատկեր։ Եւ քահանայն երբ որ կու պատարագէ՝ նոյն մարմին և արիւնն Քրիստոսի կու պատարագէի. այսինքն, կու ընծայի, և կու նուէիրի ամենասքի երբ

բորդութեան չարս բանի համար. նախ՝ 'ի գովութի անուան ամենասքանչելագոյնութեան։ Երկրորդ՝ առ 'ի շնորհակալ լինիլ զայ։ Երրորդ՝ առ 'ի քաւութի և 'ի թողութի մեղաց մերոց։ Չորրորդ՝ առ 'ի ընդունումն շնորհացն այ 'ի հոգին մեր։ Զի մենք քան զայս՝ այլ ուրիշ արժանաւոր բան չունինք այ տալու և նուիրելու, որ անով ինքն գովի, և զմեր մեղքն թողու։

Հին օրինաց մէջ ղուրպան կանէին՝ և այ կու նուիրէին՝ որ անով այ անուանն գովութի կու լինէր, և իրենց մեղաց թողութեանն նշանակութի։ Բայց նոր օրինացս Քրիստոս այ կոչեցաւ, և այնպէս սահմանեց, որ այլ ղուրպան չանենք, զի անոնք իրենց ուժովն մեղք չէին կրնար թողուլ. այլ ղուրպանին տեղն զիւր մարմին և արիւն նուիրենք ամենասքանչելագոյնութեանն, և անով մեր մեղացն ճշմարիտ թողութի գտանենք, և մեր հոգին իրեն պէտք եղած շնորհք ներսն առնու յայ։ Եւ այս պատճառիս համար Քրիստոս մեր քահանայութեան կարգն հաստատեց. և հրաման տուաւ որ քահանայքն հացին վերայ, այս է մարմինիմ, ասելով, գինուն վերայ, այս է արիւն իմ, ասելով, հացն 'ի մարմին իւր փոխուի, և գինին 'ի յարիւն. և այնպէս նուիրուի և մատուցանի ամենասքանչելագոյնութեանն 'ի գովութի անուան իւրոյ՝ 'ի քաւութի մեղաց մերոց, և 'ի ընդունումն շնորհացն այ 'ի հոգին մեր։ Եւ յետ նուիրելոյն այ, նաև ճաշակի նոյն մարմինն և արիւնն Քրիստի 'ի քահանայէն որ պատարագեց, և

յայլոց արժանաւորաց , որ անով Քրիստոսի մեզ բնակի , և ամենայն ցեղ շնորհօք զմեր հոգին լնու , և մենք ի Քրիստոս բնակիցք , և նորա արդեանցն մասնակից լինիք : Եւ այս խորհուրդս նոր հաստատ հաղորդութիւն կասի , այսինքն , մասնակցութիւն, զի ասով Քրիստի բարեացն և արդեանցն հաղորդակից , և մասնակից կու լինիք :

հց. Քրիստոնեայն տարին քանի՞ անգամ պիտի հաղորդուի :

պխ. Առաքելոց ժամանակի քրիստոնեայքն այնքան սէր էին , և առանց մեղաց կու կենային , որ ամէն օր կու հաղորդուէին բայց այժմ որ այն ջերմեռանդութիւնն չկայ , դոնեայ ամիսն մէկ քրիստոսն օրերն լաւ է՝ որ հաղորդուի քրիստոնեայն . և թէ այս այլ որ չկարենայ դոնեայ ամէն տաղաւարի հաղորդուիլ ոչ-տոքէ . և որքան մէկ մարդ մի լաւ սէր կենայ և շատ անգամ հաղորդուի՝ այնքան լաւ է , զի շատ շնորքներ կառնոյ հաղորդուելովն ի մարմնոյ , և յարենէն Քրիստի : Եւ գիտնալ պէտք է զի ի սէր եկեղեցոյն այս հրամանս կայ որ քրիստոնեայ եղօղն դոնեայ դոնեայ զատիկ զատիկ հաղորդուի , և եթէ մէկ քրիստոնեայ մի զայս ալ չանէ , և տարին անցնի որ ինքն չէ հաղորդուեր կու մեղանչէ ընդդէմ հրամանի եկեղեցւոյ , և բանադրանաց արժանի կու լինի :

հց. Սեկնէ ընձի , ինչ է ապաշխարութիւն խորհուրդ , և որ՞ով կու լինի :

պխ. Ապաշխարութիւն մէկ խորհուրդ մեր՝ որ անով մեր մեղքերուն՝ որ մկրտու-

թիւն

թէ յետքը դործելենք թողութիւն կու-
լինի. և երբեք բաժին ունի այս խոր-
հուրդս. մէկն է զղջալն 'ի մեղքէն, մէ-
կալն է խոստովանիլն զմեղքերն. և այլ
մէկալնէ քահանային դրած ապաշխա-
րանքն կատարելն։ Նորա համար ով
որ զայս սէր խորհուրդս կու կամի որ իր
վրա կատարուի, պիտի 'ի մեղքերուն
լաւ զղջայ. և զմեղքերն իր բերնովն
խոստովանի քահանային. և քահանայն
ինչ ապաշխարանք որ դնէ իւր վերայ
կատարէ։ Եւ այս ապաշխարութեան
խորհուրդս շատ հարկաւոր է՝. զի ա-
սով կարենք մեր մեղացն թողութիւն գտ-
նել. նորա համար պէտք է քրիստո-
նէին, որ այնքան անգամ խոստովանի,
որքան անգամ կուտեսնէ զինքն որ մա-
հուշափ մեղաց մէջէ ընկեր. նա և
երբ հեռու ճանապարհ դնալու լինի,
կամ ծովն մտնելու, պիտի խոստովա-
նի, և շատ առաւել հարկաւոր է՝ հի-
ՀանդութԵ ժամանակն՝ քանի որ լաւ
խելքն 'ի վրան է կատարեալ խոստով-
անութի անել, և հաղորդելի՝ և զինքն
պատրաստել առ մահն 'ի փառս այ։

հդ. Երբ որ այսքան հարկաւոր է այս խոր-
հուրդս՝ մեկնէ ընձի լաւ տեղն իտեղն,
թէ ինչ է զղջումն, և քանի՞ կերպ կու
լինի։

պխ. Զղջումն մէկ ցաւ մի է, և կսկիծ մի,
որ անով մարդն կու ցաւի, և կու կսկ-
ծայ՝ թէ ընչու մեղք գործեցի, և
այսպիսի ցաւն ու կսկիծն, թէ միայն
զնոյն սիրելուն համար է, և միայն ան-
կից կուգայ իրեն այս ցաւս, և կսկիծս
իւր մեղաց վերայ՝ այն ժամանակն զզղ-

զուսն խիստ լաւ է , և կատարեալ կասէ ։ Բայց եթէ այնպիսի ցաւն , և կսկիծն միայն զնա՝ շատ սիրելուն չբգայ, այլ նաև ասկից կուգայ թէ մեղքին յարքայութիւնն կու զրկուի , և դժոխքն կերթայ , այն ժամանակն զղջումն թէ աչէտ բաւական զղջումէ , բայց մեկ. լին սէտ կատարեալ չի ասիր ։ Ահա այսպէս երկու ցեղ զղջումն . մէկն կատարեալ կասէ , որ միայն յայ սիրոյն կուգայ . և այնպէս է , որ թէ մեղքն զինքն դժոխքն ալ չտանէր , և յարքայութիւնն ալ չզրկէր նէ՝ ինքն տակաւին կու ցաւէր իր մեղացն վերայ , միայն այս շանիս համար՝ որ այ հրամանին դէմ բան է արեր . և յայ սիրոյն յետոյ կեցեր ։

Եւ մեկալ զղջումն բաւական կասէ . զի նա ալ թէպէտ յայ սիրոյն կուգայ , բայց կատարեալ չի ասիր , զի իւր արքայութիւն դնալու սէրն , և դժոխքն տէն ալ սրտին մէջ կայ , և անոնք ալ կենալով , ասա թէ կու շարժի սիրոն՝ զզջումն և՝ ցաւ վասն մեղայ ։ Այն առաջին ասած զզջումն որ կատարեալ կասի՝ այնպէս է , որ թէ մեկ մարդ մի՝ այն կերպովն զզջումն ունենայ նէ քահանայ չգտնուած ատենն՝ այն զզջմամբն կրնայ մեղացն թողութիւն գտնել ։ Բայց մեկալ զզջումն որ բաւական կասի , անով՝ առանց խոստովանելոյ քահանայի , և առանց արձակումն առնելոյ՝ մեղացն թողութիւն չ՝ ընիր ։ Ասոր համար խիստ հարկաւոր է , որ քրիստոնեայն հոգ տանի խոստովանելոյ քահանայի . մանաւանդ

Ի ժամանակի մահուանն զի չենք դիտեր թէ ունինք ճշմարտապէս զայն քան մեծ սէր, որ մեր զղջումն միայն ի սիրոյն ՅԻ գայ, և ոչ նաև ի յահէն դժոխոց։ Եւ դիտանալ պէտք է. որ թէ մեկ մարդ մի կատարեալ զղջումն ունենայ, և քահանայ կու գտնի, որ կարէ զինքն արձակել, և չկամենայ խոստովանիլ՝ թէ ես կատարեալ զղջում կանեմ, և չեմ կարօտ խոստովանելոյ քահանայի՝ այնպիսին Քէնի օրինացն հակառակ է՝ և նոր մեղաւք կու մեղանչէ, և թողութի չի գտներ։ Քանզի կատարեալ զղջումն այն ժամանակն ինքն միայն կու թողու զմեղքն, երբ որ քահանայ չի գտնուիր։ Դարձեալ մարդ մի որ կատարեալ զղջումն արաւ, և քահանայ չի կար որ խոստովաներ, յետոյ երբ որ գտնի քահանայ պիտի խոստովանի զիւր մեղքերն, թէպէտ նոյ վերայ կատարեալ զղջումն արերէ։

հց. Մեկնէ ընձի, թէ ինչէ խոստովանութիւնն։

պա. Խոստովանութիւն այն է՝ որ մեկ մարդ մի իւր մեղացն վերայ ցաւելով և զղջալով զիր գործած մեղքերն կասէ քահանային, և կու յուսայ յոնՅ՝ թէ անով իւր մեղացն թողութի կու լինի։ Քանզի քահանայն լսելուն էտև զամէն մեղքերն, երբ որ արձակում կուտայ, ասելովն՝ թէ արձակեմ զքեզ ի մեղացդ, այն առու�՝ մեծ ազնոյն մեղքերն կու թողու, և այլ չի յիշեր։

հգ. Ինչէ կերպով պէտք է խոստովանիլ։

պա. Պէտք է որ նախ մարդն զնածային պատուիրաններն լաւ միտքն բերէ, և

քանէ զինքն , և տեսանէ թէ որ պա-
տուիրանին դէմ մեղանչեր է , և անով
լաւ մի զեւբ մեղքերն իմանայ ու միտքն
առնէ . և ապա խոնարհ գլխով , և
պարկեշտութիւն չոքի առաջի քահանային,
և ցածկիկ ձայնով ասէ տեղն 'ի տեղն
զեւբ մեղքերն քահանային , և ուրիշ
մեղքերն չեւսի , և իր մեղացն ընկերն
չայտնէ . այլ միշտ զեր մեղքն խոս-
սի , և ուրիշն գանկատ չանէ , թէ
այս ինչ մարդ պատճառ եղաւ որ ես
մեղք գործեցի : Եւ բնաւ պիտի որ
վասն ամօթոյ , և կամ վասն երկիւղի
մեղք մի չպահէ . այլ ինչ մեղք որ
ունի զամենն խոսի , որ կարենայ թող-
ղութիւն գտանել իւր մեղացն :

Հց. Ինչ է ապաշխարանքն :

պխ. Ապաշխարանքն այն է , որ քահանայն
զեւբ խոստովանորդուն մեղքերն լսե-
լուն յետքն՝ այն մեղքերուն պատիժ
քաւելու համար մէկ քանի օր աղօթք
անել , կամ ծոմ կենալ , կամ պաս կե-
նալ , կամ ողորմութիւն տալ պարտք կո-
դնէ վրան . և խոստովանորդին պար-
տական է որ կատարէ զայն դրուած ա-
պաշխարանքն . և այսպէս երբ որ զղ-
ջումն կուգենի , և մեղքերն կասի քա-
հանային , և դրուած ապաշխարանքն
յանձն կառնու խոստովանորդին , և
քահանայն կուտայ զարձակումն՝ ասելով
մով այս ապաշխարութիւն խորհուրդ
կու կատարուի :

Հց. Քրիստոնեայն տարին քանի անգամ
պիտի խոստովանի :

պխ. Ամէն անգամ որ մահու չափ մեղաց
մէջ կանկանի , պիտի խոստովանի. նաև
որ-

որքան անգամ որ պիտի հաղորդի՝ պէտք է յառաջ խոստովանիլ. և ինչպէս եկեղեցւոյ հրաման է, որ զատիկ զատիկ ամ քրիստոնեայ հաղորդի, այսպէս ալ հրաման եկեղեցւոյ է որ զատիկ զատիկ խոստովանի. և եթէ տարի անցնի որ չխոստովանի կու մեղանչէ ընդդէմ հրամանի եկեղեցւոյ։

Հց. Ինչէ վերջին օծումն, և ինչով կու լինի։

Պաս. Վերջին օծումն մէկ խորհուրդ մի է, որ անով մարդուն ներելի մեղացն թողութիւն կու լինի, և հոգւոյն ուժեղութիւն. նորա համար մեռնելու մերձ հիւանդներուն կու տրի, որ իրենց հոգին ուժովնայ, և սատանայի փորձութիւնքն դէմ կենալու կարող լինի. նաև զհիւանդութիւնն ցաւն համբերութիւն տանի։ Եւ այս սէր խորհուրդս սով կու լինի. որ քահանայն՝ սէր և օրհնած իւղով՝ հիւանդին հինգ զգայարանքն օծէ, և ինչ աղօթք որ գրուած է՝ օծելնին զայն աղօթքն ասէ։ Եւ զայս խորհուրդս ալ քառ է հաստատեր, ինչպէս որ յաւետարանին մէջ՝ Մարկոսի 6. գլուխն գրուած է, թէ առաքեալքն օծանէին իւղով զհիւանդս։ Եւ յակոբոս առաքեալն ալ 'ի 5. գլուխն կասէ. եթէ հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ՝ կոչեսցէ զերիցսունս եկեղեցւոյ. օծցեն իւղով յանուն Տն։ Եւ այս սէր խորհուրդս զայս շահս ալ ունի, որ եթէ հիւանդին առողջանալն՝ իր հոգւոյն շահաւէտ լինի նէ, հիւանդն 'ի մեռնելոյն կու ազատի, և կառողջանայ։

Հց. Ինչ է կարգ քահանայութիւն. և ինչով կու լինի։

պխ. Կարգն քահանայութիւն մի է խորհուրդ մի է, որ անով մարդն քահանայ կու ձեռնադրի յեպիսկոպոսն, և յաւաջքան զքահանայ ձեռնադրելին տիրացու և սարկաւագ կու լինի. և զայս խորհուրդս անորհմար հաստատուեց Քս, որ մարդն քահանայութեան կարգն ունենալով կարող լինի պատարագելոյ, և զհացն, և զգինին՝ Քսի խօսքովն 'ի մարմին և յարիւն Քսի փոխել, նաև զնոստովանողներն 'ի մեղաց արձակել։ Եւ այս խորհուրդս սաով կու լինի. որ եօթն աստիճան է կարգն. և ամէն աստիճանի յատուկ նիւթ կայ, զորս եպիսկոպն ձեռնադրօղին ձեռքն կու տայ, և կու ասէ զայն խօսքերն որ սահմանուած է ասել։ Դռնապանութիւն նիւթն՝ եկեղեցւոյ բանալիքն է։ Ընթերցողութիւն՝ մարգարէական գիրքն է։ Երգմնեցուցչութիւն, մաշտոցն է։ Ջահընկալութիւն, մոմակալն է։ Կիսասարկաւագութիւն, դատարկ սկին, և գինով, ջրով լցեալ բաժակամանքն են։ Սարկաւագութիւն, աւետարանն է։ Եւ քահանայութիւն, սկին գինով, և մաղ զմանն նշխարով, և եպիսկոպոսին ձեռք դնելն 'ի վերայ գլխոյ ձեռնադրեցողին։

Հց. Ինչ է սլսակն, և որով կու լինի։

պխ. Պսակն այնպէս խորհուրդ մի է եկեղեցւոյ, որ անով այր և կին, անբաժանելաբար մէկ մէկի ընկեր կու լինին, որ միասեղ ապրին, և զաւակ ծնանին, որ քրիստոնէական ժողովն չպակասի

յաշխարհէս. և զիւրեանց զաւակն կր-
թեն 'ի հաւատն քրիստոնէական, և
յերկիւղն այ, որ անով իրենց պտուղն
արքայութիւն որդի լինի, և ոչ բաժին
դժոխոց։ Եւ այս սէր խորհուրդս ասող
կու լինի՝ որ ինչպէս պուն, այնպէս
ալ էդն իւրեանց յօժար կամաւն մէկ
մէկի հաւանին, և կամենան պակով
զիրար առնուլ, և առաջի քահանային
զիրենց կամքն յայտնեն. և ասով պակ-
ւաց կու լինին. և քահանայն ևս կու
օրհնէ զնոսա ինչպէս որ գրեաց մաշ-
տոցին մէջ։

Աճային հրամանաւն պարտական են այր
և կին սիրով և խաղաղութիւն տալիլ.
կինն պարտական է հնազանդիլ առն.
և այրն պարտական է պատուով պահել
զկինն, իբրև իւր ընկեր, և ոչ իբրև
իւր ծառայ։ Նաև պարտական է այրն
աշխատիլ, որ պահէ զտունն, և ինչ
որ պէտք է տանն լաւ հոգայ. և կինն
պարտական է որ լաւ հայի տանն քա-
ներն, որ ընդ վայր տեղն չընչանան,
և աւելորդաբար կիր չառնին. և եր-
կուքն միատեղ զիրենց որդոց պէտք
եղած բաներն թէ հոգևոր թէ մարմ-
նաւոր լաւ պիտի հոգան, որ իւրեանց
որդիքն լաւ տալին. զքրիստոնէական
վարդապետութիւն՝ և զհոգևոր փրկութիւն
բաներն լաւ ասրվին. նաև մարմնաւոր
արհեստ սովորին, որ յետոյ կարող լի-
նին տալիլ 'ի փառս այ։

ԳԼՈՒԽ Զ.

Վասն մեղաց, թէ ինչէ մեղքն, և քանի կերպ, և թէ ինչպէս քրիստոնեայն պիտի փախչի ի մեղաց։

հց. պխ. Ինչէ մեղքն։

Մեղքն այն գործքերն, և խօսքերն են, որ այ հրամանաւն արգելուած են, բայց մարդիք այ չենազանդելով կու գործեն՝ և կու խօսին, և կամ հաւանուելով կամացն կու խորհին։ Դարձեալ. մեղքն է այ հրամանն անցնիլն. զորօրինակ, հրամայերէ զենօղն պատուել. և երբ զանց կառնեն, և չեն պատուեր՝ նոյնն ալ մեղք է։

հց. պխ. Քանի՞ կերպ և քանի՞ տեղ մեղք կան։

Մեղքն նախ կու բաժանի ի սկզբնական և ի ներ գործականն։ Սկզբնական մեղքն այն է՝ որ ի ադամայ կու գայ. զի այ մարդիք որ ապականուելով կու յղացին, և ի մեղս կու ծնանին, անով ադամայ մեղքն իրենց վերա կուգայ. ինչպէս պղտոր ակնէ եկած և եկած ջուրն՝ ակին պղտորութիւնն հետն կունենայ. և այս սկզբնական մեղքս սբ մկրտութիւն կու թողուի. նորա համար երեխայքն որ ի սկզբնական մեղս կու ծնանին, թէ որ առանց մկրտութեան մեռանին ի խաւարն կու

գնայ

գնայ իրենց հոգին. և եթէ մկրտին, և յետ մկրտութեան մեռանին, յայն կէտն յարքայութիւն կու գնան։

Եւ ներդործական մեղքն է այն, որ մարդիք իրենք իրենց կամքն կու գործեն այ հրամանացն առ հնազանդ լինելով։ Եւ այս ներդործական մեղքերուն մէջ կան որ ներելի կասէին, և կան որ մահու չափ։ Ներելի մեղքերն այն գործքերն է՝ խօսքերն են, որ թէպէտ այ անհաճոյ են, բայց նորա սիրուն չեն հակառակիր, և ծանր աղաւանք չեն. նոր համար ներելի կասէին. ինչպէս են դատարկաբանութիւն մեղքերն, և մարդու վնաս մի չհասցնող սուտն. և ուրիշ ասունց նմաններն։ Եւ մահու չափ մեղքերն անոնք են, որ այ սիրոյն, և հրամանացն կու հակառակին, և ծանր աղաւանք. և յանցանք են. ինչպէս, շնաբն, պոռնկիլն, մարդոյ վնաս հասցնող սուտն, հայհոյանք, սպանութիւն, ծանր բանի վերա զքնկերն բամբասելն, և անուն աւրելն. նախանձ. ատելն զքնկերն, և նորա վնաս կամիլն, ոխ ունենալն. և ուրիշ ասունց նման մեծամեծ մեղքերն. և ասունք անոր համար մահու չափ կասէին, զի ով որ զասունք գործէ՝ իւր հոգին կու մեռանի, և յայ շնորհացն կու զրկի. և եթէ այնպէս անեղջ մնալով մեռանի նէ յաւիտենական դժոխոց բաժին կու լինի։

59. Մեղքերուն մէջ քանի՞ են գլխաւորներն, և որն են։

պէս. Երեթն մեղք կան որ գլխաւոր կասէին, զի իրենցմէ շատ ուրիշ մեծամեծ

մեղքեր յառաջ կու գան, և տասնք են։ Հպարտութի, նախանձ, բարկութի, ծուլութի. ագահութի, որկրամոլութի, և բղջախոհութի։

հց. Ինչ է հպարտութին, և ինչ մեղքեր կու ծնանին անկից։

պէս. Հպարտութի այն է, որ մարդն միայն զիւր բարձրնալն, և պատուելին կու զէ անկարգ բաղձանօք, և միայն ինքն իրեն կու հաւնի, և զուրիշներն բան մի չի համարիր։ Եւ ասկից կու ծնանին այս մեղքերս. անհնազանդ լինիլ, պարծենկոտ ըլլալ, կեղծաւորութիւն անել, խօսից մէջ կուիւ հանել, կամապաշտ լինիլ. ընկերոջն հետ անմիաբան ըլլալ, և ուրիշին բանին հետաքրքիր՝ և էտեւէն ընկնօղ լինիլ, որ իմանայ թէ ինչ կանեն, կամ ինչ կու խօսին. և տասնք ամէնն հպարտութէ մեղացն չար ծնունդքն են. զի ով որ հպարտ է՝ զայս մեղքերս շատ անգամ կու գործէ։

հց. Ինչ է՝ նախանձն, և ինչ մեղքեր կու ծնանին անկից։

պէս. Նախանձն այն է՝ որ մարդն կու տրտում, և կու ցաւի իր ընկերոջն բարոյն վերայ, և կուրախանայ իւր ընկերին վնասուն վերայ. և երբ որ իրեն կու գայ այսպիսի տրտմութի և յետ չի ձգեր զայն, այլ կամքն ալ կու հետուի՝ յայն ժամանակն կատարեալ մահու չափ մեղք է։ Եւ ասկից կու ծնանին այս մեղքերս. զընկերն ատել. տրտնջալ. բամբասել. ուրիշին վնասն կամիլ, և ընկերոջն բաբին ասել։ Քանզի մէկ մարդ մի, որ մէկին կու

նախանձի, միշտ զնա կու առէ. անկից
կու տրտնջայ, զնա կու բամբասէ, զա-
նոր ՀՀասն կու կամի, և անոր յաջողու-
թի և բարի լինիլ չի ուզեր։

հդ. Ինչէ բարկութիւն, և ինչ մեղքեր
կու ծնանին անկից։

պխ. Բարկութիւն այն է, որ մարդն երբ որ
ուրիշին մէկ ՀՀասն մի կու քաշէ՝ չի համ-
բերեր, այլ անկարգ, և վատ բաղձա-
նօք կուզէ որ իր ձեռօքն՝ կամիր գէշ
խոսքերովն իւր վրէժն առնէ անկից։
Եւ ասկից կու ծնանին այս մեղքերս,
կուիլ, մնօք և սրտով ուռեցուրիլ,
բարկութեամիտն. զընկերն նախա-
տել. կանչել, նեղ սրտիլ. և հայհոյել
կամ անարգել։ Քանզի մարդն երբ ոչ
կու բարկանայ՝ զայս մեղքերուս մէկքա-
նին կու գործէ, կամ զընաւն։

հգ. Ինչէ ծուլութիւն, և ինչ մեղքեր կու
ծնանին անկից։

պխ. Ծուլութիւն այն է, որ մարդն բարի
գործքերուն, և հոգևոր բաներուն
վերայ կու տրտմի. և իրեն դժուար
կու գայ անանկ բաներն. և ասանկ
տրտմելով և դժար դալով՝ կու հետևի
որ յետ կենայ բարի գործքէն՝ և հոգ-
ևոր բաներուն։ Ինչպէս են այն մար-
դիքն՝ որ հինգ ժամ գտատարկաբանու-
թի լսեն նէ դժար չի դար իրենց, և
չեն նեղիր, և կէս ժամ որ ՀՀոգևոր
բանին մտիկ անեն նէ՝ դժարնին կու
գայ, և կու տրտմին, և գլխնուն ցաւն
կու բռնէ. և ասկից կու հետևի, որ չեն
երթար ՀՀոգևոր բանն, և քարոզն մտիկ
անել։ Եւ յորժամ մարդն պարտու-
կան եղած բարի գործոցն վերայ ա-
տրտ-

տրտմի , և յետո կենայ անկից՝ յայն ժա-
մանակն ծուլութիւն կատարեալ մահու-
չափ մեղք կու լինի : Եւ ասկից կու
ծնանին այս մեղքերս , յուսահատիլ
յայ , և ի կարենալոյն գործել զբաբի .
վախկոտ լինիլ առ բարեգործութիւնն,
ոխակալութիւն , անիսպիտ և զանցառնող
լինիլ ճշմարտին հրամանացն , և մոռքն
միշտ երերեալ , և տատանեալ լինիլ :
Չի ծոյլ մարդն , զինքն առ բարեգոր-
ծութիւն չի բացորոշեր, որ միտքն հանգ-
չի . նոր համար մոռքն երերեալ՝ և տա-
տանեալ կու լինի :

հց. Ինչ է ագահութիւն , և ինչ մեղքեր
կու ծնանին անկից :

պա. Ագահութիւն այն է , որ մեկ մարդ մի
անկարգ , և աւելի բաղձանք , և շատ
սէր կունենայ շատ ըստակ , և շատ ըս-
տակ ունենալու վերայ : Եւ ասկից կու
ծնանին այս մեղքերս . նենգութիւն ա-
նել ուրիշին . մարդ խաբել . բռնութիւն
անել ընկերոջն . ան հանգիստ լինիլ
մոռքն և սրտին . խստասիրտ լինիլ , այ-
սինքն անողորմ , սուտ խօսիլ , և սուտ
երդուիլով . և անգութ սիրտ ունենալ
դէպ ի ընկերն : Քանզի ագահ և ար-
ծաթասէր մարդն՝ առիտրի մէջ , և ա-
ղուեսային մէջ աւելի շահ անելու հա-
մար նենգութիւն կանէ . զգէշն աղէկի
տեղ կու ծախէ . և գղնձախառն ար-
ծաթին՝ զուտ արծթի տեղ կուտայ .
կերպ կերպ խօսքերով զուրիշն կու
խաբէ , որ մեծ գնով արժած բանն
փոքր գնով առնու , և ինչ մարդու վը-
ար ուժն կու հասնի բռնութիւն կու ջա-
նայ անկից ըստակ քաշել . և գիշեր ու-

ցերեկ միտքն ու սիրտն քստակ շատ ցնելու հետ լինելով՝ անհանգիստ կու լինի։ և ինքն 'ի յինքն խստասիրտ, և քարասիրտ կու լինի, և անողորմ բարք կունենայ։ և շատ անդամ արծթի հաստատ սուտ երդումներ կանէ՝ մոռացն մէջ ուրիշ բան դնելով։ Եւ աղքատաց դէմ ան գութ կու լինի։ զի արծթին սէրն զսրտի գութն կու վերցընէ, և ասկից 'ի զատ զսիրտն ծառայ արծթին կանէ։

հց. Ինչ է որկրամոլութին, և ինչ մեղքեր կու ծնանին անկից։

պէս. Որկրամոլութին այն է, որ մէկ մարդ մի անկարգ բաղձանք և սէր կունենայ ուտելու խմելու վերա, և այս յայն ժամանակն մեծ մտհուշափ մեղք կու լինի, որ թէ այ և եկեղեցոյ պատուիրանացն դէմ ալ լինի իւր ուզածն ուտելն՝ տակաւին չի յետ կենար ուտելու։ Եւ ասկից կու ծնանին այս մեղքերս. անկարգ ուրախանալ, ցոփ, և անպարկեշտ խօսքեր խօսիլ։ ծաղր անել զուրիին, դարշելի պղծութիւն մէջ անկանիլ։ Քանզի այն մարդն որ որկրամոլութիւն ախտին ծառայ կու լինի, այս սասած մեղքերուս մէջ շատ անդամ կանկանի։

հց. Ինչ է բղջախոհութին, և ինչ մեղքեր կու ծնանին ասկից։

պէս. Բղջախոհութին այն է, որ մէկ մարդ մի այն գարշելի և պիղծ հեշտութեանն կու բաղձայ հետուիլ՝ որ անկարգ են և մարմնոյ ցանկութիւն կու լինին. և անօր կու պատկանին. նորա համար ինչ կերպով և ինչ, երբ որ մարդն այնպիսի

հեշտութիւն կու բաղձայ իւր կամաց հաճանութիւնն՝ որ մարմնոյ ցանկութեան կու պատկանի՝ բղջախոհութեան մեղք կու գործէ, որ է մեղք մահուչափ։ Եւ ապիկ կու ծնանին այս մեղքերս. մոռք կոյր լինիլ. միտք անելու բանն չմոռանելը անհաստատ լինիլ. ինքն զինքն անկարգ կերպով սիրել. զուծ ատել. անկարգաբար զայս կեանքս սիրել. ի յաւիտենական կենացն և ի փրկութիւն հոգւոյն յուսահատիլ։ Քանզի բղջախոհ և չար ցանկութիւն հեռուօղ մարդն և ցանկութիւն հեշտութիւնն սիրողն՝ իւր մոքի սրութիւնն կու կորցնէ, և մոռքն գուլ կու լինի. և այն չար ցանկութիւն ոչքան մնաս, և խախտութիւն՝ որ կու հետևի՝ միտք չի աներ։ Բնաւ մէկ ուրիշ բանի մի վերայ հաստատ չի մնար, այլ կերպ կերպ կու փոխուի։ Եւ իւր սիրած հեշտութիւնն որ իւր մարմնովն կու լինի, նորա համար զինքն և զիր մարմինն շատ կու սիրէ։ Նաև երբեմն զուծ կու ատէ այս բանիս համար, թէ ինչու զայսպիսի հեշտութիւնն կու արգելու իւր հրամանաւն։ Զայս անցաւորս կեանքս շատ կու սիրէ, որ իւր ցանկութիւնն հեշտութիւնն միշտ լինի. և յաւիտենական կենացն կու յուսահատի, զի գիտէ որ պատնէշութիւն, շնութիւն, և ամենայն կերպ բղջախոհական հեշտութիւն հետևողներն յարքայութիւնն չեն դնար, մինչև որ լաւ մի չղջան, և այն չար գործքեն յետ չկենան։

Հց. Ոչին են այն մեղքերն՝ որ ոգւոյն սրբոյ դէմ են։

Պետ. Այս վեցս են. յանդգնութիւն. յուսահատ-

հատուածիւն. ընդդիմանալ ճշմարտուածիւն. նախանձ ընդդէմ բարոյ եղբօրն. խստասրտուածիւն, և անողջուածիւն մինչև խսպառ։

հդ. Մեկնեք ընձի տեղն ի տեղն՝ թէ ինչ են սասնք։

պխ. Յանդգնուածիւն այն է, որ մէկ մարդ մի բարի գործելոյ փոյթ չունի, և չի գործեր. և մարքին մէջն կու դնէ, թէ ինքն անանկ ճնալով կու փրկի։ Յուսահատուածիւն այն է, որ մէկ մարդ մի իր մեղքերն միտք անեելնին վրը յոյսն կու կտրէ յայ ողորմուածէն, և կասէ թէ ընձի այլ ճար չի կայ փրկուածեան։ Ընդդիմանալ ճշմարտուածիւն այն է՝ որ մէկ մարդի ուրիշն զուրուցածն կամ գործածն թէպէտ գիտէ որ ճշմարիտ է, և լաւ, սակայն վասն չարուածեան սրտին, կու հակառակի և կասէ թէ սուտ է՝, և վատ։ Նախանձն ընդդէմ բարոյ եղբօրն այն է՝ որ մէկ մարդ մի գիտէ որ իւր քնկերն կամ եղբայրն՝ զիր ունեցած բարին յայ առէրէ, բայց կու նախանձի. կամ մեօքն հանդերձ հաւանուածեամբ, և կամ բերանովն կասէ՝ թէ ընչու այն բարին՝ ուրա նորա տուէրէ. կամ ընչու նա յայ այնպէս բարի առած լինի, և ասով կու արտմի և կու ցաւի, և կուզէ որ այն բարին ընկերոջմէն վերնայ՝ որ իւր սիրտն հանդչի, և ուրախանայ։ Խստասրտուածիւն այն է, որ մէկ մարդմի երբ որ մեղաց մի մէջ է, սիրտն կու քարացնէ, և չի ուզեր ղղջալ ի մեղացն։ Անողջուածիւնն մինչև խսպառ այն է, որ մէկ մարդ մի մահուանի մեղքի մէջ է, և այն-

այնպէս դրերէ մտացն մէջ, որ բնաւ
չզղջայ այն մեղքէն, այլ անզեղջ մնայ՝
և այնպէս մեռնի։ Եւ այս մեղքերս
խիստ մեծ չար են. և ա՛յ բարութիւն,
ճշմարտութիւն, արդարութիւն, և ողոր-
մութեան հակառակ։ Նորա համար
պէտք է՝ որ մարդն խիստ լաւ զգուշ
կենայ յայս մեղքերուս, որ հակառակ
օգտոյն սրբոյ չլինի, և մեծ դժուարու-
թիւն մէջ չանկանի. զի այս մեղքերուս
դժուարութիւնքն թողութիւն կու լինի։

հց. Ո՞րն են այն մեղքերն՝ որ 'ի յերկինս
կու բողոքեն։

պէտ. Այս չորս մեղքս են. կամաւոր մար-
դասպանութիւն. մեղք ընդդէմ բնութիւն.
զրկումն աղքատաց, հատանել զվարձս
մշակաց։

հց. Մեկնէ ընձի տեղն 'ի տեղն թէ ինչ-
պէս կու լինին։

պէտ. Կամաւոր մարդասպանութիւնն այն է,
երբ մէկ մարդ մի իւր մտացն մէջ կու
դնէ՝ թէ ես կու կամիմ որ այն ինչ
մարդ սպաննեմ, և կու գնայ այն մտոքն
և կամաքն, և կու սպաննէ։ Եւ այս թէ
աստեղութիւն համար լինի, թէ դրամի
համար լինի, թէ կնոջ չար սիրոյ հա-
մար լինի, միշտ կամաւոր մարդասպա-
նութիւն է։ Մեղքն ընդդէմ բնութիւն
այն դարձեալ և մեծ չարն է, որ սոդո-
մացոց նման ընդ արու անձին խառ-
նակութիւն կու լինի. և այս այնպէս մեծ
մեղք, և մեծ չարէ, որ ամ՛ զսոդոմ
քաղաքն այս մեղքիս համար յերկնից
կրակ իջեցնելով այրեց, և 'ի դժոխք
իջուց զայնպիսի գործք անօրենին։
Զրկումն աղքատաց այն է, որ մէկ
մարդ

մարդ մի առ և տուր կուենենայ մէկ աղ-
քատի մի հետ՝ կամ մէկ որբու մի հետ,
կամ այրի կնոջմի հետ, և զնոսա կու-
խաբէ, և կու զրկէ աւելի ըստակ քա-
շելով. և այս չարս այլ մեծ մեղք է։
Հաւանեալ զվարձս մշակաց այն է, որ
մէկ մարդ մի իւր մշակին կամ բանուորին
ինչ որ տալու է վարձ՝ լման չի տար,
այլ կու կորէ, և պակաս կու տայ. և
կամ ցած ըստակ կու տայ, որ նա կու
տանի պակասէն կու խարձէ։

Գ Լ Ո Ւ Խ Է.

Վասն առաքինութեաց թէ ինչ են առաքի-
նութիւնք, և քանի կերպ, և ինչ-
պէս քրիստոնեայն պարտի
հետևիլ։

հց. Յեղնեղ ընձի, թէ ինչ է ա-
ռաքինութիւնն, և քանի
կերպ, որ անոնցմով կու
լինին ամենայն բարեգործ-
ութիւնք։

պաս. Առաքինութիւն մէկ այնպիսի ուժ մի
և զօրութիւն մի է, որ անով լաւ բա-
րեգործութիւն կու անցնենք դմեր կե-
անքն, և այ հրամանին կու հնազան-
դինք։ Եւ երկու ցեղ են, այսինքն ծա-
ւաբանական, և բարոյական։

հց. Որն են որ ծաւաբանական կասէին։

պաս. Այս երեք առաքինութիւնքս են. այ-
սինքն

սինքն հաւատ , յոյս , և սէր ։ Եւ ասենք անոր համար ճշմարտանակսն կասէին , զի այ շնորհքն կարենք ունենալ , և ասենցմով միշտ մեր գործքն գործել ի յաճ ։ զի հաւատն մեր այն է, որ անով կու հաւատանք թէ դոյ աճ , և է երեք անձինք , և մի աճ , և որդին աճ վասն մեր մարմնացելոյ ։ նաև այ բանին հաւատանք թէ ինչ որ ասելոյ ճշմարիտ է ։

Եւ յոյսն այն է՝ որ անով մեր փրկութեան յոյսն միշտ ի յաճ կու դնենք , և կու յուսանք թէ մեզի յայս կեանքս շնորհ կու տայ , որ անով բարի գործենք , և ի հանդերձեալն իւր ողորմութենէն արքայութի կու տայ ։

Եւ սէրն այն է , որ անով քան զամէն բան աւելի՝ զաճ կու սիրենք , և վասն սիրոյն այ զմեր ընկերն կու սիրենք ։ և այսպէս այս երեք առաքինութիւնքս աճայինք կասէին ։ և միշտ հարկաւոր է՝ մեզի , որ ունենանք , և դիտանք ։

Հց. Որն են որ բարոյական կասէին ։

պխ. Շատ են , բայց գլխաւորներն՝ այս չորս առաքինութիւնքս են ։ այսինքն , խոհեմութիւն , արդարութի , արիութեան, և բաղխասութի ։

Հց. Սեկնէ ընձի , թէ ինչէ խոհեմութիւնն ։

պխ. Խոհեմութիւնն մէկ առաքինութի մի է՝, որ անով մարդն զիր գործքերն որ չարչեն , այնպէս լաւ մի կու կարգաւորէ , որ միշտ բարի վերջ կունենան , և կու ճանչնայ թէ ինչ բան կայ որ կու վնասէ իւր վախճանին , և անկից կու զգուշանայ ։ Դարձեալ ։ խոհեմութի այն է,

որ անով մարդն ինչ բան որ կուզէ, և կու կամի, նոյն բանին միջոցն այլ ձանաչէ և կամենայ, որ անով ուզածին հասնի։ Ինչպէս այս օրինակս կու ցուցնէ. մէկ մարդմի կուզէ զիւր ընկերն սիրել՝ զանոր բարին կամիլ, ահա այս լաւ գործքէ, բայց թէ խոհեմութիւն ունի, պիտի որ զիր ընկերն իւր մտացն մէջ մաքուր պահէ, և չդատէ. և զանոր գործքն և խօսքն 'ի չարկողին չմեկնէ, որ այս միջնոցներովս կարենայ վախճանին հասնիլ, այսինքն, սիրել զընկերն. և թէ այսպէս չանէ՝ անխոհեմէ. զի զընկերն սիրելն որ կու կամի, չի հասնիր իւր կամացն։ քանզի այն մարդն որ զընկերն իր մտացն մէջ խենդ, և վատթար կու դնէ՝ և կու դատէ՝ չունի միջոց սիրելոյ, այլ ատելոյ. Նորա համար չի կարեր սիրել, ասորոյէս պիտի իմացուի ամէն բանի վերայ։ Դարձեալ. մէկ մարդմի կուզէ որ իւր ընկերոջն հետ խաղաղ մնայ, և կռիւ չանէ, եթէ խոհեմութիւն՝ իւր ուզած բարի բանն լաւ վերջ կու նենայ, և ուզածին կու հասնի։ քանզի խոհեմութիւն ցոյց կու տայ իրեն, որ ընկերոջն չար վերաբերեալ կամացն դէմ գործք մի չանէ, ընկերոջն ծանրութիւն և բեռ չընի, զընկերն չզրկէ, չբամբասէ, չնախատէ, և այս միջոցներովս խաղաղ կարէ մնալ հետն։ Բայց թէ խոհեմութիւն առաքինութիւն չունի, թէպէտ կու կամի ընկերոջն հետ խաղաղ մնալ, զընկերն սիրելոյ և այլ շատ ուրիշ բարի բաներ անել, բայց յատաք չի դնար. և ուզածին չի հասնիր. զի ինչ

Ճանբով, և միջոցով որ պիտի հասներ,
զայն Ճամբան, և միջոցն չի բռներ.
այլ կու նմանի այն յիմար մարդուն,
որ հաց ուտել կու կամի, բայց բերանն
բանալ չի ուզեր։ Դարձեալ՝ ուրիշ
օրինակ. մէկ մարդ մի ողորմութի կու
տայ վասն ոչ, կամ շատ ջերմեռանդ
աղօթքներ կանէ առ ոչ վասն փր-
կութեան հոգոյ իւրոյ, ահա ասունք
խիստ լաւ բարի գործք են. բայց թէ
խոհեմութի չունենայ՝ ողորմութիւնն
տալինի զաղքատն ամօթով կանէ,
կամ մարդկանց կու պարծենայ զիր
ողորմութիւն տալն, և կամ երբ շատ
աղօթք կանէ, զուրիշն կու դատէ թէ
ծոյլ է ի յաղօթս, և ասունցմով իւր
գործած բարին կոչնչանայ։ Եւ ասով
յայտնի է, որ առանց խոհեմութեան
եղօղն՝ իւր գործած բարուն ալ չի կր-
նար բարի վերջ՝ և բարի կատարում-
տար. նորա համար իմաստունք և սբ
վարդապետքն կասեն՝ թէ խոհեմու-
թեան առաքինութին է՝ թագուհի,
և կառավարող ամենայն առաքինու-
թեց։

հց. Մէկնէ ընձի թէ ինչ է արդարու-
թիւնն։

պիս. Արդարութին մէկ առաքինութիւն մի
է, որ անով մարդն ուրիշ մարդու
եղած բռզակն, կամ ըստակն, կամ
պատիւն ու փառքն իրեն չի քաշեր.
այլ օրու են՝ անոնց կու տայ. և թէ
չգիտնալով իրեն անցերէ՝ երբ որ գիտ-
ցայ՝ յետ կու տայ սիրոջն։ Եւ զայս
յօժար կամօք պիտի անէ, և չէ թէ
գրսէանց մարդկանց քով խայտառակ
!չէ-

չինելու համար։ Նորա համար ար-
դարութիւն առաքինութիւն ունիցի,
թէ մեկին կորուսած ոսկին, կամ ձե-
ւահիրն այնպէս գտած ալ լինի՝ որ
բնաւ մարդ չէ տեսեր, չի վար դներ.
այլ զտէրն կու փնտռուէ, որ զգտած
բանն տիրոջն տայ։

ԺԹ. Մեկնէ ընձի թէ ինչէ արիութիւն։

ՀԱ. Արիութիւն մեկ առաքինութի մի է,
որ անով մարդն այս աշխարհիս մէջ
ինչ ցաւու և փորձութիւն որ հանդիպի
քաջ սրտով և համբերելով յանձն կառ-
նու զցաւն և զտանջանքն՝ թէ և մեռ-
նիլ հետևի իրեն այն ցաւէն։ Եւ
այս առաքինութիւնս այն ժամանակն
խիստ լաւ է, որ 'ի փառս ոչ, և 'ի
սէրն Քրիստի յանձն առնու մարդն համ-
բերել ցաւու, և փորձութեան մինչև
'ի մահ։

ԺԹ. Մեկնէ ընձի, թէ ինչէ բարեխառ-
նութիւնն։

ՀԱ. Բարեխառնութիւնն մեկ առաքինու-
թի մի է, որ անով մարդն զիւր մարմ-
նոյ բաղձանքներն բարի կանոններով
կու հանդարտեցուցանէ՝ և զիւր զդայ-
ական հեշտութիւնն կու զսպէ. քանզի
մարմինն խիստ անկարգ կերպով կու
բաղձայ ուտելու, խմելու, հագնելու
կապրելու. նորա համար պէտք է՝ որ
բարի կանոնով այս աւելի բաղձանք-
ներն վերցնի. և ինչ որ հարկաւոր է՝
մարմնոյն, կերակուր և հանդերձ նոյնն
տրվի միայն։

Դարձեալ. զգայութիւնք մեր, այսինքն.
աչք, ականջ և այլն, միշտ հեշտա-
նալ կու զեն, և այս ոչ է լաւ. զի

հեշտանալն դէպ 'ի մեղքն կու տանի զմեզ. նորա համար բաւական է թաւաքինութիւնն պիտի զսպէին, և յետ ձգէին այնպիսի հեշտութիւնքն՝ որ կամ մեղք են, և կամ դէպ 'ի մեղքն կու տանին։

Հց. Քանի՞ են, և որն են գործք մարմնոյ նաւոր ողորմութիւն։

պէս. Եօթն են, այսինքն անօթի մարդկանց կերակուր տալ. ծարաւ մարդկանց ջուր տալ. մերկ մարդկանց զգեստ տալ. զտարական զարիսն 'ի տուն առնուլ, և ընդունիլ. հիւանդին տունգնալ. բանտն եղող մարդկանցն քով գնալ, և թէ բանի մի կարօտ են գալ. և զմեռեալ մարդն թաղել։

Հց. Քանի՞ են, և որն են գործք հոգևոր ողորմութիւն։

պէս. Եօթն են. այսինքն, տգէտ մարդկանցն բարի բան սորուցանել։ Տարակուսեալ մարդկանց բարի խրատ խորհուրդ տալ։ Ցաւոս և վշտաց մի եղող մարդիքն միխիթարել։ Մեղաւոր մոլորեալ մարդկանցն ուղիղ ճանապարհն ցոյց տալ, և յանդիմանելով խրատել զնոսա և ուղղել։ Իւր քիկերն եթէ իրեն մեկ վնաս մի տուել է՝ ներել ընկերոջն, և վճարք վնասուն չուղել։ Ընկերոջն պակասութեն կամ խենդութեն տանիլ և համբերել։ Եւ աղօթք անել վասն կենդանեաց և մեռելոց։

Հց. Ինչո՞ւ համար ասուն գործք ողորմութիւն կասին։

պես. Անոր համար , զի զայս ասած՝ գործքերս միայն ողորմած և բարի մարդիքն կանեն : Իսկ ան ողորմ՝ և ադահ մարդիքն չար լինելով՝ իրենցմէ ուրիշին լաւութիւն չի լինիր . Նորա համար զայս գործքերս չեն աներ : Եաև լսել չեն ուզեր զայս խօսքս , թէ ողորմած մարդն բարի է , անոր համար իրմէ ուրիշին բարութիւն կու լինի . իսկ անողորմն և ադահ մարդն չար է , Նորա համար իրմէ ուրիշին բարութիւն մի չի լինիր :

Մէկ հարցմունք մի այլ անեմ , և վերջացնենք :

հց. Ասա ինձ և մեկնէ . ինչ են վերջինք մարդուն , և քանի :

պես. Վերջինք մարդուն այս չորս բաներ են . մահն , դատաստանն , դժոխք , և արքայութիւն : Եւ ամէն մարդ նախ ունի զայս վերջս , որ պիտի մեռանի , ապէրց յետքն ունի զայս վերջս՝ որ պիտի օր մի Քրիստի ահեղ դատաստանին առջև կանգնի , և դատուի . և այս երկու վերջէս էտև , եթէ բարի գործով և ի մէջ շնորհացն այ մեռուիր , իրեն յետին վերջն կու լինի արքայութիւնն , որ անով յաւիտեանս յաւիտենից անպատմելի փառաց , և ուրախութեան մէջ կու մնայ . և թէ մահու

չափ մեղաք , և անպղծութեամբ մեռերէ , իրեն յետին վերջն կու լինի դժոխքն , ուր դիւաց ընկեր լինելով յաւիտեանս յաւիտենից կու տանջի ։ Եւ զայս չորս վերջս մեր՝ խիստ լաւ է , որ միշտ մտքերնիս բերենք . և անով զգուշ կենանք , որ մեղք չգործենք , և միշտ ջանանք , որ զայ հրամաններն լաւ պահենք . և անով յաւիտենական արքայութեան արժանի լինինք . Ամէն ։

ՎԵՐՋ։

GLORIA IN EXCELSIS DEO
G.R.



ՏԱՂԱՐԱՆ

Որ հետևի զկնի քրիստոնէական վարդապետութեան, ի զոհարձութեան մանկանց՝ ուսանողաց ըղքրիստոնէական վարդապետութեան:

Երդ առ ամենասքանչելի երրորդութիւնն, լաւ կելոյի աղերսանաց հանդերձ ըղձիւ ձայնաչելոյ, և սիրելոյ զնա:

Ընդառ անհաս ստեղծող դոյութեանց ընտրելոյ, կարողութիւն անհուն հայրոյդ համայնից. շնորհեա ինձ զօրութիւն մտաց և բանից, պարզապէս ճանաչել զարարիչդ ելից:

Պարզորէն ճանաչմամբ բնութեդ անքնին, ծնանիս զիմաստութի ըղբանն անմարմին. որով ճանաչես զէութեդ անքննին լուսաւորեա գիտութեամբ զմիգամած անձն իմ։

Անհունատենչ անչափ սիրով սիրոյ քոյ, բղխի միշտ սէր ոգին 'ի քէն՝ և յորդէոյ. քանզի ճանաչմամբ շարժիս 'ի յանհուն սէր քո. հեղ յիս ըղձէր շնորհաց ո՞վ հայրըդ լուսոյ։

Շաղքաստացեալս հոգւով յանեղծ բարէոյ քոյ՝ ճոխացո՛ սէր սիրով քոյոյ ներքնայնոյ. տուր վաճառել աստուն զիրձ մարմնոյ իմոյ. զի կարացից ստանալ ըղդանձ սիրոյ քոյ։

Տենչորէն փափաքմամբ բաղձամ սիրոյ քոյ. տարփմամբ իբրև զեղջիւր առ աղբիւր ջերոյ. զովացո զպայպտեալ անձն իմ 'ի տապոյ. բղխեցո 'ի սրտէս զաղբիւր սիրոյ քոյ։

Դու Տէր միայն բաժին լեր ինձ եղկելեւոյս, բողբոջեա 'ի հոգիս շնորհաց քոյ ըղբոյս. մի՛ մեկնեսցէ զիս աշխարհ, և որ ինչ անդ յոյս. 'ի միջոնջենաւոր սիրոյ քոյոյ։

Խանդակաթ եմ՝ հոգւով սիրոյ քոյ սրբոյ զի թարց նորա ոչ ինչէ՝ քան զոլ մարդոյ. զան որոյ հեղ 'ի յիս ըղձէր անուշանքոյ, զի եղիցի գոլն իմ արդեամբ սիրոյ քոյ։

Հեղեր 'ի յրստորինս ըղհուր սիրոյ քոյ տարածել 'ի հոգի սեռի մարդկայնոյ. հեղ յիս ըղձերմութի հերոյն այն սրբոյ. և զանուեցեալ անձն իմ նովաւ ջերմացո։

Հաստատեա ըղսիրտ իմ 'ի տենչ սիրոյ քոյ, և բարձ յինէն ըղբնաւ իրձ մարմնոյ իմոյ. թեպէտ գերեցայ հոգւով յուռնանէ սի-

սիրոյ • սակայն յուսամ փրկիլ շնորհիւ մի-
րոյ քոյ :
Ընդ կուսանաց հնկից զիս իմասնացո՛ ,
զի մուտեցցեմ անձն իմ սիրով ըղձալոյ• մ-
սրոյ ոչ սնանիմ ըզ իւղ սիրոյ քոյ , հեղ յիս
ըզ իւղ շնորհաց բորբոքմամբ սիրոյ :
Զիսահարամած անձն իմ դու սպայծառա-
ցո • մաքրեա զաղտեղութիւն յանցանաց իմոյ•
զնսեմացեալ միտն իմ ի քեզ վերացո • զի
զօրեցից տեսանել ըղձոյս սիրոյ քոյ :
Զօրհնաբանօղս անուանիցդ քոյոյ սրբոյ •
փրկեա՛ ի ղգայական ունայնէ սիրոյ • մա-
ռաւորեմք զանբաւ կարողութիւն քո • ընդ
իմաստութիւն որդւոյ՝ և ոգւոյն սրբոյ :
Շարական • քի. Երրորդութիւն անքաժանե-
լի , և զօրութիւն երկնային լոյս ծագեալ
յաշխարհ • նրմա հանցուք զօրհնութիւնս
երգով :

Երգ և աղերսանք առամենասրբուհի կոյսն,
յօրինեալ ըստ կերպի վերայիշեալն բա-
ղերարութիւնն այ , ընդունեցելոց
ի կացութիւն կենի յիւրաքանչ-
իւրում հատակի :

Որիշ տարեաց բաղադրեցեալ եղեմ
մարմին մի • և ստեղծօղն իմ եղ-
անդ իսկոյն զբանական հոգի ,
ոհ , կաղմեաց զիս տուն ինքեան
բայց ես անհաւթի և վայրի • տանն իմոյ լեր
խարիսխ յուսոյ ո՛հ կոյս սրբուհի :
Եօթնասպատիկ ժամանակաւ եմ փափ-

խելի, առաջինն էր տղայութիւն ան մեղա-
դրելի. ոհ, արդեամբ Տն իմ, և սէր ջերմով
ըղձեանս ունելի, տանն իմոյ լեր խարիսխ
յուսոյ հով կոյս սրբ։

Իսկ էր երկրորդն մանկութիւն՝ յիմար
շարժելի. սակաւ ինչս եւոու տանն իմ, զի
կարող չեմ. ոհ, բանականն իմ դեռևս ոչ
էր ելեալ 'ի մարմնի, տանն իմոյ լեր խա-
րիսխ յուսոյ հով կոյս սրբ։

Սակայն երրորդն որ պատանեակ անուամբ
յորջորջի. յորում ես զիս գոլ բանական իսկ
ճանաչեցի. ոհ, առ 'ի ինեալ զուսուն Տն իմ
զիս պարտական գրտի. տանն իմոյ լեր
խարիսխ յուսոյ հով կոյս սրբ։

Զորրորդ հասակս երիտասարդ՝ յոր այժ-
մուս մրտի, հաղար հարիւր յիսուն ութերկու
էր թիւն հայկազնի. ոհ, մինչև 'ի հինգե-
րորդ հասակս որ ծեր անուանի. տանն իմոյ
լեր խարիսխ։

Յետ ծերութեան է ցանաչնուն վեց-
երորդ ասի, որ է գաւօք և հեծութիւք ըստ
բանին դանեթի, ոհ, մինչև 'ի յոր մահուն
ուեթ հասանն ողբալի, տանն իմոյ լեր։

Ի ծերնդենէ մինչև յեօթն ամն է հասակ
տղայի. յեօթներորդէն 'ի տասն և չորսն է
մանկական տի. տասն և չորսէն 'ի քսան և
եօթն է պատանեկի. տանն իմոյ լեր
խարիսխ։

Քսան և եօթնէն մինչև յիսուն երիտա-
սարդի, յիսնէն մինչև յեօթանասուն ն
ծեր անուանի, յեօթանասնէն մինչև 'ի մահ
ցանաչնեալ կոչի. տանն իմոյ։

Իսկ եօթներորդ ժամանակն է՝ անեղբա-
նալի, զի յետ մահուն ըսկսի այն օրն անե-
լելի. յոր կոչին իցէ, անդ մինայ մարդն
և ոչ փոփոխի, տանն իմոյ լեր։

Չի թէ փառաւոր է մինասցէ փառքն անեղ-
ծելի. և թէ մեղաւոր է վառեսցի հրովն ան-
շէջելի. թէ գործեալ է վեց հազարկին 'ի
յեօթնումն հանդէպ. տանն իմոյ լեր։
Բայց ես բընաւ ոչ գործեցի մինչև ցարդ
զբարի. յայսմհետէ միայն յուսամ 'ի
ներհն յիսուսի. թէպէտ տեսեալ էր ինձ
ըշխորհ, սակայն կորուսի. տանն իմոյ
լեր։
Չի երբ արկի զհիմն կրօնի զախտս 'ի
բաց չեղի. բանականն իմ խարխափեցաւ
մէջ մեղայ միշտ. ըսկսեալ էր առ 'ի շինել
լուծան ջիւք բաղկի, տանն իմոյ լեր։
Զգայութիւնքս եղեն ներհակք գեմ բա-
նականի. զի բանականս ոչ էր հնազանդ
տեսուրն հրամանի. վասն որոյ վայ ինձ
կարդասցեն յերկինս և յերկրի, տանն
իմոյ լեր։
Բանականաւս եմ մի միակ իշխող բայց
գերի, ըզգայութիւնքս են բազմաթիւ իշ-
խողք մի առ մի. ունին օգնիչք ինքեանց
բաղում յաղթեն զնս յերկրի, տանն իմոյ
լեր խարիսխ։
Վիրաւորեալ սրձակեցի զոնծն ամենի.
վասն որոյ իսկ միայն մնայ անձն իմ եղկե-
լի. վայ է ըստոյգ միոյն միակ 'ի ճանապար-
հի, տանն իմոյ լեր խարիսխ յուսոյ ո՞վ
կոյս։
Թուլութիւն բանականիս եղէ յերկիւղի.
ստորագրեցի ըզկամս հոգւոյս ենթ զգայ-
բանի. ոչ հրսկեցի զգիշերն ողջոյն ըստ
տեսուրն բանի, տանն իմոյ։
Ահան հատին թշնամիքն իմ իսկ դաղտա-
գողի, էր երեքկին ճանապարհաւ փորեալ
խորակի. ներքոյ տանն իմ դիմեալ հասին
հիմն գղբրդի, տանն իմոյ լեր խարիսխ։

Քանզի երբեք են Ճանապարհք նոցին զըլ-
ուեալն. երևոցեն ըղբարին չար, և զչարըն
բարի. և ցուցանեն մեռաց մարդոյն ըղեան
ուղղակի. տանն իմոյ լեր խարիսխ։

Սրբոջ փորեն և պատրաստեն ճահրս չա-
ղալն. զի ի սոսա հեղցեն ըղձուր մեղացըն
ախտի. բարի անուռամբ նիւթեն ըղչար, զի
մի զղջացցի. տանն իմոյ լեր։

Այնուհետև բանան զակունս ջուրցըն
թիւնալի. որք են երբեք բայց բաղմաբուղիք
և անթուեալի. ագահութիւն և հեշտութիւն
ախտ հպարտ պատուի. տանն իմոյ լեր
խարիսխ։

Յորոց բղխին մեղանք համայնք անսպառե-
լի. ոչ ըղձուր հեղեղատի. քակտիչ բոլորի.
որով փլեալ կործանի տունն հոգեւոյս ցաւա-
լի. տանն իմոյ լեր խարիսխ։

Ոչ սիրեցի զաղբատութիւնն որ է տիպ
փրկչի. ոչ զողջախոհ կեանքն որ է իսկ նման
հրեշտակի. զհնազանդութիւնն և ոչ ստացայ
որ է կեանք կենի. տանն իմոյ լեր խա-
րիսխ։

Զի երբեքս այս են արգելիչք ջուրցն այնց
թիւնալի. ոչ ունելով ես զայսոսիկ տունն
իմ քայքայի. երանեմ իսկ ունողաց զայնս
ի մէջ կրթանի. տանն իմոյ լեր։

Զաղբատութիւնն ագահութիւն. ըստուերիչ
տեսի. զողջախոհ կեանքըն հեշտութիւն զի-
ջուցիչ գտի. հնազանդութիւնն հպարտու-
թիւն կործանիչ ասի. տանն իմոյ լեր խա-
րիսխ։

Զի որ ունի զայս երեքկին ուխտս դո-
ղեալն. և իսկապէս սիրով պահէ վասն յի-
սուսի. ճշմարտապէս կարէ մինալ անմեղ
յաշխարհի. տանն իմոյ լեր։

Զի ի մարդն են հոգի մարմին և ինչք
ապ-

ապրուստի. քաղ ի լերինցս զոչինչ ունիմք, յորոց մեղք ծընցի. եթէ սոքա մեռանիցին՝ մեղքն ինքն դադարի. տանն իմոյ։

Աղքատութիւն իսկ ըստուերէ զինչքս աշխարհի, ողջախոհ կեանքն ըստանանէ. զմարմինն իսկակի, հնազանդութիւնն է՝ մահ կամաց հոգւոյն հողածնի. տանն իմոյ լեր խարիսխ։

Միջնորդութիւն քով կոյս օրհնեալ և ինձ արեացի. այս երեքիցն կեանս յիսուսեան զոր նախագրեցի. զի միշտ խոցեն ըզչար ակունս ջուրցն թիւնալի. տանն իմոյ լեր խարիսխ։

Ամենասէր երրորդութիւնդ միասնականի. հօր և որդւոյ և սուրբ ոգւոյն մաղթեամ իսկուհի, շնորհել ինձ լոյս առ՝ի տանալ ըզկեանս յիսուսի. տանն իմոյ լեր։

Չաղքատութիւն զինազանդութիւն զկեանս ողջախոհի. որով լիցի հոգիս մարմինս զոհ ցնի յիսուսի. որպէս և իսկ ինքն եղև զոհ հօրն երկնաւորի. տանն իմոյ լեր խարիսխ։

Շարական. գ. Մարգարէից հանդիսապան, և գրաւական կենաց մարդկան Աբրիամ ամամայր. ընդունարան եօթնարփեան շնորհաց. խարիսխ յուսոյ հաստատութիւնդ զուգաթիւ աւուրց դարուցս անցաւորաց, օրհնութիւնք երկով եկեղեցիք ամենեքեանց այսօր տօնեն զյիշատակ ծնունդեան քոյ ի մօրէ։

Երգ խրատական վասն խորշելոյ 'ի մեղաց, և գործելոյ զբարիս, և զգուշանալոյ 'ի խաբէութեց աշխարհիս։

Զիտ դիր եղբայր բանից իմոց
լե՛ր մրտածող վերջնոց քոյոց
յուսայնութեց աշխարհայնոց
մի՛ խաբիր այ եղբայր. միտ
դի՛ր սէ՛ գրոց. միտ դի՛ր սէ՛ գրոց. զի
նովաւ է՛ կեանք հոգւոց։

Խոնարհութի՛ ըզքեզ կըրթեա՛. յուսայն
փառաց միշտ հրաժարեա՛. քանզի մահն է
քեզ մերձակայ. մի՛ խաբիր այ եղբայր. միտ
դիր սէ՛ գրոց. միտ դիր սէ՛ գրոց. զի փա-
ռամոլք չեն կելոց։

Իրաւասէր լեր և արդար. խարդախու-
թեց մի՛ մերձենար. զի մարդկութե՛ քոյ
չէ՛ յարմար. մի՛ խաբիր այ եղբայր. միտ
դիր սէ՛ գրոց. միտ դիր սէ՛ գրոց. տուտն
է՛ կորուստ կենաց քոց։

Թող ըզպարտիս քոյդ ընկերի. սիրեա
զեղբայրդ սիրով սրտի. զի աստուծոյ
սէրն ատա յայտնի. մի՛ խաբիր այ եղբայր.
միտ դիր սէ՛ գրոց. միտ դիր սէ՛ գրոց.
եղբայրատեացք չեն կելոց։

Աստուծեալք երեք բարիք գործք. մաք-
րեն զխորհուրդ ըզբան և զգործ. յայտնեն
քեզ զանխտա աշխարհայնոց. մի՛ խաբիր այ
եղբայր, միտ դիր սէ՛ գրոց. միտ դիր սէ՛
գրոց. աշխարհս այս է՛ տուն ցաւոց։

Բա-

Բամեա՛ ի մի վայր ըղկեան քո • դեր ի կենս ըղենաւ դործ քո , տե՛ս դու մոռք դանցեալ կեան քո , մի՛ խաբիր այ եղբայր• միտ դեր սէ՛ գրոց , միտ դեր ՝ՆԷ գրոց • տուր նորոգումն կենաց քոց ։

Վայելչութիւք աստի կենաց • են անցաւ՝ որք առանց կարծեաց • բայց միշտ պատրեն որպէս զանանց • մի՛ խաբիր այ եղբայր • միտ դեր սէ՛ գրոց • միտ դեր սէ՛ գրոց• մի՛ անսար կարծեաց քոյոց ։

Աշխարհս այս զոր ինչ խոստանայ • մի՛ հաւատար բանիդ նորա • զի սուտ է՝ միշտ և խաբեբայ , մի՛ խաբիր այ եղբայր • միտ դեր սէ՛ գրոց • միտ դեր սէ՛ գրոց , հեռեաս հեռոց սրբոց ։

Բամեա՛ ըղքեզ և ըղմիտ քո , անսա՛ բանից և խորհրդոյ • ՝Ի՝ քեզ մերժեա՛ զբարս անանոյ , մի՛ խաբիր այ՝ եղբայր • միտ դեր սէ՛ գրոց • միտ դեր սէ՛ գրոց • մի՛ դործեր թարց խորհրդոյ ։

Դարձ առ Յ՝ՈՒ և տես որքան չարչարեցաւ վասն մարդկան , զայն արարեալ քեզ տեսարան , մի՛ թքմիր այ եղբայր • միտ դեր սէ՛ գրոց • միտ դեր սէ՛ գրոց • այն է՝ վախճան կենաց քոց ։

Արածեա՛ ի մեջ շուշանաց • փրկչին քոյոյ չարչարանաց • զի զմայլիցես հոտոմն անանց• մի՛ խաբիր այ եղբայր , միտ դեր սէ՛ գրոց• միտ դեր սէ՛ գրոց • վերք փրկչիդ տացեն քեզ խոց ։

Պատկք փրչոց զարդարեցին զգլուխ ՝Ոն՝ ըն քոյ բատ երդոցին , ուրեմն և դու տենչա նրմին , մի՛ հեղգար այ եղբայր • միտ դեր սէ՛ գրոց • միտ դեր սէ՛ գրոց • մոյծ ըղքեզ ՝ներ այնց փրչոց ։

Երբեք ոչ եղև յաշխարհի , զոհառքն զարդ խոտել ծառայի . ապա զիարդ ի քեզ լցի . մի՛ խաբիր այ եղբայր . միտ դիր սբ գրոց . միտ դիր սբ գրոց . զայն արա զարդ մրտաց քոց ։

Տառապանք և վիշտք կենցաղոյս , քաղցրացուցանեն զկոխորդքս քոյս . որով կալցես զերկնային յոյս . մի՛ հեղգար այ եղբայր . միտ դիր սբ գրոց . միտ դիր սբ գրոց . գիտ ըզկեան քո ներ ցաւոց ։

Շարական . դ.

Որ դերադոյն փառօք բարձրացուցեր զմանկունս եկեղեցւոյ քոյ Քա՛, խոնարհուԹեՀ քոյ ճանապարհաւ , առաջնորդելով ի յերկնային վարս հրեշտակաց , աղաչեմք , առաջնորդեա մեզ Տէր ի յարդարութի ։



Երդ ի վերայ Ճշմարուց մեղաց ։



ԶԱ հաւատամ յաստուծած որդին , որ մարմնացաւ ի սպասաւորս իմայլ և մեռաւ նա ի խաչին . ի բառնալ զչար մեղին . զի մի՝ մնացէ այն . զի մի՝ մնացէ այն . առաջի աչաց նորին ։

ԵԹէ առ այս Տէրն իմ՝ մեռեալ . զի մեղքն իցէ ի բաց բարձեալ . ապա զիարդ ես ժըլրերհեալ , միշտ ըզմեղս իրակեմ . առաջի նորա . առաջի նորա . ի ձեռն որոյ նա խաչեալ ։

Ուրեմն այսու եմ ներհակեալ, հաւա-
տոյս իմ զոր դաւանեալ. և կամ ըզՏէրն
իմ յոյժ ատեալ, զի ոչ դուն այլք միջոցք,
որ ձեռնարկիցեմ. յորս ձեռնարկիցեմ. առ
այս պատասխան ինչ տալ։

Զի որ սիրէ զոք խնայելոյ, և հաւատայ
ընդ այսպէս, թէ զայն ինչ գործ ատեսցէ
այնպէս, որ առ այս նա մեռաւ, զի մի՛
զայն տեսցէ, զի մի՛ զայն տեսցէ, ոչ եր-
բեք զայն իրակէ։

Այլ աշխատի և միշտ ջանայ, միտոք կա-
նոք յոյժ զգաստանայ. զի գործն որ զայն-
քան մեծ վնաս տայ, այնպիսեոյ սիրելոյն,
բարձցի 'ի միջոյ. բարձցի 'ի միջոյ, մինչ
սիրելոյն չէ՛ հաճոյ։

Ողբասցեն զիս երկինք և երկիր. մինչ
յայտ առնէ ինձ զայս սէ՛ գիր, թէ մեղքն
իցէ այնպիսի իր, որ զհաւատ, կամ ըզսէր
բառնայ 'ի սրտէ, բառնայ 'ի սրտէ, և
տիրասպան ևս առնէ։

Ապ՛ անհաւատ գոլ ոչ կամիս, ատոյ
փրկչիդ գոլ ոչ հաճիս, տպա զհաւատ ո՛չ
սմաչիս 'ի բանիցդ, 'ի գործոցդ, և 'ի խոր-
հրդոցդ, և 'ի խորհրդոցդ, որք տեսանին
քոյ սան ըզ խոց։

Եթէ միանգամ խոցեցեր, մեղաք ընդա-
վնասացուցեր, բաւէ՛ զի այնու ընտրեցեր
գոլ յուդա և մատնիչ. զի նա միանգամ,
զի նա մի անգամ, մատնեաց ըզՏէր, և է-
սպան։

Բայց դու միով ոչ բաւեցեր. այլ զայն
բազմիցս կրկնեցեր. զոչ իմն ըստոյգ նշան
ցուցեր քոյդ զղջման. ամբողջի, որ ատէն
յայտնի, որ ատէն յայտնի. զի զնոյն մեղքն
ոչ կրկնիցես։

Նաև սիրով յոժարիցիս , զի յամենից նա-
խատիցիս , զամենացեղ միւոս ունիցիս ։
քանզի դու քոյդ մեղաք , միշտ վշտացուցեր։
միշտ վշտացուցեր , զտէր քո և նախա-
տեցեր ։

Արդ մինչ սոքին յայտնիք նշանք , ոչ են
'ի քեզ՝ գոն մեծ վշտանգ ։ թէ բընանք
մեղք քոյք և յանցանք , դեռ ևս են ներքս
'ի քեզ ։ և են քրէականք ։ և են քրէականք։
ուստի սուտք են քոյք զղջանք ։

Վասն որոյ թէ կամիս ըղկեան ։ կըրթեա
ըղքեզ միշտ յարաժամ ։ մի՝ տար ակաց քոյ
քուն անդամ , զի լիցես Ճշմարիտ՝ սիրող
յիսուսի , սիրող յիսուսի ։ և ունող հաւա-
տոյ առ այն ։

Դարձ 'ի մեղաց քոց իսկապէս , նեղեա
ըղքեզ կըրիւք պէս պէս ։ արա ըղկամ քո
միշտ այնպէս՝ ըստ որում կամի Տէր , զի
լիցես այսպէս , զի լիցես այսպէս ։ ոչ երբէք
գոլ այլապէս ։

Սակ միշտ առ ըստեղծող քո ։ արասցեն
տէր ըստեղծուածք քո , զորինչ կամին ան-
ձին իմոյ , մինչ զոչ ինչ կարիցեն , առնել
ինձ նոքին , առնել ինձ նոքին , եթէ ոչ
կամք քոյք լիցին ։

Շարական ։ դկ։

Ամենակալ , քաւեա ըղմեղս իմ ։ զի ա-
տեանն ես ապաշխարողաց ։

Երդ պաղատանաց առ Քրիստոս, զի նորոգիցէ զմեզ, և 'ի սէր իւր քաւիչցէ։

Աղաղակեմ առ քեզ յիսուս, տղորմեա Տէր իմ տղորմեա. դու ես փրկիչ դու ես կեանք իմ. դու ես յոյս, դու ես յոյս իմ։

Մինչնորոգութիւնդ սէր արեան քոյ նորոգեա, Տէր իմ նորոգեա. Քրիստոս փրկիչ Քրիստոս կեանք իմ. դու ես յոյս դու ես յոյս իմ։

Կենդանարարեա զիս շնորհիւ քով բարերարի, Տէր իմ բարերար. ես եմ աղքատ ես եմ կարօտ. դու ես յոյս դու։

Աստուածդ զիս շնորհիւ քով միածին Քրիստոս միածին, քաւչեա 'ի քեզ քաւչեա սիրով. դու ես յոյս դու ես։

Օգնեա Քրիստոս և փրկիչ իմ ասորեաց Տէր իմ ոչնչի. ես եմ տրկար ես եմ տրնանկ, դու ես յոյս դու ես յոյս իմ։

Բաց Տէր ըղձիսն իմ ճանաչել ըղձեր քո, Քրիստոս ըղձեր քո, և կասկածեա զսիրտս իմ ընդ քեզ դու ես յոյս, դու ես յոյս իմ։

Օտարացո յինէն ըղձեր կենցաղոյս, ուրնայն կենցաղոյս. և մի՛ թողուր զիս յայն յարիւ դու ես յոյս դու ես յոյս իմ։

Տուր ճանաչել ըղձաւոր հակումսն մարմնոյս սահման մարմնոյս. զի առանց քեզ կոյր եմ առ այս, դու ես յոյս։

Բարձ 'ի մտաց իմոց զդատումսն թանձրեաց ծեաց ունայնի կարծեաց. և մի՛ ելց եմ ես մո-

զիս դատել զքեզ , դու ես յոյս ։

Բաղումք գերանք ախտից իմոց են ծանրացեալք յինէն են ծանրեալք , բեր զայնս ի տես հոգւոյս իմոյ . դու ես ։

Գերանացեալք են շիւղքն այլոց ի միտս իմ ի թիւրեալ միտն իմ . խայթեն խոցեն զիս զերծո Տէր , դու ես յոյս ։

Տուր ինձ զաղթիւր յորդ արտասուաց ըզմեղաց իմոց ըզմեղաց . և զայն արա ինձ խրախճարան , դու ես յոյս ։

Մի՛ տիրեսցէ ինձ սէր պատուոյ, և փառաց մարդկայնոց փառաց . զի քո է՝ փառք քո է՝ պատիւն . դու ես ։

Մինչ քան չափու միոյ շիւղոյ չեմ արժան պատուոյ չեմ արժան . մի՛ լիցի ինձ այն ի մարդկանց . դու ես յոյս ։

Տուր ինձ ունիլ ըզքեզ միայն, և ոչ զայլ բնաւին և ոչ զայլ . ըզքեզ սիրել ի քոյ միայն կեալ . դու ես յոյս ։

Մինչորուրեամբ մօրքոյ կուսին լիցի ինձ նպաստս լիցի ինձ . զի զայսսիկ ինձ շնորհեցես , դու ես յոյս , դու ես յոյս իմ։

Շարական . դ.

Ողորմեաց ինձ Քրիստոս ողորմութեամբդ քոյ մեծաւ . զի կարօտ եմ ես շնորհի քոյ և ողորմութեամբդ , ողորմեա և լուր ինձ բաղմամեայս ։

Երգ աղերսանաց առ Յիսուս փրկիչն, զի դարձուցէ զմեզ ի մեղաց առինքն։

Քեզ դիմեմ Յիսուս փրկիչ ողորմած, զորոմն չար ի յանձնէս իմ հան ի բաց, հան ի բաց. ի թշնամեաց իմոցէ այն սերմանած, դարձո զիս ի մեղաց իմոց Տէր գթած Տէր գթած։

Սաքրեա զհոգիս իմ Տէր Յիսուս ողորմած, զի աղտեղի գործովք եմ յոյժ մոլորած մոլորած, այլ և անկեալ ի մէջ անթիւ չար մեղաց. դարձո զիս ի մեղաց իմոց Տէր գթ։

Խղճայութեցայ հոգւովք ի մէջ մրցանաց, լեր մարտակից վասն իմ ընդդէմ չար դիւաց չար դիւաց, և բժշկեա զանձն իմ արեամբ բոսորած. դարձո զիս ի մեղաց իմոց Տէր գթած։

Իսկ ես անձամբ իմովք եմ յոյժ մոլորած. և թափառեալ եղէ ի մէջ չար լերանց չար լերանց. եկ ի խնդիր մոլորելոյս և խնամած. դարձո զիս ի մեղաց իմոց Տէր գթ։

Թաւալեցայ կամաւ իմով ներս մեղաց. աղքատացայ հոգւովք ես յոյժ ի բարեաց ի բարեաց, Տէր բարեգութ ի վերայ իմ խնամած. դարձո զիս ի մեղաց իմոց Տէր գթած Տէր գթած։

Արդ՝ աղաչեմ ըղձեղ Յիսուս ողորմած. տուր թողութիւն մեղաց իմոց Տէր գթած Տէր գթած. ի մէջ անհուն չարեաց եմ ես մո-

մոլորած • դարձո զիս 'ի մեղաց իմոց Տէր
դթած Տէր :

Բաբուն բաբի Տէր իմ Յ՚ողորմած • 'ի
մէջ մեղաց ծովու եմ ես ընկղմված ընկղ.
մած • նաւն իմ հողով չարին է ալեկոծած,
դարձո զիս 'ի մեղաց իմոց Տէր դթած, Տէր
դթած :

Էղկելի անձնիմ դու դարձիր 'ի չարեաց,
սրտի մուրք միշտ աղերսեա առ ն՚ն, առ ն՚ն,
զի նա մեղաց քոց թողութիւն տայ և դարձ.
դարձո զիս 'ի մեղաց իմոց , Տէր դթած ,
Տէր դթած :

Շարական • գ.

Ողորմեաց ինձ Ք՚ն ողորմութիւդ քոյ
մեծաւ • զի կարօտ եմ ես շնորհի քոյ և
ողորմութեդ , ողորմեա և լուր ինձ բազ.
մամեղիս :



Երգ որով լինի ամբաստանաւոր
զանձնէ :

Ա՚ծմամբն չարին եղև հոգի
ապտեղի • հեղգութիւն և ծուլու.
թիւն ինտ դարշեցուցի , որկրա.
մոլութիւն զմարմին իմ պարա.
բեցի • եղէ ես իբր անասուն 'ի վերայ եր.
կրի • եղէ ես իբր անասուն 'ի վերայ երկրի
խառաբեցայ ես հոգեւով 'ի մէջ աշխարհի
և անկայ 'ի դուռ մեղաց անհաղորդելի • ՝ն.
զա.

լախեցայ չար մեղօք ի մէջ դարշ տղմի. եղէ
ես իբր անասուն ի վերայ երկրի։
Իսկ և բնաւ զօր մահուան իմ ոչ յիշեցի.
ամեցայ միշտ ի չարիս ւանփոյթ մնացի. և
արագամ զհեշտութիւն մարմնոյս խնդրեցի,
եղէ ես իբր անասուն ի վերայ երկրի։
Թողի ըղձորդ բարութիւնն և սէր երկիւղի.
միրաւորեցայ մեղօք և ոչ դիտացի, և ըղ-
ձամ մահուան իմոյ ի միտ ոչ ածի. եղէ
ես իբր անասուն ի վերայ երկրի։
Անձամբ իմով զհոգիս իմ չարին դաւեցի. անբան որդանց և անշէջ հրոյն մատ-
նեցի. փշմամբ չարին ես վասն իմ հուր
բորբոքեցի. եղէ ես իբր անասուն։
Բամեալ մեղօք զքոյս հոգիս իմ խաւարե-
ցի. և զայսցուտ ակն մոռացայ իմ կուրացու-
ցի. նսեմացեալ հոգիս և միշտ մոլորի.
եղէ ես իբր անասուն։
Սատակի մեղօք անձամբ զանձն իմ մա-
հացուցի. եղէ ես եղբայրասպան նման
կայենի. ոչ զարտաքին եղբայրն իմ՝ այլ
զնեղբին ասի. եղէ ես իբր անասուն ի
վերայ։
Արդ՝ եղէ ես նմանեալ տղմասէր խոզի.
որ միշտ սիրով նա ի մէջ տղմոյ թաւալի.
նոյնպէս և ես զքոյս հոգին իմ աղտեղեցի.
եղէ ես իբր անասուն ի վերայ։
Բախճեցաւ անձն իմ մեղօք դարշ և զաղ-
բալի. տխրեցաւ հոգիս չարեօք և յոյժ
տաղնապի. լցեալ զանազան վիրօք անբժշ-
կելի. եղէ ես իբր անասուն։
Կապտեցայ ես ի բարեաց և մերկ մնացի.
նշաւակ եղէ նեռիցն սատանայի. միշտ և
հանապազ անձն իմ եղև վիրօք լի. եղէ ես
իբր անասուն ի վերայ։
Արդարասոս քանին Տ՚ն ես ոչ անացի,
զի ասէ վայ այնորիկ որ յագեալ լինի. յա-
գեալէ

գեալէ անձն իմ մեղօք և այլ ապահի . եղէ
ես իբր անասուն :

Իւսեալ պեսպէս չարութիւն զհոգիս իմ
լցի . որս եղէ ես չար կարթիւ վարեցայ
գերի . ի պարանոցիս եդան կապանք երկաթի . եղէ ես իբր անասուն ի վերայ
երկրի :

Աչեկոծեցաւ նաւն իմ հողմոցն չարի , և
ընկղմեցայ ի ծով զանազան ախտի . զաղբ
գործքն իմ ի ջուցին զիս ի խորս երկրի .
եղէ ես իբր անասուն :

Գոչեա՛ դու և հառաջեա՛ առ մայրն Յե՛
ղի նովաւ անբուժելի ցաւ քո բժշկի . նա
մաղթեսցէ վասն քոյ առ Տէրն ամենի . և
Տէր տացէ վերայ քոց քաղցր սպեղանի :

Շարական . գկ.

Ընդ անառակին որդւոյ գոչեմք առ
հայրըդ գրթած . մեղաք յերկինս և առաջի քոյ քաւիչ յանցանաց . եղ ընդ առաջս
տով գրկեա՛ համբուրիւ , մաքրեա՛ ըզմեղ
ի մեղաց մերոց :



ՅՈՒՐԱՔԱՆՉԻՒՐ

ՅՈՒՐԱՔԱՆՉԻՒՐ

ՅՈՒՐԱՔԱՆՉԻՒՐ

հեալ հոգիսքն զարթուցեալ , և փրկողին մեր նմանեալ. սքրդ պօղոս անօթ ընտրեալ։

Տնինքն ձեր զոհարձացաք , զընտրողն ձեր փառաւորեցաք , պետրոս և պօղոս ա[illegible] ռաքեալք , վասն մեր հայցեցեք ընտրեալք։

Շարական . դՀ.

Բարեխօսութիւն պետրոսի և պօղոսի քոյ սքբ առաքելոց՝ մարդասէր փրկիչ տոնո[illegible] զացս ողորմեա ։

Երգ դրոհատական առ սքն ստեփանն նախավկայն ։

Մենից քարոզ ոՀվ սքբ մա[illegible] տիրոս . վկայ առաջին [illegible] յաղթող սքբ ստեփաննոս ։ Զարարածոց յոյս կենդան[illegible] ՅՀս , տեսեր ընդաջմէ հ[illegible] իւրոյ , սքբ ստեփաննոս ։ ՈՀվ ներվառեալ լոյս , ծաղիկ նորաբոյ[illegible] ընտրեալ սքբ ոգւոյն զարդարեալ . սքբ ստ[illegible] փաննոս ։ Մաղթեա առ ՔՀս , զի նաեւ մեր յոյս [illegible] տեսեր դու պսակ 'ի վերուստ՝ սքբ ստե[illegible] փաննոս ։

Համանման վերնոց՝ պարուց անմարմնոց դասակից եղեր ընդ նոսա սքբ ստեփաննոս։ Փայլեալ որպէս լոյս, նման հրեղէն գ[illegible] սուց . դու ես ցանկալի հրեշտակաց սուրբ ստեփաննոս ։

Վկայ

Վկայ մեծայոյս . բողբոջ դեռաբոյս , նա-
խասարկաւագ ի յեօթեանց սբ ստեփան-
նոս ։

Դաւանեցար դու զպաշտեալն յանմարմ-
նոց , վասն անուան նորա քարկոծեալ սբ
ստեփաննոս ։

Վասըն ոսնողացս հայցեա առ Քն՝ ան-
բիծ պաշտօնեայ Յն՝ի սբ ստեփաննոս ։

Շարական . դկ.

Նախասարկաւագ և առաջին մարտիրոս՝
որ ի Քն՝ե պսակեցար , և յերկնաձեմ ա-
ռաքասային պայծառացեալ բերկրեցար .
աղաչեա զՅն՝ծ ընդհատել մեզ զկեանս ան-
վախճան ։



Երգ որով եղեալէ դիմու�առ Քն՝
ի նահատակութիւն ։

Իրաւորեցայ մեղօք վարեցայ դե-
ռի . ծուլութիւն իմով անկայ մի-
մեղայ աղմի . և չարիքն իմ ի-
զուցին զիս ի խորս երկրի . ա-
զատեա զիս Տէր իմ Տէր , մի՛ թողուր դե-
ռի . ազատեա զիս Տ՝ի իմ Յն՝ մի՛ թողուր
դերի ։

Աւելոծեցաւ նաւն իմ հողմովքն չարին .
ի մէջ ալեաց մրրկեալ կայ յերերմանի .
պատեաց խաւար գիշերոյն լոյս ոչ տեսա-
նի . ազատեա զիս Տ՝ի իմ Տէր , մի՛ թողուր
դերի . ազատեա զիս Տ՝ի իմ յի։

Փայլակեն փայլատակեր հնչմամբ սոսկալի. իբրև ըղձոյս երևեր բայց եր հրրովելի. մեծագին ձայնիւ գոչէր յոյժ զարհուրելի. աղաւոեա զիս Տէր իմ Տէր մի՛ թողուր դեռ
ի. աղաւոեա։

Հնչէր հողմն սաստկագին վարէր զամպն երկնի. մառախուղ ամպոյն ծածկեալ էր զերեսս երկրի, և ես փոքրիկ նաւ նատեալ կամ 'ի մէջ ծովի, աղաւոեա զիս Տէր իմ Տէր մի՛ թողուր դերի։

Իբրև լսեայ թէ վէմ գոյ ներքնանապարհին, հնչեցաւ սիրտ իմ յուժգին յերկիւղէ վիմին. քանզի առաջատոք նաւին հողմով պարպատին. աղաւոեա զիս Տէր իմ Տէր մի՛ թողուր դերի։

Նաւավարքն աղաղակեն ձայնիւ ողբալի, գուցէ լուիցեն մարդիք նաւահանգստին զոր և լուեալ զայս լուցին անդ վաղվաղակի, աղաւոեա զիս Տէր իմ Տէր մի՛ թողուր դերի։

Շարական. ակ.

Ցովք կենցաղոյս հանապազ զիս ալէկոծէ
Սրբեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ
Նաւասպետ բարի լեր անձն իմոյ ապահէն։

Երգ գովասանաց առ սբ հայրն Անտոնիոս ։

Զքեզ սբ հայր անտոնիէ, բաղձամ գովել 'ի սերտ սրտէ, զի դու փայլես թէև յերկրէ, ոչ զարփին որ 'ի յերկնէ ։ Օգնեա մեզ սբ անտոնիէ, օրհնեա զմեզ սբ անտոնիէ, պահեա զմեզ, սբ անտոնիէ 'ի թշնամեաց պատերազմէ ։

Եղեր գլուխ Ճշդնաւորաց, և հայր սրբոց արանց բաղմաց, դու հեղինակ յոգուն կարգաց, դեռ եդեմեան ակ վըտակաց ։ օգնեա մեզ սբ անտունիէ, օրհնեա զմեզ սբ անտոնիէ, պահեա զմեզ սբ անտոնիէ, 'ի թշնամեաց պա։

Նա 'ի յառաջըն չորս զատի, և ընդ բաղմաւ երկրաւ պատի. իսկ համբաւ քո ընդ ոլորտս երկրի, ծաւալեցաւ և հլուչակի ։ օգնեա մեզ սբ անտոնիէ, օրհնեա զմեզ սբ անտոնիէ. պահեա ։

Որքան զնոնարհ կեանս ունեցար, այնքան փառաւք պայծառացար, որպէս նարդոս փոքրըրկացար, զհոտ սրբութեն առըստացար ։ օգնեա մեզ սբ անտոնիէ, օրհնեա զմեզ սբ անտոնիէ ։

Դու զնենեցար ընդդէմ դիւաց, որպէս դանիթ դէմ սյլազգեաց. բայց մարտըն քո գերազանցեաց, զի 'ի հանդէս քո Տէրն եկաց ։ օգնեա մեզ սբ անտոնիէ. օրհնեա զմեզ սբ ան։

Տէրն ասեմ զինքն յիսուս ՅԾ , որ ըզմայ-
լեր միշտ հանապազ . երբ տեսաներ ըզքեզ
խոնջած , ներ մարտին որ ընդդէմ դիմաց ։
օգնեա զմեզ սէր անտոնիէ , օրհնեա ։
Ուստի մերթ զինքն թագուցաներ , քեզ
ի թիկունս ոչ հասանէր . զի այնու մարտն
երկարիցեր , ինքն ի հանդէս քո յամիցեր ։
օգնեա մեզ սէր անտոնիէ . օր ։
Եւ զի առ քեզ եղև անդ ձայն , ի բե-
բանոյ տեառէն այս բան , թէ անոնմանի
լիցիս այնքան , զի ծանիցեն զքեզ ազգ
համայն ։ օգնեա մեզ սէր անտոնիէ . օրհ-
նեա զմեզ ։
Թէպէտ դըրովք վարժեալ չեղեր . սա-
կայն զհոսանս ուշոյն արբեր , արքայութիւն
դըսլիր եղեր , և քան զդիտունըս դեր ի
վեր ։ օգնեա մեզ սէր անտոնիէ .
օրհնեա ։
Ձերկինն աստեղք զարդարեցին . վերկիր
ծաղկունք զգեստեցուցին . բայց հեռևօղք
վարուց քոյին , ղերբինս յոգունս պերճա-
ցուցին ։ օգնեա մեզ սէր անտոնիէ , օրհ-
նեա զմեզ ։
Ձանձային բանքն կենաց . դու ուսուցեր
անձանց բարմաց , որպէս զաղբիւր յորդ
վըտակաց , հեղեր ի սիրտս լսողաց ։ օգ-
նեա մեզ սէր անտոնիէ . օրհնեա զմեզ ։
Ուստի և մեք հեռևօղք քեզ . խնդրեմք
լինիլ ուսուցիչ մեզ , և առնել քեզ աշա-
կերտ զմեզ , և բանից քոց հըլու և հեղ ։
օգնեա մեզ սէր անտոնիէ , օրհնեա զմեզ սէր
անտոնիէ . պահեա զմեզ ։
Շարական . բՃ.
Բաժակ հոգևորական լցեալ ՅԾ-ային ու-
րախութիւն , ո՞վ սէր հայր անտոն , զաղա-
չանս մեր հանապազ մատո սէր երրորդութեան։
ԵՐԳ

❧ ❧ ❧ ❧

երդ գովասանաց, և պաղատանաց առ ամենասէր Աստծին։

Աղաչեմ զքեզ Աստծին, որ ես ոտանաւոր անեղ բանին։ Բարձր և պայծառ ոգի զարմին։ Մաղթեա՛ վասն իմ առ քո որդին։ Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Աստծին բարեխօսեա։

Գոչեմ առ քեզ արտասուադին։ կոյս մարիամ տուր զհայցուածս իմ։ Դու ես աթոռ Աստծային, խնդրեա վասն իմ կոյս տիրածին, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Աստծին բարե։

Երանելի և հրաշալի, դու հրեշտակաց զարմանալի։ Զաստ ծընաւ մարմնով յերկրի, իսկ կուսութի՛ քո ոչ խախտի։ Տէր ողորմեա։ Տէր ող։

Երանուհի կոյս տիրուհի, դու օթարան ես միածնի։ Ընտրեալ յաղգէս հողեղենի, թագ և պարծանք քրիստոնէի, Տէր ողորմեա։

Թագաւորին մեր քրիստոսի, դու տաղաւար ընդունելի։ Ամուժկալեալ քումյորովայնի, Աւետեալ զբնութիս հողեղենի։ Տէր ողորմեա, Տէր։

Ի հրեշտակաց անհաս էր նա։ ծընաւ ի՛ քէն վասն ադամայ։ Լուսածին մայր ի՛ քեզ անկայ, Բաբունեայդ քոյ վասն իմ հայցեա, Տէր ողորմեա, Տէր։

Խնդրեմք ի՛ քէն կոյս տալիթա, միշտ

անդադար բարեխօսեա։ Ծընար զանձ որպ
ոլորայ, զՅ՚ փրկիչ Տէր և արքայ, Տէր
ողորմեա, Տէր ող։
Կոյսդ մաքուր և հրաշալի, դու գեղե-
ղեցիկ գեղգովելի։ Հոտով նրման ես դու
վարդի, շուշան հովտաց ծաղիկ դաշտի,
Տէր ողորմեա։
Զայնիդ մաղթեմ արտասանելի, յոգնա-
հանձար մեծ թագուհի։ Ղամպար ես դու
լուսով լիլ, հայցեա վասն իմ ո՞վ սրբուհի,
Տէր ողորմեա։
Ճշմարիտ գեղմն իմանալի, զոր է՛ տե-
սեալ գեղէօնի։ Մաքուր մարմնով անխախ-
տելի, սէ՚ կուսութեդ օրինակի, Տէր ո-
ղորմեա։
Յորժամ գայցէ քո միածինն, առ՚ի գա-
տել զաղգ երկրածին։ Ցասիլ յաթոռ գա-
տաստանի, ՚ի յայն ժամու մաղթեա զմիմ,
Տէր ողորմեա։
Շնորհօք լցեալ սէ՚ իսկուհի, մարմնով
քրօբէ հիւանալի։ Որ հրեշտակաց ես գո-
վելի, և հրեղինաց զարմանալի, Տէր ողոր-
մեա. Տէր։
Զեմ գովելոյ զքեզ արժանի, զի դու
սրբոց ես գովելի։ Դարտասան եմ ես բիւր
չարի, և զանազան ախտիւք եմ լի. Տէր
ողորմեա. Տէր։
Ընդել ըղդիրն իմոյ պարտին. հայցեա
յորդւոյդ ո՞վ տիրածին։ Ոտտին քաղցու
ածածին, լուսին պայծառ բոլորովին. Տէր
ողորմեա։
Սափոր ոսկի զարմանալի, լցեալ ՚ի քեզ
մանանայ լի։ Վեհ քան զերկին գլուարյեր-
կրի, զի էր ստեղծօղն ՚ի քում գրկի, Տէր
ողորմեա, Տէր։
Տիրամայր կոյս ածածին, միշտ անդա-
դար

դար մաղթեա վասն իմ ։ Բախացո զիս հայցմամբ քոյին , զի հայցուածք քո միշտ կատարին , Տէր ողորմեա , Տէր ։

Ցանկացայ ես յոլով չարի , նոքաք զանձն իմ վիրաք լցի ։ Իւծուեալ եմ արդ վասն իմ չարի . անկեալ ի մէջ մեղաց տղի , Տէր ողորմեա , Տէր ։

Փութա փրկել զանկեալ անձն իմ , անապական կոյս տիրածին ։ Քանզի ըղքեզ ինձ յոյս ունիմ . առ որդիդ քո մաղթել վասն իմ , Տէր ողորմեա , Տէր ողորմեա , Տէր ողորմեա . Աստուածնին բարեխօսութիւն յիշեա Տէր և ողորմեա ։

Երդ առնոյն երանուհի կոյսն՝ յօրինեալ բանիւք դրոշաւորականաք , և պէս պէս խնդրուածուք ։

Ն ՀԱՒԻՆ խորան ։ Բանին քնարան ։ Գովեալ մարիամ սրբուհի։ Դու վարդ անթառամ։ Ես իսկ չեմ արժան ։ Զքեզ առնուլ բերան ։ Ի քեզ երանի տիրածին ։ Ընտիր մարիամ։

Թագուհի վերին ։ Զառանդ երկնային ։ Ի քեզ պաղատիմ տալիցայ ։ Լոյս տուր իմ ակին ։

Խարիսխս հաստատուն ։ Ծառ անմահ պտղոյն ։ Կոյս ճշմարտին մարիամ։ Հան զիս ի դըբոյն։

Զրի բարեխօս ։ Ղամպար պայծառ լոյս .

Ճշմարիտ սէ կոյս դու վասն իմ։ Մաղ-
թեա առ Յս։
Յոյսդ ամենեցուն։ Նարդոս և քրքում։
Շնորհօք սէ ոգւոյն զարդարեալ։ Ողկոյս
գերազոյն։
Զքոռիս դու յոյս։ Պատուական սուրբ
կոյս։ Զահ լուսով ես լի մարիամ։ Ուահ և
պայծառ լոյս։
Սէ կոյս տալիթայ։ Վասն իմ աղերսեա։
Տրուպիս օգնեա գթութէ։ Բաբունեայդ
մաղթեա։
Յաւեցաւ ակն իմ։ Իւեամամբ մեղայ իմ։
Փարատեա զցաւն իմ մարիամ։ Քաղցր
ածածին։

Շալական • գկ•

Մաքուր աղաւնի և հարսն երկնից մա-
րիամ, տաճար և աթոռ այ բանին • քեզ
երանեն ամ աղինք։



Երդ և աղերս առ ամենասրբուհի կոյսն,
զի ազատիցէ զմեզ 'ի մեղաց', և
'ի պէստիէս վնասուց նորին։



Ուրեմ առ քեզ սրբուհի կոյս • զի
գու ես միշտ անարկբայ յոյս •
լեր բարեխօս վասն եղեալոյս,
և մի թողուր զիս խորասոյզ։
Բեկեալզ նաւն իմոյ հոգւոյս,
զի ծովածուփն այս կենցաղոյս, հաս յօգնու-
թի

Թի ընկղմելոյս , և մի՛ թողուր զիս խորա-
սոյզ ։

Նսեմացաւ հոգիս իմ լոյս , ի յաշխարհի
խաւարելոյս , դու ես նպաստ կուրացե-
լոյս , արդ հան զանձն իմ առ քեզ ի
լոյս ։

Որոգայթիւք սպաշարեցայ , կամաւ ի չար
ծուղակս անկայ . դիմեմ առ քեզ սէր տա-
լիթայ , զիս ի կարթիցդ չարին կորդեա ։

Ի գուբ մեղաց տղմին անկայ , և զաղ-
բութէ աղտեղացայ , ո՛վ սրբուհի վասն
իմ հայցեա , և մաղթանօք քովք զիս
ուղղեա ։

Յանկոխ վայրիս թափառեցայ , և զբրա-
հետ ներվարեցայ . ո՛վ սրբուհի վասն
իմ հայցեա , և մաղթանօք քովք զիս
ուղղեա ։

Շարական . գ՚.

Առ քեզ ապաւինիմք ամենասրբբուհի՝
գերագոյն և հրաշալի և բաշխող բարու-
թեց , աղբիւր ես ծարաւեաց , և հան-
գիստ աշխատելոց , և եղեր վերընկալ
ճծային բանին ։

Երդ առ ամենասրբուհի կոյսն, յորինեալ ըստ կերպի պէսպիսեաց աղերսանաց և հայցուածոց։

Քանելի մայր անարատ Մարիամ լոյս, զանձն իմ խառնար պայծառացո ո՛վ սքանչելի կոյս, ամենաօրհնեալ կոյս։

Տարակուսեալ և տարտամեալ հոգւոյս իմ յոյս. աղաւոտեա զիս միջնորդութեամբ քով սքանչելի կոյս. ամենաօրհնեալ կոյս։

Ո՛վ բուրաստան մշտատաղարդ երկնային զարդ. տանն այ տընկեալեա դու գերապայծառ վարդ, անուշահոտ վարդ։

Յոգնաղեղուն գթութեամբ քո յուսացեալ արդ, խնդրեմ ի՛ քէն զի բուրեսցես զհոտ սիրոյդ յիս վարդ, անուշահոտ վարդ։

Մեղօք մեռեալ հոգւոյս իմոյ դու լեր միշտ կեանք. և մի՛ թողուր զիս ի՛ կամս իմ անարատ կոյս ցանգ, յոյս և լոյս իմ ցանգ։

Երկիւղալից կեղակարծիւք միտս եղև ժանկ, մաղձանօք քովք պայծառացո և մաքրիչ լեր ցանգ, յոյս և լոյս իմ ցանգ։

Լուսաւորեա հոգւոյն իմոյ զմրթացեալն ակ. զի բաց ի՛ քէն զոչոք ունիմ դեղ կոյս սիրունակ, ո՛վ լուսատու ակ։

Համառօտեմ ըղհայցուածն իմ արդ՝ ի՛ մի միակ. տուր միշտ գլնալ ինձ ըստ կամաց որդւոյդ սիրունակ. ո՛վ լուսատու ակ։

Շա-

Շարական. դկ.

Գոյ ծաղիկ անթառամ տոհմի սեռիս մարդ-
կութեան և շառաւիղ օրհնութեան նախնոյ ծնո-
ղի մեր բնութեան, բարեխօսեա միածնիդ
ամենածին մայր բանին։



Երդ ըստ կերպի աղերսանաց առ ամէն-
օրհնեցեալ կոյսն, զի ազատիցէ զմեզ
ի յեօթեանց մեղաց դլխա-
ւորաց։

Ամէնօրհնեալ կոյս անարատ մայր
և ծընող յիսուսի, դիմեմ առ
քեզ սրբարէ լմով, զի միսն իմ
քեւ բուժեսցի. ոհ քանզի խո-
ցեաց զիս այս ըն չար, և նեռ իւր ոչ պա-
կասի, միջնորդութիւն քով տուր ինձ դեղ,
կոյս մարիամ սրբբուհի. ոհ բժշկեա զիս
և ազատեա Յա փրկիչ աշխարհի։

Հպարտութեն ախտըն սիրեաց, և արար
զիս իւր գերի. եկ ի վերայ պարանոցիս
ըզ չար անուն երկաթի. ոհ բայց արդ
խնդրեմ ըզ քաղցր լուծն և զբեռն որ է փո-
քրոգի. միջնորդութիւն քով տուր ինձ դեղ,
կոյս մարիամ սրբբուհի, ոհ բժշկեա։

Զար նախանձու հողմն եդիտ զիս ի
ծովու աշխարհի, և սասանեցեալ ալեկոծեալ
զանձն իմ և ոչ հանդարտի. ոհ խնդրեմ
այժմ ինձ նաւահանդիստ սիրել զբարին

ընկերի, միջնորդութիւն քով տուր ինձ դեղ
կոյս մա։

Ահա բարկութիւն իբր ըղձալան պատա-
ուեաց դիս ի վայրի. քանզի եդիր դիս ար-
տաքոյ բնութեանն քանակաւոր, ոհ նեղեա-
ցաւ վէրս ի չար տասլոց ի տրտմութեամբ
եղէ ի. միջնորդութիւն քով տուր ինձ դեղ
կոյս մա։

Գաղջ թրմիացաւոն ծուլութեան ընկէց
զանձն իմ ի լերկրի, և մշտատանջ վշտա-
ցոյց դիս, բնաւ ես ոչ դիտացի. ոհ արդ
անկեալ կամ իբր ըղկարկամ ներ անհոգու-
թիւն մահձի, միջնորդութիւն քով տուր ինձ։

Անյաղ չար ախտն ագահութիւն եկուլ
զանձն իմ ի լերկրի. ըղդուշութիւն ըղ չար
ժանիսն իւր կատիոյց յանկարծակի. ոհ դու
խորտակեա ըղ չար ժանիս առիւծուն և
փրրկեա դիս. միջնորդութիւն քով տուր։

Ահա որկորոյն թափարդեաց դիս ծուղս-
կաւն հարկաւորի, և ղաղալիր տրդմով
մածոյց որպէս ըղխոզ վայրենի. ոհ լուծիչ
կապոց լոյծ և լուա զանձն իմ մրջնակաւ
սրբբալ. միջնորդութիւն քով տուր ինձ։

Յանդգնութիւն կայծրն բրդնեաց հուր
ցանկութիւն ի մարմնի. թրմութիւն իմ թոյլ
եւ նրմա՝ ոչ ելիցոյ ջրոյն երկիւղի. ոհ
ելիր փրրկիչ միշտ աղերսաւ կողին քոյ սրբ
կենդանի. միջնորդութիւն քով տուր ինձ
դեղ։

Եօթնապարկեալ յերիքովի բանտարդե-
ցեալ մընացի. ի քեզ դիմեմ եօթնարփեն
ընորհաք լցեալ տիրուհի, վանէն եօթեանց
վիրաց քոց սրբ մի՝ թողուր դիս անդ դերի.
միջնորդութիւն քով տուր ինձ դեղ կոյս մա-
ր իամ սրբբուհի. ոհ բժշկեա դիս և ա-
զատեա զՔ՝ փրկիչ յաշխարհի։

Շ։

Շարական. դկ.

Աղբիւր կենաց բղխեալ յեդեմայ սուրբ ածածին, որով արբեցաւ երկիր ծարաւուս՝ ողջոյն խմաստութիւք, տալ մեզ մաղթեա աղբիւրս արտասուաց, մաքրել զմեզ ի մեղաց մերոց:

Երգ գովասանական առ ամենասրբուհի կոյսն Մարիամ:



Բանուհի Մարիամ կոյս դրբոհատել. դեղեցկացան ծնօտք վարուցդ հանդոյն տատրակի. որ կուսական պարկեշտութիւն պարանոց քո է՝ մանեակ ոսկի:

Նմանութիւն ոսկւոյ է սերդ հիանալի, և հանդերձ կիսոհածով խոնարհ գովելի. զարդարեցեալ հնազանդութեամբ, որով ես որ ողջոյն բաղձալի:

Մինչ էր ալքայ որ որդին սենեակ հօր ծոցի, նարդոս քո բուրեաց առ նա հոտ ըղմայլելի, որ և անքիծ խոկմունք մքուաց աղօթից քոց էր այն որ երգի:

Ծրար տաշեալ եղև քեզ եղբօր որդին քո, ի քէն ծնեալ միածինն ընդ խաչին իւրոյ, ի մէջ քաստեանց քոյոց հանգչի, զի սիրտ քո է տուն փրկչին խմոյ:

Ողկոյզ ծաղկեալ ի յայդեսատանին են գագդայ. սիրեցեալ եղբօրորդին քո անդ մար-

մարմնոյ. ենդաղդայ էր մաս ցեղին քոյ-
ուսոյ 'ի քէն մարմին առնու նա։

Շարական. դ.

Դասք անմարմնոց հրեշտակաց, քեզ ե-
բանեն ամենօրհնեալ կոյս Մարիամ, որ
զէակից բանն որ ընդ հօր կրեցեր 'ի քեզ
անսերմնապէս. առնա միշտ բարեխօսեա
վասն քահանութեան մեղաց մերոց։



Երգ դովասանաց առ ամենասրբուհի
կոյսն Մարիամ։



Աստմանալի վերնոց աբ կոյս աննը-
ման, գերապանծ տիրուհի մայր
անապական, մաքրագան լուսա-
տու միշտ ազգի մարդկան. կու-
սացելոյս հոգւով լոյս տուր մարիամ մա-
րիամ մարիամ։
Շուշան հոտոտաց աբ կոյս՝ ծաղկեալ քու-
բաստան, տանն այ տընկեալ միշտ վարդ
անթառամ, նարդոս քրքում հալոնէ հոտ
անմահութեան. բուրեա զանուշութիւն քո յի-
մարիամ մարիամ մարիամ։
Համբուրեաց զքեզ փեսայն քո իսկ սի-
բական, որ էր աբ միածին հօր այ բան.
կենաց գինւոյ հանգոյն ըստինքդ աննման,
միջնորդութիւն քով զիս արբո մարիամ մա-
րիամ մարիամ։
Անուն փեսային քոյ է իւղ զուարթա-
գան. որով եղեր արթուն 'ի սէր յանի-
տեան։

սեան, օրհնութիւն ևս ընդ քեզ 'ի սէր վա-
ռեալ կան. 'ի թմբուքեաց զարթիր և զիս
մարիամ մարիամ մարիամ։

Հետևեցարք հոտոյն որ էր նա հօր բան,
մոտեր դու 'ի սենեակ աբ երրորդութիւն, և
միշտ բերկրիս գինեաւ սիրոյ ըղմայլման.
ուղղեա և զիս 'ի սէր ընդ քեզ մարիամ
մարիամ մարիամ։

Սեաւ ես միայն զի ես 'ի զարմէ մարգ-
կան, դեղեցիկ առաւել քան զդստրս վեր-
նական, պահեցեր միշտ զայդիդ ծաղկաբ
սրբութիւն, ձգեա և զիս հոգւով անդ միշտ,
մարիամ մարիամ մարիամ։

Շարական. գկ.

Մաքուր աղաւնի և հարսն երկնից մա-
րիամ, տաճար և աթոռ այ բանին, քեզ
երանեն ամ աղինք։

Երդ գովասանաց առ ամենասրբուհի կոյսն
Մարիամ, յորինեցեալ 'ի ձեռն նմա-
նութեաց զանազանից իրաց
պատուականաց։

Ուռն երկնից խորան լուսեղէն
(կրկնեա) 'ի մարմնի սրբոյ հո-
ղեղէն, սրբուհի սրբուհի, բնա-
կեցար 'ի քեզ բանն, և ծնար 'ի
քէն և ծնար 'ի քէն, կոյս դու
լեր մեզ միշտ ապաւէն։
Դու ես ծառ տընկեալ յանեղէն։ (կրկնեա)
եաւ.

եռուր մեզ սրտուդ լուսեղէն . Ծառ
կենաց՝ Ծառ կենաց՝ բուսաւ կեանքն 'ի քէն,
զնեալն 'ի հօրէն զնեալն 'ի հօրէն , դու
բարձեր բաղխանք հողեղէն :

Քաղէվ սյեռու որդի նահեան, (կրկնեա)
բերին զողկոյզ յոյժ քաղցրահամ, Ծակաւ ,
Ծակաւ՝ բերերին նոքա զայն , յերկրէն առե-
ռեաց՝ յերկրէն առեռեաց , ցոյց տալ
զքաղցրութիւն տեսողաց :

Սբ կոյսդ ընդ կուսին յսսեփայ , (կրկ-
նեա) բարձիք ողկոյզ զՅ՞ տրքայ , Ծակ-
կաւ , Ծակաւ , մաքուր խաչն նորա , 'ի սբ
Ծոցոյ հօր , 'ի սբ Ծոցոյ հօր , զորդին յոյժ
քաղցր ամենաղոյ :

Ոսկիասպատ սբ տասպանակ , (կրկնեա)
ոգւոյն սրբոյ դու ընդունակ . կոյս անխախտ
կոյս անխախտ՝ մեծադին աղնիւ ակ , մա-
քուր դահանակ՝ մաքուր դահանակ , կու-
բացելոյս հոգւով լեր ակ :

Դու ոսկեղէն սափոր ընտրեալ, (կրկնեա)
մանանայիւ կենաց լցեալ , հացն յերկնից՝
հացն յերկնից , ինքեալ 'ի քէն ծքնեալ , և
մեզ կեանք տուեալ , և մեզ կեանք տուեալ
դու փրկութեան մեր ուսիք լեալ :

Շարական . դ.

Սրբուհի Մարիամ , սափոր ոսկի և տա-
պանակ կտակարանաց , որ զ 'ի վերուստ
դնացլն կենաց պարգևեցեր քաղցեալ բնու-
թեան , առնա միշտ բարեխօսեա մեզ քաւու-
թեան մեղաց մերոց :

Երգ առնոյն Աբրիամ առ որ եղև դիմումն ի նահատակութեան Թեան ծովու։

Ընտրեալ ի մէջ հոգեղինաց, մայր միածնի հօրըն փառաց, մոլորեցաք ի մէջ աշխարհաց, միայն յոյս մեր սրբուհի կոյս ի քեզ մընաց։

Ի դառնութենէ մեղայ մերոց. մոլորեցաւ նաւն ի հետոց, ոչ գիտէ թէ ուր է գնալոց, միայն յոյս մեր սրբուհի կոյս ի քեզ մընաց։

Ընախկին կղզին յորժամ տեսին. տարակուսեալ անդ մնացին, զի ոչ գիտեն զանուն նորին, միայն յոյս մեր սրբուհի կոյս ի քեզ։

Ջի մինն ասէ թէ է անտոյան, և միւսն ասէ թէ է սկօլայն. այլ ոմն ասէ թէ ինօ է այն, միայն յոյս մեր սրբուհի կոյս ի քեզ մընաց։

Առինարքն և նահապետն այն՝, ընդ միմեանց չեն համաձայն, բնաւքն են պետք ծառայք ոչ կան, միայն յոյս մեր սր։

Նահանգիստ չեն կղզիքն այն, այլ են բեկօղք նաւուց միայն, բընաւքն ի յողք և ի լաց կան, միայն յոյս մեր սրբու։

Նաւավարաց յոյսն ըն հատաւ, երեկոյի մութն հատաւ, լերինք բազումք են ոչ գոյ բաւ, միայն յոյս մեր սրբուհի կոյս։

Ջմակոյին ի ծովն ինջուցին, և բղատարն և ընդ նրմին, առ ի կորել զղալան նաւին,

Էին, միայն յոյս մեր սրբուհի կոյս ի քեզ մընաց։

Զի երբ հարցի նաւն ի վիմին, նոքաւ կարօղքն փախիցին. իսկ անկարօղքն ընկղմիցին, միայն յոյս մեր սրբու։

Հարեցան սիրտք մեր երբ տեսաքն և առ ի մահ պատրաստեցաք, զորդէդրաց զողն յիշեցաք միայն յոյս մեր սր։

Յեսթնեամ ժամու ի գիշերին, տեսաք զի զաղաղակ բարձին, վերջն չայս է զմի պետ չունողին, միայն յոյս մեր սրբուհի կոյս ի քեզ։

Այս էր պատճառ աղաղակին, զի յանծանօթ լեռան մի հասին, դեմ էր քամին զի յետ դարձցին, միայն յոյս մեր սրբուհի կոյս։

Տեսաք զի թուլացաւ քամին, չնորհօք սրբոյ մօր և կուսին, մինչև ի լոյս արշալուսին, միայն յոյս մեր սրբուհի կոյս։

Յորժամ տեսին և զայն կրզրին, տարա կուսեացան անդ կրկին, զի նաև զայն ոչ դիտացին, միայն յոյս մեր սրբուհի կոյս։

Զի մինն ասէ թէ՝ ցրիկայն, և միւսն ասէ թէ է ծիրայն, այլ ոմն ասէ կիրիակայն. միայն յոյս մեր սրբուհի կոյս ի քեզ մնաց։

Ընդ միմեանց մինչ վիճէին, յանկարծ հնչեաց հողմն ինչ յուժգին. բեկեաց զնաւն միայն առաջատուին, միայն յոյս մեր սրբուհի։

Ալիկոծումն տատակացաւ, ի մէջ ծովուն առեալ տարաւ, նաւապետն անզգայ դարձաւ, միայն յոյս մեր սրբուհի։

Ոմանք ըմբռնան հիւսիս ուղղեն, այլք ի հարաւ դարձուցանեն. ոմանք ի յարևմուտս

մուտս ասեն, միայն յոյս մեր սրբուհի կոյս
'ի քեզ։

Զաշխարհացոյցս զերկոսին, միտ հայե-
լով քայքայեցին, նոքաք և ոչ շաւիղ դը-
սին, միայն յոյս մեր սրբուհի կոյս 'ի քեզ
մընաց։

Եօթնևտասան աւուրք անցին, ապա
հասաք զանեծս կղզին, և անդ ելեալ զեր-
ծաք 'ի նմին, ընդարձիւ սրբոյ անբիծ կու-
սին, զերծաք 'ի նմին։

Յամի փրկչին Տն Յն, հազար եօթն
հարիւրերորդի, նաև երկու յայն աւելի,
ընդարձիւ սրբոյ անբիծ կուսին զերծաք 'ի
նմին։

Շարական. բկ.

Որ 'ի ծով այս աշխարհի՝ չինեաց տա-
պան զեկեղեցի. և 'ի սմա զօժանդակեալ
Հոգիս փրկեաց 'ի ջուրց մեղաց, և բարձր
աղաղակք ընկա յաւիտեան։

Երգ առնոյն որ կոյսն Մարիամ, ըստ կեր-
պի աղերսանաց, զի լուսաւորիցէ
զմեզ 'ի խաւարէ մեղաց
և մոլորեցեց։

Որորեցաւ միտն իմ մեղաք, և կայ
'ի մէջ խաւարի. ոչ գիտէ զինքն
թէ ուստի եկն, և կամ՝ ուր կայ
յաշխարհի. ո՞հ նաև անդէտ է՝
զինքեանէ, ուր ընթանալ գոլ պարտի։ Լու-
սաւ-

սաւորեա՛ զիս մարիամ, մայր գթութեանց
շնորհօք լի։

Ի յայսցանէ սուիթ առեալ, եղէ վասն
թարգմանելի, շաղախեցայ ի մէջ մեղաց,
և հեղգացեալ մնացի. ո՛հ զի կենդանի է
յիս հին մարդն, և ոչ երբեք իմանի։ Լու-
սաւորեա՛ զիս մարիամ մայր գթ։

Զաղտասկան կամն իմ եղէ, որպէս ծա-
ռայ և գերի, ի ներքոյ զանազան ախտից,
և ի մէջ չար երկիւղի. ո՛հ վասն որոյ ոչ
կարէ գործել զայն զոր և ինքն կամի։ Լու-
սաւորեա՛ զիս մարիամ, մայր։

Բաղմահոյլ մարմնոյ թեց անօթ անձն իմ տր-
դէն անասնի. միշտ ժողովէ զայն ներ
ինքեան, և ոչ երբեք պակասի, ո՛հ էանց
ըղձանն ոչ ասէ բաւ, և թափուր զինքն
պարծի։ Լուսաւորեա՛ զիս մարիամ, մայր։

Անձն իմ յիմար և պարտաւոր՝ ցուցից
ըղձեղ մեղաց լի, ոչ ես թափուր դու ի
մեղաց, ոչ մի կէտ և բոպպէ մի, ո՛հ զի
ոսկակոխ արարեր միշտ զարիւն փրկչին
Յիսուսի։ Լուսաւորեա՛ զիս մարիամ, մայր։

Ցախամածեալ ըղձեղ առնեաս, որ է գործ
սատանայի, ոչ կամիս բարի ընկերիգ, որ
է նշան կայենի. ո՛հ սերբեալ ունիս ախտ
ի սրտիդ, արժան ես ջերհեղեղի։ Լուսաւ-
ւորեա՛ զիս մարիամ, մայր գթութեանց
շնորհօք լի։

Հպարտութիւն քով զինեցեր դու զամբար-
տակին չարին, ի քաղանէ մնապարծութեն
լայնատարածի գաշտին. ո՛հ, վասն որոյ
բանք մոաց քոյին խառնակեցեալք չիս-
թին։ Լուսաւորեա՛ զիս մարիամ, սրբուհի
ուծածին։

Մի՛շտ ձուլեցեր զայնպս քեզ կուռք զրս
սիրեցեր յաշխարհի, վախճանաբար ան
սանձ

անձ ըղձիւ յար պաշտեցեր 'ի մէջն. նաև զքոյդ կարծիքդ եղեր՝ մերձ այնց հան-
քոյն դադնեն: Լուսաւորեա զիս մարիամ,
մայր գթութեց շնորհօք լի:

Ընբարեսէր և խիստ բարուք նման եւ
փարաւնի, զի բարի ծնուեալ գործոց՝
բանից, որք են քոյոյ ընկերի, հեղգամղձուկ
լինի 'ի քէն, մինչ առ բարին ոչ մեկնի:
Լուսաւորեա զիս մարիամ, մայր գթութեց
շնորհօք լի:

Զխիստ պարանոց յամառութեն, և զկա-
մակոյ կամս ունիս, հանդոյն որդւոցն իս-
բայելի յերդիալոս գառնայ կամիս, ոչ զե-
բամարիս փրկիլն քոյոյ 'ի միտ քո բերել
հաճիս: Լուսաւորեա զիս մարիամ, և մի՝
թողուր զիս 'ի յիս:

Հանդոյն կորմայ և գազանայ յայն որ
է քո առաքիս, զղաստիւ անձինդ ան-
ձամբ խնդրես, և առ կոչողն ոչ հայիս,
Թպիտ դժոխոն տա բացեալ, զբերանն
առ քեզ ոչ սարսիս: Լուսաւորեա զիս մա-
րիամ, և մի՝ թողուր զիս 'ի յիս:

Բամբասական բանից քոյոյ տաս մեկնու-
թիւնս բարիս, և զգոյժն այլոց 'ի կողմէն
յար մեկնելոյ ոչ դադարիս. բայց հանդոյն
քեռւն մսոիսի ծանու մեղօք բորոտիս:
Լուսաւորեա զիս մարիամ, և մի՝ թողուր
զիս 'ի յիս:

Զքոյոց իրաց մինչ առ բարին տարածել
ընկանիս, յայժամ բանիւք բաւական լեալ
արիասոտել երևիս, իսկ ըղբարեացն այլոց
խօսիլ նաև զայրեն անգիսիս: Լուսաւորեա
զիս մարիամ, և մի թողուր զիս 'ի յիս:

Զարակասութեց այլոց յորժամ ըզփոքրիկ
ինչ ևիւթս ունիս, յայժամ բղխին 'ի քեզ
խնամք, որովք պղատոն տեսանիս. բայց

ըղքոյոց պակասութեց շնչարեալ անգէտ դնիս ։ Լուսաւորեա զիս մարիամ , և մի թողուր զիս ի յիս ։

Ի բաց թողեալ ասել մի մի զչար օրինակս որք յայտնին , գրեալ ի գիրս զանձանց բազմաց , քանզի կարի երկարին . բայց զայս գիտեա զի շտեմարան՝ եղեր դու բնաւից նոցին ։ Լուսաւորեա զիս մարիամ , սրբուհի ածածին ։

Վասն որոյ դարձ դու առաղբիւր՝ գԼ թուութեն ածային , և հեղ զարտասր փղձկմամբ սրտի , և գոչեա մեղայ նմին . կալ քեզ պաշտպան զմայրն այ , զանբիծ միշտ կոյս սրբուհին ։ Լուսաւորեա զիս մարիամ սրբուհի ածածին ։

Շարական . դկ .

Ածածին մայր լուսոյ արեգական արդարութեն արևելք . որ ի խաչաբար աշխարհի ծագեցեր ըղձոյն մեծ և գերազանց . որով խաչարն անգիտութեն հալածեցաւ . սրբէական ձայնիւ զքեզ բարեբանեմք , և հոգևոր երգով մեծացուցանեմք ։

ԵՐԳ դորովագԹական և դրոՀատական, Ի
դեմաց սրբուՀեոյ կուսին մարիա-
մու՝ առ մանկացեալ
ՅԱԾորդին քեր։

1. Ողեա՛ որդեակ քաղցր և անուշ. հանդիր քնով, և առ քեզ ուժ, օր օր օր օր օր օր օր, ՅԱԾ որդեոյս իմ օր օր։
2. Դու որ յերկինս ահիՀ պատուՀիս, ձեռամբ իմով ստեղն պատիս, օր օր օր օր օր օր օր, ՅԱԾ որդեոյս իմ օր օր։
3. Երկինք չեին քեզ բաՀական, բայց ես եղէ քեզ կայարան, օր օր։
4. Զքեզ որ ձեռքն իմ արդ շոշափեն, դասք հրեշտակաց ահիւ պատուՀեն, օր օր։
5. Դու որ ձեռամբ զաշխարհս ունիս, կանուս զբաստինս իմ և դիս, օր օր։
6. Աշխարհս բոլոր Ի քում ձեռին, և դու բոլոր յիմում ձեռին, օր օր։
7. Երկինք աԹոռ են քեզ և կան, երկիրս ոտից քոց պատուՀանդան, օր օր։
8. Բայց արդ բաղուկն իմ աԹոռ քո, բարձք իմ պատուՀանդան ոտից քոց, օր օր։
9. ՅԱԾային շրԹանց որդւոյս, մեղք կաԹեն համբոյրքն հոգւոյս, օր օր։
10. Մինչ համբուրեմ զՅԱԾ որդիս. բաղ-

մոք

մօր ընտրեալ ընանի հոգիս , օր օր ։

11. Մինչ համբուրիմ յանդորդէոյս , բղխին
ի յիս պարգևք , և լոյս , օր օր ։

12. Զայն զոր ծնայ պաշտեմ հոգւով , և զոր
պաշտեմ ծնայ մարմնով , օր օր ։

13. Պաշտեմ զի սա է ած իմ , և համբու-
րեմ իբր որդեակ իմ , օր օր ։

14. Անուշ փոքրիկ ած անհուն , քաղցրիկ
որդեակ իմ կանթնասուն , օր օր ։

15. Դասք երկնայնոց յառաջ մատիք , եր-
գեալ զքնաբեր երգ անուշիկ . երգեցէք
օր օր օր օր , ածորդւոյս իմ օր օր ։

16. Ո՞վ սերօքեալ թևաւաքօղեալ , հանդէպ
որդւոյս ըզձեզ աքօղեալ , երգեցէք օր
օր օր օր , ածորդւոյս իմ օր օր ։

17. Քերօքեալց դասք սրբադոյն , երգեցէք
զերգ ձեր քաղցրագոյն , երգեցէք ,
օր օր ։

18. Դասք աթոռոց արդ հանդուցէք , զոր
ձեր մարմնով ննջեցուցէք , երգեցէք
օր օր ։

19. Ո՞վ տէրութիւնք տիրողին ձեր , բերէք
ըզքուն զոհարթաբեր , երգեցէք օր օր ։

20. Դասք պետութիւնց պետին ձերոյ , պա-
տրաստեցէք ընդ ինքն քնոյ , երգեցէք
օր օր ։

21. Իշխանութիւնց հոլք պարտ առէք , զուրկ
զորոցիւս և երգեցէք , երգեցէք օր օր ։

22. Դասք զորութիւնց դուք հրսկեցէք , նն-
ջելոյ Տն ըստասեցէք , երգեցէք օր օր ։

23. Հրեշտակապետք յառաջ մատիք , հա-
ճաքեցէք որդւոյս ծաղիկք , երգեցէք
օր օր ։

24. Հրեշտակաց դասք զծաղիկունս բերէք
ըստրջ զորոցիւս այս սրբուեցէք , եր-
գեցէք օր օր ։

25. Սէ՛ Յոհաննէս մանկիկ քաղցրիկ, շար-
ժեա զոլորոցդ այդ հանդարտիկ. երգեա
դու օր օր օր օր,ՇԱԾ որդւոյս իմ օր օր։
26. Մի՛ բարձրագոչ ձայնիւ երգեր, այլ
քաղցր երգեա և հանդարտ լեր, եր-
գեա դու օր։
27. Մինչ է՛ ննջեալ մի՛ համբուրեր, մի՛
'ի քունոյ զարթուցաներ, երգեա դու օր։
28. Նաև զոտ իւր մի՛ համբուրեր, այլ
օրեալդ յուշադիր լեր. երգեա դու օր։
29. Այժմ ոչ ժամ քեզ խայտալոյ, զորդ-
ւովդ իմով խանդաղելոյ. երգեա դու
օր օր օր օր։
30. Յորժամ զարթնու 'ի քունոյ իւր, յայն-
ժամ խայտա՛ ցնծա ընդ իւր, երգեա
դու օր օր օր օր։
31. Այժմիկ համբեր որքան ննջէ, զի մի՛
դուցէ նա զարթիցէ, երգեա դու օր։
32. Յորժամ զարթնու յայնժամ սիրեա,
զոտս և ըղձեաս իւր համբուրեա, եր-
գեա դու օր օր օր օր ՇԱԾ որդւոյս իմ
օր օր։
33. Այժմիկ լռեա՛ 'ի յօրեալոյ, զի է 'ի մէջ
խորին քնոյ, այլ մի՛ երգեր օր օր օր,
ՇԱԾ որդւոյս իմ օր օր։

Շարական. դՀ.

Բաղմերամք վերհագուն իցքն հոյլքն յոգ-
նախուռնքս եղանակեին. երգս առեալ՝ մա-
տուցանեն զերաժշտականաց զերանաւէտս
հուպեղէն հնչմունս. քեզ էմմանուէլ, որ
ծրնար տրղայաբար և վերածեր զաղգս
մարդկան հօր յորդեգրութի. աղաչանօք
հայցեմք 'ի քէն ըստնջեցեալսն մեր ընդ
սքէս քո հանգո։

Բանք մաղթողականք ոտա-
նաւոր չափով առ ամենայ-
սէր երրորդութիւն ։

Ա

1. Հայր ամենամէ ծ.
2. Առիս ձիր զերզէ ա.
3. Յոյսք իմ ի քեզ է ն.

4. Բոտին միտս ուս ո.
5. Դու ես լոյս լուսոտ յ.
6. Էզիէ Լոյս գթ ա.

7. Ծանո՛ զսէր քոյի ն.
8. Նոր կեանք տուր ինձ է.
9. Օրհնեալդ աննոհա ղ.

10. Ղօղերլոյս խնամ ա՛ ծ.
11. Նոր նորոգութեամ բ.
12. Ոգեոյս լոյս ընորհե ա.

13. Բամեա՛ յիս ըզկեա ն.
14. Դու ես լոյս սրտ ի.
15. Ինձ յայց եվ ընորհի ւ.

16. Նորոգեա՛ զիս ար գ.
17. Ծնունդ հօր ալքայ օ.
18. Նոր կեան ընորհաց տուր.

19. Ե՛կ հոգի անմա հ.
20. Արարիչ և կեա ն.
21. Լոյս իմ ի քէն է.

22. Հոգի սէ օրհնեա Լ.
23. Ողջոյս իմ տուր զար դ.
24. Գթութիւդ ուս ո.

25. Իմաստուն հովիւ ա.
26. Նայեա գթութեամ բ.
27. Սիրտ իմ ցնծասց է.

28. Ողորմեա ինձ տէր ր.
29. Իւծեալ կամ միա կ.
30. Բամեա սուիս զսէ լ.

31. Բաղձանս 'ի քեզ է.
32. Էդ օրհնեալ էի ց.
33. Յաւէտ զիս կեց ո.

34. Եղծեա զախտս հոգւոյ.
35. Բամից տէր անմա հ.
36. Կեանք իմ զիս յար ո.

37. Ովվ լոյս գերայար գ.
38. Իւծեալ կամ յերկր ի.
39. Յօղեա զյոյզ հոգւոյ ս.

40. Դու Տէր ընորհաբուղ խ.
41. Բաց զուռնին իմ 'ներքի ն.
42. Խանդաղիմ սիրոյ դ.

43. Երկիւղ սէ ինձ տու ր.
44. Այս եթ ինձ բաւ է.
45. Լոյս տուր զիս զդա Լ.

Այսք բանք, որք 'ի նախընթաց
ցեղ ոտանաւորի՝ այլովկար
գաւ դասեցեալք։

Բ

17. Ծնունդ հօր ալֆայ օ.
20. Արարիչ և կեաց ն.
16. Որոգէաց զիս արդ.

23. Ոգէոյս իմ տուր զարդ.
33. Յաւէտ զիս կեց ո.
44. Այս եթէ ինձ բաւէ է.

5. Որ կեանք տուր ինձ է.
34. Եղծեա զախտս հոգւոյ.
10. Ողորմեայս ինամ ա ծ.

7. Ծանո՛ զսէր քոյ ն.
41. Բաց զուռնկն իմ ներքի ն.
2. Առիս ձիր զերեզ ա.

18. Որ կեան շնորհաց տուր.
25. Իմաստուն հովիւ ե.
38. Իւծեալ կամ յերկրի.

5. Դու ես լոյս լուսոյ յ.
9. Օրհնեալդ անանուն ղ.
35. Բամիոյ սէր անմա հ.

1. Հայր ամենամե ծ.
11. Որ նորոգուեցեամ բ.
43. Երկիւղ սէ ինձ տուր.

21. Լոյս իմ ի քէն է.
40. Դու Տէր ընդհարեալ էս.
12. Ողորմեայ լոյս ընդհանր ա.

29. Իւծեալ կամ միա կ.
31. Բաղձանս ի քեզ է.
19. Եկ հոգի անմա հ.

30. Բամեա սուրբ զսէր ր.
36. Կեանք իմ զիս յայր ո.
13. Բամեա յիս ըղձեա ն.

6. Էղկեցէոյս գթ ա.
39. Ցողեա զցող հոգէոյ ս.
37. Ո՞վ լոյս գերա յայր գ.

3. Յոյսք իմ ի քեզ է ն.
22. Հոգի սէր օրհնեա Լ.
28. Ողորմեա ինձ տէր ր.

24. Գթութիւն ուս ո.
15. Ինձ յայց էլ ընդհանր է.
27. Սիրտ իմ ցնծասց է.

42. Խանդաղիմ սիրոյ գ.
26. Նայեա գթութեամ բ.
14. Դու ես լոյս սրտ ի.

4. Բոլոր միտս ուս ո.
32. Էգ օրհնեալ էի ց.
45. Լոյս տուր զիս զգա Լ՝

Նոյնք բանք, որք ի Ինախընթացս
ոտանաւորս, այլով կարգաւ
դասեցեալք։

Գ

19.	Եկ հոգի ան մա	հ.
6.	Իղկելոյս գԹ	ա.
5.	Դու ես լոյս լուսո	յ.
30.	Բամեա առիս զսէ	ր.
16.	Նորոգեա զիս ար	դ.
8.	Նոր կեանք տուր ինձ է	։
10.	Ղօղելոյս խնամ ա	ծ.
7.	Ծանո զսէր քոյի	ն.
17.	Ծանունդ հօր ալՔայ	օ.
9.	Օրհնեալդ աննոՀա	ղ.
41.	Բաց զուշկն իմ ներքի	ն.
4.	Բոտին միտս ուս	ա.
18.	Նոր կեան շնորհաց տուր	։
23.	ՈղՀոյս իմ տուր զարդ	։
38.	ԻւՃեալ կամ յերկր	է։
3.	Յոյսք իմ ի քեզ է	ն.
1.	Հայր ամենամ	ծ.
20.	Արարիչ և կեա	ն.
21.	Լոյս իմ ի քեն	է։
12.	ՈղՀոյս լոյս շնորհե	ա։
45.	Լոյս տուր զիս զդա	լ։

35. Բամից տէր անմա հ.
33. ՅաՀէտ զիս կեց ո.
37. ՈՀ լոյս դերայար պ.

14. Դու ես լոյս սրտ ի.
13. Բամեա՛ յիս ըղկեա ն.
39. Յօղեա՛ զյօղ հոգէոյ ս.

36. Կեանք իմ զիս յար ո՛.
25. Իմաստուն հոգի ա.
43. Երկիւղ սէ՛ ինձ տուա բ.

11. Նոր նորոգուԹեամ բ.
31. Բաղձանս ՝ի քեզ է.
34. Եղծեա՛ զախտս հոգւոյ.

44. Այս եԹ ինձ քաւ է.
28. Ողորմեա՛ ինձ տէ բ.
29. Իւծեալ կամ միա կ.

24. ԳԹուԹէ՛ զուս ո.
15. Ինձ յայց եւ շնորհի ա.
32. Էդ օրհնեալդ էի ց.

42. Խանդաղեմ սիրոյ դ.
26. Նայեա՛ գԹուԹեամ բ.
40. Դու Տէ՛ շնորհաբուղխ.

27. Սիրտ իմ ցնծասց է.
2. Առիս ձիր զերդ ա.
22. Հոգի սէ՛ օրհնեա լ.

Ծանուցումն որպիսութեան երից նախաս-ցելոց ոստանաւորաց։

Առաջնոյ ոստանաւորի, որ սկսանի, Հայր ամենամեծ, սկզբնաւոր աքն վերուստ ի վայր իջեալք կերտեն զայս տուն ոստանաւոր։

Հայրդ է ծնօղն, որդին ծնեալ, հոգին սուրբ է յերկուցդ բխեալ։

Իսկ վերջնաւոր աքն կերտեն զայս տուն ոստանաւոր։

Ծանոյ անեղծ բանիդ օրհնել. դու բեր. կրեցոյ հոգիս խնդրել։

Աղդ՝ գիտելի է, զի երկրորդ ոստանաւորն, որ սկսանի՝ Ծնունդ հօր ալքայ ո, քան ամի ծնեալ է, և երեալ յառաջնոյ ոստանաւորէ, ի ձեռն յետ և առաջադրութեան տողին՝ առանց այլայլութեան բառից, և վանկից. որպէս ի ձեռն Թոռոց յայտնապէս երևի յուշադրողաց. և սկզբնաւոր աքն իւրք վերուստ ի վայր իջեալք կերտեն զայն տուն ոստանաւոր, զոր կերտեցին վերջնաւոր աքն առաջնոյ ոստանաւորի. այսինքն, Ծանոյ անեղծ բանիդ, և այլն ոչ ի վեր։

Իսկ երրորդ ոստանաւորն, որ սկսանի. Եկ հոգի անմահ, բղխեցեալ է և յառաջացեալ ի յառաջնոյ, և յերկրորդէ ոստանաւորէ ի ձեռն յետ և առաջադրութեան տողին՝ առանց այլայլութեան բառից, և վանկից, որպէս ի ձեռն Թոռոց երևի նկատողաց. և վերջնաւոր աքն իւրք վերուստ ի վայր իջեալք կերտեն զայն տուն ոստանաւոր, զոր կերտեցին սկզբնաւոր աքն առաջնոյ ոստանաւորի. այսինքն. Հայրդ է՝ ծնօղ՝ որդին ծնեալ, և այլն որպէս ի վեր։

Աղդ՝

Արդ՝ եթէ զբ որոնիցէ , զ՞որով արդեօք
միջոցիւ եղեալիցէ այս կարելի՝ զիտուցէ ,
զի ասացեալ երկու տուն ոստանաւորքն այ-
նոքիկ՝ որք ի սկզբնատուռս և ի վերջնա-
տուռս ոստանաւորաց ընթեռնանին , կերտե-
ցեալք են ի նոյնքանեաց , և ի նոյնպիսեաց
տուռից : Քանզի մինչ կերտեցեալէ մի տունն
ի տուռից նոյնոյ տանն կերտեցեալէ և միւս
տունն՝ առանց յաւելման և նուազման տա-
ռէ ուրուք . և աստուստ հետևեալէ կարե-
լութիւն , որ յայտնապէս երևի ի յեղելումն։
Յասացելոց յանդիման կացուցանի , զի
գրեցելոց երից ոստանաւորաց , որոց իւրա-
քանչիւրն զարառնակէ զ խե , տողս . թէ
զանքն , թէ բառքն , թէ վանկքն , և թէ
տառքն՝ ըստ ամի են նոյնք , և ոչ զանազա-
նին . բայց այս միայն գոյ , զի առաջինն՝
թէ ի ձեռն սկզբնատուռի , և թէ ի ձեռն
վերջնատուռի՝ ընթեռնանի ոստանաւոր ։
Իսկ երկրորդն միայն ի ձեռն սկզբնատու-
ռի ընթեռնանի ոստանաւոր , ոչ օտար ,
այլ նոյնն , որ ընթեռնանի ի վերջնատուռս
առաջնոյն ։ Բայց երրորդն՝ միայն ի ձեռն
վերջնատուռի ընթեռնանի ոստանաւոր ,
նաև այս ոչ օտար , այլ նոյնն , որ ընթեռ-
նանի ի սկզբնատուռս առաջնոյն ։ Եւ այս
աշնատաբերեցեալ երև առ ի տալ , թէ և
հեռապէս՝ օրինակ ինչ՝ անձանց Ամենասր-
բոյ երրորդութեան , որք էութիւնք , գոյա-
ցութիւնք , և բնութիւնք , և ըստ ամենից կատա-
րելութեց են նոյն , և ոչ է մինն աւելի քան
զմիւսն . և կամ երկուսն աւելի քան զմինն ։
Բայց այն միայն գոյ , զի հայր ոչ է յու-
մեքէ , և է՝ ծնող որդւոյ , և բղխող ոգւոյն
սրբոյ . իսկ որդին է ի հօրէ , և ընդ հօր
բղխող ոգւոյն սրբոյ . և ոգին սքէ՝ յերկո-
ցունցն ։

գունեն։ Արդ՝ ասի յերկոցունեն. քանզի ոգին սբ մինչ 'ի հօրէ բղխի, ոչ բան որում հայր է ծնող, այլ բան որում է բղխող, և որդին բաց 'ի գոլոյն հայր, բան ամի նոյն է ընդ հօր, 'ի հարկէ հետևի, զի և յորդւոյ բղխիցի։ Քանզի զորդւոյ թէպէտ վասն բանի առնչականի հակադրութեան՝ հայր, կամ՝ ծնող ոչ կարիցէ ասիլ, բայց բաց 'ի սոյնպիսեաց ամ ինչ որ ասի զհօրէ՝ հարկաւորապէս ասի և զորդւոյ, որով որդին բան ամի լինի նոյն ընդ հօր բաց 'ի գոլոյն հայր։ Արդ՝ հայրն ասի բղխող ոգւոյն սրբոյ, և այս ոչէ ասել ծնող, կամ հայր, ապա թէ ոչ, ոգին սբ լինիւր ծնեցեալ, և որդի. ուրեմն 'ի հարկէ նաև որդին պարտի ասիլ բղխող ոգւոյն սրբոյ ընդ հօր, որով բան ամի որինչ իցէ հօր, բաց 'ի հայրութէ, իցէ նոյնն և որդւոյ։ Որպէս և ինքն որդին յայտնապէս՝ ելզակացոյց զայս բան յաշէտարանին։ (Յօհաննու 16.) Վասն զի մինչ ասացեալ էր զոգւոյն սրբոյ, յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ, հետևեցոյց այնմ, զամ ինչ զորուանի հայր, իմ է. վասն այնորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ անտի առնուցու, և պատմեսցէ ձեզ։ Եւ այս բաշխական է ունողացն զմիտս, առ անաչառ քննութիւնս բանից։

ՎԵՐՋ։

Յանդ գլխոց քրիստոնէականի վարդապետութեան աշխարհաբառ շարադրեցելոյ։

Վասն այն բաներուն, որ շատ հարկաւոր են քրիստոնէին գիտնալ՝ և հաւատալ։
Գլուխ ա։ Երես 7
Վասն մեկնութեան հաւատոյքին, որ ամենայն քրիստոնէից պէտք է լաւ գիտնալ, և ինչպէս որ կատարի հաւատամքն՝ այնպէս հաւատալ։ Գլուխ բ։ 14
Վասն աղօթից, թէ ինչպէս պարտի քրիստոնեայն աղօթք գիտնալ և աղօթել, և աղօթելով յուսալ Ի ՅԱՆ։
Գլուխ գ։ 28
Վասն տասն պատուիրանացն ։ թէ ինչպէս պէտք է քրիստոնէին որ գիտնայ, և պահէ, որ անով պնծ սիրելն յայտնի լինի։ Գլուխ դ։ 36
Վասն եօթն խորհրդոց եկեղեցւոյ, զոր քրիստոնեայն պարտի գիտնալ և ճանաչել որ ջերմեռանդութեամբ ընդունի։
Գլուխ ե։ 46
Վասն մեղաց, թէ ինչ է մեղքն, և քանի կերպ, և թէ ինչպէս քրիստոնեայն պիտի փախչի ի մեղաց։ Գլուխ զ։ 53
Վասն առաքինութեաց, թէ ինչ են առաքինութիւնքն, և քանի՛ կերպ ։ և ինչպէս քրիստոնեայն պարտի հետևիլ։
Գլուխ է։ 67

Յանդ երգոց՝, և տաղից որք համարով
եկիցն գտանին։

ա. Անձառ անհաս ստեղծող։ 77
բ. Զորից տարերց բաղադրեցեալ։ 79
գ. Մինս դիր եղբայր բանից խմոց։ 84
դ. Եւս հաւատամք յաստուածդին։ 86
ե. Աղաղակեմ առ քեզ Յս։ 89
զ. Ի քեզ դիմեմ Յս փրկիչ, ողորմած։ 91
է. Ամենամբն լարին եղև հոգիս աղոթ-
ող։ 93
ը. Ի հօրէն լուսոյ զօրացեալ ք։ 95
թ. Ամենից քարոզ ո՞վ սբ մարտիրոս։ 96
ժ. Վիրաւորեցայ մեղօք վարեցայ դերի։ 97
ժա. Ըղքեզ սբ հայր անուանիլ։ 99
ժբ. Աղաչեմ զքեզ ամենազու ես։ 101
ժգ. Անձաւին խորան բանին բնակա-
բան։ 103
ժդ. Գոչեմ առ քեզ սրբուհի կոյս։ 104
ժե. Երանելի մայր անարատ։ 106
ժզ. Ամենօրհնեալ կոյս անարատ։ 107
ժէ. Երանուհի Սարիամ կոյս դրոշա-
տելի։ 109
ժը. Զարմանալի վերնոց սբ կոյս ան-
նման։ 110
ժթ. Դուռն երկնից խորան լուսեղէն։ 111
ի. Ընտրեալ ի մէջ հողեղինաց։ 113
իա. Աղորեցաւ միան իմ մեղօք։ 115
իբ. Ինչեա որդեակ քաղցր և անոյշ։ 119
իգ. Բանք մաղթողականք առ ամենասբ
երրորդութիւն։ Հայր ամենամեծ։ 121

ՎԵՐՋ

1000